Էջմիածին



1963

ՌՆԺԲ

Ի ՏԱՐԻ

Յունիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Զ

1963

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Միջեկեղեցական ճառաբերություններ	3
Գաղտնական հազորդագրություն Վեհափառ Հայրապետի Շիրակի թեմին տված հովվապետական այցելության մասին	6
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՅԱՆ— Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հովվապետական այցելությունը շիրակի թեմին	7
Ամավերջի հանդիսություն Հոգևոր ճեմարանում	12
Վարդապետական լանջախաչի ավյություն	16
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	17
Ս. ՇԱՀԻՆՅԱՆ— Բարգավաճող Անիքականը	19
Նկարիչ Գևորգ Գրիգորյան	23
Հ. Ժ. ՍԻՐՈՒՆԻ— Գոլիս և իր դերը	25
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Հավուց բառի վանքը	38
Ա. ԵՐԵՄՅԱՆ— Էջեր ԺԵ դարի հայ մանրանկարչության և գրչության արվեստների պատմությունից	50
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	54
Հանգիստ արժանապատիվ Տ. Բագրատ եպիսկոպոս Դավթյանի	58
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	59

Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1983 թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Աթոռ լեռան վանքերի հաստատման 1000-ամյակի առիթով)

Եկեղեցիների միջև համագործակցությունը, փոխայցելություններն ու հանդիպումները հանդիսանում են քրիստոնեական եկեղեցու նորագույն շրջանի պատմության նշանակալից երևույթները, որպես կարևոր քայլ եկեղեցիների միության նոր փորձերի:

Ուրախությամբ պետք է արձանագրել այն իրողությունը, որ հատկապես մեր օրերին, պատմության գիրկն են անցել եկեղեցիների մեկուսացած, կղզիացած ապրելու ժամանակները:

Այժմ քրիստոնեական ողջ աշխարհը մեծ և արդար հետաքրքրություն է հանդես բերում եկեղեցիների միջև միության, համագործակցության, եղբայրական կապի ամրապնդման փորձերի շուրջ:

Ժամանակակից կյանքի արդի պայմանների մեջ միջեկեղեցական հարաբերություններն ու հանդիպումները, շփումներն ու խորհրդակցությունները, կարծիքների փոխանակումը անհրաժեշտ են այն իմաստով, որ դրանք նախ կփարատեն եկեղեցիների միջև գոյություն ունեցող նախապաշարումները, կփշրեն հավատացյալները իրարից բաժանող անբնական պատվարները, կցրեն փոխադարձ կասկածամտությունները և կստեղծեն եկեղեցիների միջև հասկացողության, հանդուրժողության, վստահության և հարգանքի մթնոլորտ:

Եկեղեցիների միջև որքան անկեղծ և շատ լինեն նման հարաբերություններն ու շփումները, այնքան կպակասեն թյուրիմացությունները և նպաստավոր ու շինարար հող կստեղծեն ապագայում ավետարանական ոգով եկեղեցական ճշմարիտ միության համար:

Եկեղեցիների միջև նմանօրինակ հանդիպումներն ու շփումները, հարաբերություններն ու այցելությունները համապատասխանում են նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միության և քրիստոնեական եղբայրության ըմբռնումին:

Մանավանդ այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ողջունում է այն բոլոր բարի ջանքերն ու միջեկեղեցական հանդիպումներն ու հարաբերությունները, որոնց նպատակն է իրար մոտ բերել անցյալում տխուր պարագաների բերումով մասնատված քրիստոնեական եկեղեցու անդամներին:

Հատկապես Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրով մեր Եկեղեցին, քրիստոնեական սիրո և հարգանքի ըմբռնումով, սիրալիր և բարեկամական հարաբերություններ է մշակում Օրթոդոքս եկեղեցու, ինչպես նաև Ռուս պրավոսլավ, Վրացական, Անգլիկան եկեղեցիների, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և միջազգային այլ եկեղեցական կազմակերպությունների հետ. «Միաբանութիւն Հոգւոյն, յոգիւ խաղաղութեան» (Եփես. Դ. 3):

Վեհափառ Հայրապետը հաճախ արտահայտվել է իր քարոզների և ելույթների մեջ եկեղեցական հանդիպումների, շփումների անհրաժեշտության և կարևորության մասին.

«Մենք կդավանինք քրիստոնյա եկեղեցիների միությունը՝ Ս. Ավետարանը ընդունելով իբրև հաստատուն վեմ, և Քրիստոնեական ընդհանուն Եկեղեցին՝ իբրև կենդանի մարմին, որուն գլուխը կգտնվի ինքը մեր Տերը և Փրկիչը Հի-

սուս: Բոլոր քրիստոնյա եկեղեցիները նույն մարմնոյն անդամներն են»:

Այս մտածումների լույսի տակ Վեհափառ Հայրապետը սիրով և գոհունակությամբ ընդունեց Աթենքի և Համայն Հունաստանի արքեպիսկոպոս Տ. Խրիսոստոմոսի պաշտոնական հրավերը, հանուն Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Աթենագորասի, մասնակցելու Աթոս լեռան վանքերի հաստատման և վանական կազմակերպության սկզբնավորության հպարամյակի հանդիսություններին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր հունիս 6 թվակիր հեռագրով պատասխանում էր հոբելյանական հանձնաժողովի նախագահ Հռոդոսի միտրոպոլիտ Սպիրիդոնին.

«Աթոս լեռան հպարամյակի հանդիսության մասնակցելու Ձեր հրավերը ընդունելով, Մեր կողմեն հանդիսության կմասնակցի Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալստյանը»:

Այս առթիվ հունիսի 4-ին Վեհափառ Հայրապետը հեռագրում էր Կ. Պոլիս Ամենապատիվ Տ. Շնորհք Սրբազան Պատրիարքին.

«Հունաստանի սրբազան արքեպիսկոպոսեն հրավեր ստացած ենք մասնակցելու Աթոս լեռան վանքերու հիմնադրման հպարամյակի հանդիսությանց հունիսի 23-են 25 օրերուն:

Այսու կխնդրենք հաճիք մասնակցիլ այդ հանդիսությանց, հանուն Հայ Եկեղեցիին Մեր կողմեն լիապորված»:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը 16 հունիս թվակիր իր հեռագրում գրում էր Վեհափառ Հայրապետին.

«Սիրով կընդառաջենք Ս. Օյությանդ փափագին, մասնակցելու Աթոս լեռան վանքերու հաստատման հպարամյակի հանդիսությանց: Այս առիթով պիտի այցելենք նաև Վեհիդ, ի փոխադարձ այցելություն Ստամբուլի հայության տված Ձեր սփոփարար և օրհնաբեր այցելության»:

Ամենայն Հայոց Հայրապետի որպես ներկայացուցիչ Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը ներկա է լինում հունիսի 23—25 օրերին Այնորոգի հպարամյակի հանդիսությանց:

Հունիսի 21-ին Սրբազան Պատրիարքը իր հետևորդներով ժամանում է Աթենքի Էլինիկոյի օդանավակայանը, ուր ընդունվում է Աթենքի արքեպիսկոպոսի ներկայացուցիչների, պետական պաշտոնական այլ անձանց, ինչպես նաև հունահայ թեմի առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Մեսրոպ ավագ քահ. Տ. Հակոբյանի, հունահայ թեմական խորհրդի և համայնքի կողմից: Հունահայ թեմը ջերմորեն և խանդավառությամբ է դիմավորում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ամենապատիվ ներկայացուցչին՝ Թուրքիո հայոց Սրբազան Պատրիարք Հոր:

Այնուհետև Սրբազան Պատրիարք Հայրը հունիսի 23-ից 25 օրերի հանդիսությանց ներկայացնում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն Աթոս լեռան վանքերի հաստատման հպարամյակի հանդիսությանց:

Աթոսը՝ հունական այդ սրբազան լեռը՝ քսան մեծ և ավելի քան հարյուր փոքր օրթոդոքս վանքերի համադրություն է, որը գտնվում է Խալքիդիքիի թերակղզու վրա:

Աթոս լեռան վանքերի և վանական կազմակերպության հիմնադիրն է Ս. Աթանաս Աթոսեցին:

Աթոս լեռան վանքերը համաքրիստոնեական մեծ արժեք են ներկայացնում որպես վանական հնագույն կազմակերպություն և կենտրոն օրթոդոքսության:

Թերակղզու գլխավոր վանքը կոչվում է մեծ Լավրա՝ Աթոս լեռան ստորոտում. իսկ վանքերի վարչական կենտրոնն է Կարիե:

Աթոս լեռան պատմական այս վանքերի մեջ պահպանվում են հունարեն արժեքավոր ձեռագրեր, ինչպես նաև բյուզանդական եկեղեցական արվեստի վերաբերյալ թանկարժեք հնություններ, սպասներ և այլն:

Այնորոգի հպարամյակի հանդիսությանց նախագահել է Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքը, որի վարչական իրավասության տակ են գտնվում այդ բոլոր վանքերը:

Հանդիսությանց ներկա են եղել օրթոդոքս տասը պատրիարքներ, շուրջ երկու հարյուր եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, ինչպես նաև Հունաստանի թագավորը և ավագանին և բազմաթիվ հյուրեր:

Համայն Ռուսաց Պատրիարքին և Ռուս Պրավոսլավ Եկեղեցուն ներկայացրել է Ալեքսի Պատրիարքի ներկայացուցիչ Նիկոտիմ արքեպիսկոպոսը:

Հյուրերի կարգին առաջին տեղը հատկացված է եղել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու ներկայացուցիչ՝ Թուրքիո Հայոց Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հոր:

Մեր պատվիրակությունը հանդիսությանց ժամանակ արժանացել է մասնավոր ուշադրության և հոգածության:

Եվ դա պատահականություն կամ լոկ քաղաքավարություն չէր: Որովհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Թուրքիո Հունաց Տիեզերական Պատրիարքության միջև, Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Աթենագորաս Հունաց Տիեզերական Պատրիարքի օրոք հաստատվել են քրիստոնեական, եղբայրական կապեր և հարաբերություններ երկու եկեղեցիների միջև:

Երբ 1961 թվի հունիսին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գտնվում էր Կ. Պոլսում, Ֆեների հունաց Պատրիարքանում ճանգիպ-

ման ժամանակ Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասը ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին ասաց.

«Ձերդ Սրբությունը կճանչնանք Ձեր ընտրության թվականեն սկսյալ, տեղյակ ենք Ձեր աշխատանքներուն և կգացումներուն, մասնավորապես քրիստոնյա եկեղեցիներու համագործակցության և միացման հարցին մեջ Ձեր ունեցած կարծիքներուն: Այս բոլորի համար Ձեզ ի սրտանց կշնորհավորեմ:

Մեր երկու եկեղեցիները նույն ճամբեն քալած են դարերու ընթացքին: Երբեմն եթե պատահած են մշուշոտ պահեր, անոնք պատմության խառնված են և այսօր որևէ իմաստ չեն կրեր:

Մեր եկեղեցվո Ս. Սինոդի և Մեր անձին կողմե կգնահատենք եկեղեցիներու միության համար Ձեր թափած ջանքերը:

Վստահ ենք թե Մենք, իբրև եկեղեցիներու Պետեր պետք է աշխատինք նոր դարաշրջան մը բանալու և եղբայրության կապեր հաստատելու համար»:

Աթենագորաս Պատրիարքի ողջույնի խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը հետևյալ հատկանշական խոսքերով.

«Ձերդ Սրբության այս խոսքերը պիտի պահենք Մեր սրտին մեջ իբրև թանկագին ընծա: Այսօրվան հանդիպումը ապագայի Մեր գործակցության հիմնաքարը պիտի ըլլա: Աստուծո անունը երախտագիտությամբ կհիշենք, որովհետև Մեզի պարգևեց այս հանդիպումը»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Թուրքիո Հունաց Տիեզերական Պատրիարքության միջև ոչ միայն սրտագին հարաբերություններ են սկսվել, որոնց կարգացման և ամրապնդման համար կարևոր դեր է կատարում նաև Թուրքիո Հայոց Պատրիարքությունը, այլ նաև Հունաց Տիեզերական Պատրիարքը շատ ճիշտ և բարձր է գնահատում արդարորեն և կանոնական տեսակետից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը և առաքելությունը Հայ Եկեղեցու նվիրապետության մեջ:

«Գոհ ենք,— հայտարարել է նա,— որ բոլոր հավատացյալներդ կապված եք Ս. Էջմիածնի և առանց Էջմիածնի հետ կապ ունենալու չենք երևակայեր Հայ Եկեղեցի, չենք ճանչնար մենք այդպիսի եկեղեցի: Մենք չենք հավատար, թե որևէ հայ Էջմիածնական չըլլա»:

Սթոս լեռան վանքերի հիմնադրման հապարամյակի հանդիսությանց Հայ Եկեղեցու մասնակցությունը մի գեղեցիկ նոր էջ կավելացնի Հայ և Հույն օրթոդոքս եկեղեցիների նորագույն շրջանի պատմության մեջ, եղբայրական սիրով և ավետարանական ոգով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ ՏՎԱԾ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը հովվապետական այցելություն տվեց Շիրակի թեմին:

Նորին Վեհափառությանն ուղեկցում էին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը և Մայր Աթոռի միաբաններ Տ. Մեսրոպ վարդապետը և գավազանակիր Տ. Արսեն աբեղան:

Լենինականի երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին թեմի քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և հավատացյալների խուռն բազմություն՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոսի գլխավորությամբ, ինչպես և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը և Լենինականի քաղաքային սովետի նախագահի տեղակալ Հ. Հովհաննիսյանը:

Նորին Սրբությունը կիրակի, հունիսի 30-ին, Լենինականի Ս. Աստվածածին Մայր Եկեղեցում մատուցեց սուրբ պատարագ և քարոզեց ի ներկայության խուռներամ հավատացյալ ժողովրդի:

Հուլիսի 1-ին Նորին Ս. Օծությունն Իր շքախմբով այցելեց Մարմաշենի պատմական վանքը և ապա Լենինականի գուլպայի գործարանը: Նույն օրը Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Լենինականի քաղաքային սովետին, ուր ընդունվեց քաղաքային սովետի ղեկավար ամբողջ կազմի կողմից՝ նախագահ Ս. Մատնիշյանի գլխավորությամբ: Տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց և հյուրասիրություն:

Նույն օրը Նորին Սրբությունը մեկնեց Կիրովական և երեկոյան տեղի Ս. Աստվածածին եկեղեցում նախագահեց ժամերգության: Հոծ բազմության ներկայության Վեհափառը խոսեց հավատացյալ ժողովրդին և տվեց Իր պատգամը:

Հուլիսի 2-ին, Նորին Ս. Օծությունը այցելեց Կիրովականի նորակառույց արհեստական մետաքսաթելի գործարանը և արհեստական զարդաքարերի գործարանը:

Վեհափառ Հայրապետն այցելություն տվեց Կիրովականի քաղաքային սովետին, ուր ընդունվեց քաղաքային սովետի ղեկավար կազմից՝ գլխավորությամբ քաղաքային սովետի նախագահ Շ. Վարդումյանի: Տեղի ունեցավ ջերմ, բարեկամական զրույց և հյուրասիրություն:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Դիլիջանի և Սևանի վրայով վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ

Հունիսի 29-ին, շաբաթ, ժամանում Լենինական

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոսի և Թեմական խորհրդի խնդրանքներին, հունիսի 29-ից հուլիսի 2-ը բարեհաճեց հովվապետական իր երկրորդ այցելությունը տալ Շիրակի թեմին։ Այս առթիվ Նորին Ս. Օծությունը եղավ Լենինական և Կիրովական քաղաքներում։

Այս բարերաստիկ և օրհնաբեր այցելության առթիվ, Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և դավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն արեղա Թերրեբյանը։

Հունիսի 29-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մեկնեց Լենինական։ Երևանի երկաթուղային կայարանում Նորին Ս. Օծության ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Երևանի եկեղեցիների բահանայից դասը և հավատացյալները։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Նույն օրը, երեկոյան ժամը 4.30-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Լենինական։

Լենինականի երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորում են Շիրակի թեմական առաջնորդը, թեմական խորհրդի անդամները, բահանայից դասը և հավատացյալների մեծ բազմություն։

Նորին Ս. Օծության սրտագին բարի գալուստ են մաղթում Լենինականի քաղաքային սովետի նախագահի տեղակալ պր. Հ. Հովհաննիսյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, եկեղեցական մեծ թափորով ու «Հրաշափառ»-ով, առաջնորդվում է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցին, ուր հավաքված հավատացյալները երկյուղած ջերմեռանդությամբ ողջունում են իրենց Վեհափառ Հայրապետին։

Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաքիրյանը, հավարտ սուրբ արարողության, ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհարեր-այցելությունը.

«Վեհափառ Տե՛ր. Թույլ տվեք, հանուն Շիրակի թեմի հայ հավատացյալների, թեմական խորհրդի և եկեղեցական դասի, որդիական խոնարհությամբ ջերմորեն ողջունել Ձեզ Ս. Օծությանը և բարի գալուստ մաղթել։

Հովվապետական Ձեր այս օրհնաբեր այցելության առթիվ, մի պահ մտածեցինք և

Նույնիսկ փորձվեցինք Ձեզ դիմավորել ծաղիկներով, Ձեր ճանապարհի վրա, Ձեր սուրբ ոտքերի տակ վարդեր շաղ տալ, կանաչ կամարներ կապել, որոնք կարող էին թոշնել։ Շիրակի թեմի մեր ավանդապահ և հավատացյալ ժողովուրդը այսօր մի անգամ ևս որդիական իր վառ սերն ու անկեղծ հավատարմությունն է ընծա բերում Լուսավորչի Գահին և նրա արժանավոր Գահակալին, ծնրադիր հայցելով Ձեր սուրբ աղոթքներն ու օրհնությունը։

Բարի՛ եկաք, Վեհափառ Տե՛ր, հաղա՛ր բարի։

Ինչպես ամեն տեղ, մեր թեմը ևս, միշտ իր պայծառ հայացքը սևեռել է դեպի մեր հավատի և լույսի աղբյուր Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

Ահա այսպիսի անկեղծ զգացմունքներով և հոգեկան լիցքով տոգորված, աղոթում ենք սրտեռանդն Մայր Աթոռի անսասանության, Ձերդ Վեհափառության թանկագին կյանքի արեշատության, Մայր Հայրենիքի բարօրության և աշխարհի խաղաղության համար։

Վեհափառ Տե՛ր. թույլ տվեք, Հանուն Շիրակի թեմի հայ հավատացյալների, թեմական խորհրդի և եկեղեցական դասի, որդիական խոնարհությամբ ջերմորեն ողջունել Ձերդ Ս. Օծությանը և բարի գալուստ մաղթել։

Վեհափառ Հայրապետն իր պատասխան խոսքում ասում է.

«Շնորհակալություն, սրբազան եղբայր, Ձեր ջերմ խոսքերի համար։ Մենք այսօր այստեղ ժամանեցինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ բերելու Ձեզ բոլորիդ ողջույն և աստվածային օրհնություն։ Ողջո՜ւյն այս սուրբ եկեղեցուն, հրաշագործ Ցոթվերքին, ողջո՜ւյն Լենինականի ամբողջ ժողովրդին։

Ուրախ ենք, որ գտնվում ենք հայկական այս գեղեցիկ քաղաքում։ Մխիթարված ենք տեսնելով այս սուրբ եկեղեցին, որը նույնպես գեղեցիկ է և բարեպարդվել է շնորհիվ Մաշտոց եպիսկոպոսի, քահանա հայրերի, թեմական խորհրդի անդամների աշխատանքի. դա ձեր քաղաքի պատիվն է։

Մենք Էջմիածնում հաճախ ընդունում ենք հյուրեր՝ հայեր, օտարներ, Հայաստանից, մեր Միության մյուս հանրապետություններից և արտասահմանից։ Հյուրերից մի մասը լինում են նաև Լենինականում և հավանում են այս քաղաքը։ Նրանք լինում են նաև այս եկեղեցում և լավ կարծիք են հայտնում նրա մասին։ Մենք այս բոլորը լսում ենք և հոգեպես մխիթարվում։

Մենք այստեղ եկանք, որպեսզի Մեր ողջույնները և օրհնությունները բաշխենք բոլորիդ, որպեսզի դուք երջանիկ ապրեք, բախտավոր լինեք, և իբրև հայ ժողովրդի զավակները և սովետական հայրենիքի պարկեշտ քաղաքացիները, ձեռք-ձեռքի տված, ձեր պարտքը կատարեք Եկեղեցու և հայրենիքի հանդեպ։

Վաղը Մենք սուրբ պատարագ պիտի մատուցենք այստեղ և պիտի աղոթենք հայ ժողովրդի երջանկության, հայ հայրենիքի ծաղկման և աշխարհի խաղաղության համար։

Մեր Եկեղեցին խաղաղության պաշտպան Եկեղեցի է, բոլոր խաղաղասեր և ազնիվ պետությունների կողքին։

Մենք Մեր ամբողջ հոգեկան ուժերով պաշտպան պիտի լինենք խաղաղության դատին և Մեր հարապատ ժողովրդի շահերին։

Ցանկանում ենք բոլորիդ հոգու և մարմնի քաջառողջություն և ձեր հայրենաշեն, բարի գործերին ու իղձերին հաջողություն»։

Ապա Վեհափառ Հայրապետը նախագահում է կիրակամտի ժամերգության։

Հունիսի 30-ին, կիրակի, հայրապետական սուրբ պատարագ

Կիրակի, հունիսի 30-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում։

Եկեղեցին, իր մեծ վերնատնով, վաղ առավոտվանից լցվել էր հավատացյալների խուռն բազմությամբ։

Սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Ս. Սեղանին սպասարկում են Տ. Ասողիկ և Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, Տ. Մեսրոպ վարդապետը, Տ. Արսեն աբեղան, Տ. Նորայր և Տ. Հայկազուն քահանաները։

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը կատարում է Լենինականի եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը՝ ղեկավարությամբ Տ. Ատոմ քահանայի։

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզում է «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան բնաբանով։

Նորին Ս. Օծությունը Իր նեբշնչված քարոզի մեջ վեր է հանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կատարած հոգևոր, հայրենասիրական, մշակութային դերը հայ ժողովրդի կյանքում ինչպես անցյալում, նույնպես նաև այժմ, հորդորում է Իր զավակներին միշտ հավատարիմ մնալ հայ հավատին ու ավանդությանց, նվիրումով աշխատել Մայր Հայրենիքի բարօրության և ջերմորեն աղոթել աշխարհում կայուն խաղաղության հաստատման համար։

Վեհափառ Հայրապետի աղոթքներին և բարեմաղթություններին ձայնակցում էր ողջ եկեղեցին՝ հավատացյալների սրտից բխած «ամեն»-ներով։

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցին։

Հավարտ սուրբ պատարագի տեղի է ունենում աջահամբույր։ Թեմի հավատացյալները իրենց աջահամբույրի մեջ էին դրել իրենց սերն ու նվիրվածությունը դեպի Էջմիածինը, դեպի Վեհափառ Հայրապետի սիրելի անձնավորությունը։

Երեկոյան, թեմական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում։

Հուլիսի 1-ին, երկուշաբթի, այցելություն Լենինականի քաղաքային սովետին

Երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Լենինականից 7 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մարմաշենի պատմական եկեղեցին, որը հայ ճարտարապետության գոհարներից մեկն է։

Հետմիջորեի ժամը 1-ին, Նորին Ս. Օծությունը պաշտոնական այցելություն է տալիս Լենինականի քաղաքային սովետին, ուր ընդունվում է ջերմորեն։

Ընդունելության ներկա է լինում քաղաքային սովետի գործադիր կոմիտեի անձնակազմը։

Քաղաքային սովետի նախագահ Ս. Մատնիշյանը սրտագին ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայությունը։ Նորին Ս. Օծությունը իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար։

Վեհափառ Հայրապետի և քաղաքային սովետի նախագահի միջև տեղի է ունենում սրտագին խոսակցություն, ջերմ մթնոլորտում։

Այցելության վերջում, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, քաղաքային սովետի շենքում, կազմակերպվել էր ընդունելություն։

Այնուհետև Նորին Ս. Օծությունը հրաժեշտ առավ լավագույն տպավորություններով և հուշերով։

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Լենինականի դուլպայի մեծ գործարանը, որտեղ Նորին Ս. Օծության մանրամասն բացատրություններ տվեց գործարանի դիրեկտորի տեղակալ Ս. Զաքարյանը։

Ժամը 4.30-ին, Վեհափառ Հայրապետը լավագույն տպավորություններով Լենինականից մեկնեց Կիրովական։

Մի տեսարան Կիրովի հրապարակից (Կիրովական)

Հուլիսի 1-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի այցելությունը Կիրովական

Հուլիսի 1-ին, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ժամանում է Կիրովական և թափորով առաջնորդվում տեղի Ս. Աստվածածին եկեղեցին։ Եկեղեցին, բակը, շրջակայքը լցված են հավատացյալների հոծ բազմությամբ։ Բոլորը անձկությամբ սպասում են իրենց Հովվապետի ժամանմանը։ Առաջին անգամն է, որ Վեհափառ Հայրապետը շնորհ է անում այցելելու Կիրովական քաղաք։

Զանգերի զվարթ զողանջի տակ, «Հրաշափառ»-ով, եկեղեցի է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը։

Այստեղ Վեհափառ Հայրապետին բարի գալստյան ջերմ խոսք է ասում արժանապատիվ Տ. Վազգեն քահանան՝ հանուն հոգևոր դասի և հավատացյալ ժողովրդի։

Ապա Վեհափառ Հայրապետը տալիս է Իր պատգամները և օրհնում ներկաներին։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախագահում է երեկոյան ժամերգությանը։

Նույն օրը, մինչև ուշ երեկո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել բազմաթիվ հավատացյալների, որոնք փոքր խմբերով գալիս էին հյուրանոց՝ համբուրելու իրենց Հովվապետի Ս. Աջը։ Դրանց մեջ կային նաև շատ հայրենադարձներ, որոնք վերջերս միայն ներգաղթել էին Մայր Հայրենիք Կիպրոսից և Եգիպտոսից ու հաստատվել Կիրովականում։

Հուլիսի 2-ին, երեքշաբթի, այցելություն Կիրովականի քաղաքային սովետին

Երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Կիրովականի քաղաքային սովետին, որտեղ ջերմ ընդունելություն է գտնում քաղաքային սովետի ղեկավար անձնակազմի կողմից։ Ընդունելության ժամանակ, քաղաքային սովետի նախագահ Շ. Վարդումյանը ներկաների անունից բարի գալստյան ջերմ խոսքեր է ասում, որին պատասխանում է Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ և օրհնությամբ։ Այնուհետև Վեհափառ Հայրապետի և Կիրովականի քաղաքային սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց Կիրովականի մասին։

Կիրովականը մեր հայրենիքի քաղաքների մեջ առաջին տեղն է գրավում իր գեղեցկությամբ։ Առաջին իսկ հայացքից, այն աչքի է ընկնում իր մաքրությամբ, բազմահարկ գեղեցիկ շենքերով։ Քաղաքը շրջապատված է խիտ անտառներով։

Դեռևս 40 տարի առաջ 3—4 հազար բնակչություն ունեցող Ղարաքիլիսան այսօր ունի ավելի քան 64 000 բնակչություն. այն դարձել է Հայաստանի արդյունաբերության խոշորագույն կենտրոններից մեկը։

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց նաև նոր հայրենիք ներգաղթած հայրենադարձների վիճակով։ Քաղաքային սովետի նախագահ Շ. Վարդումյանը գոհունակությամբ նշեց, որ «Հայրենադարձների ժամանումը մեր քաղաքը մեզ համար երջանկություն է։ Մենք ջանք չենք խնայում, որ նրանք իրենց զգան ամենուրեք իրենց հայրենի կուրի տակ, ապահով ու երջանիկ։ Նրանց իրենց ժամանման առաջին իսկ պահից ապահովվեցին հարմարավետ բնակարաններով ու համապատասխան աշխատանքներով. ուրախ ենք նշելու, որ նրանք բոլորն էլ գոհ են իրենց վիճակից։ Մենք հաճախ անձամբ այցելում ենք իրենց բնակարանները և հետաքրքրվում նրանց առօրյայով»։

Նախագահը ավելացրեց նաև, որ այս տարի և առաջիկայում ևս սպասվում են հայրենադարձների նոր ընտանիքներ։ Ջեյրանի բնակչությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ հյուրասիրություն։

Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց քաղաքային սովետի նախագահին և ներկաներին ջերմ ընդունելության համար. մաղթելով նրանց նորանոր հաջողություններ, ուժ և կորով իրենց հայրենասիրական գործերի մեջ։

Նույն օրը, Վեհափառ Հայրապետը այցելեց Կիրովականի արհեստական մետաքսաթելի նորակառույց գործարանը։ Վեհափառը հետաքրքրվեց քիմիական լուծույթի ստացման, ժանման, ոլորման, տեսակավորման և փաթաթման բաժանմունքներում։ Ամենուրեք գործարանում Վեհափառ Հայրապետին ընկերակցում և բացատրություններ էին տալիս գործարանի տնօրենի տեղակալ Ս. Առաքելյանը և գլխավոր ինժեներ Մ. Բալասանյանը։

Մետաքսաթելի գործարանը օրական տալիս է 23 տոննա բարձրորակ մետաքսաթել։

Վեհափառ Հայրապետը նույն օրը այցելում է նաև քիմիական գործարանի կիսաքանկարժեք քարերի բաժանմունքը, որտեղ բացատրություններ է տալիս վարիչ Հ. Կոստանյանը։

Այստեղ պատրաստում են արհեստական քարեր բազմաթիվ գույներով, որոնք իրենց որակով և կարծրությամբ չեն զիջում բնական քարերին։

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, գեղատեսիլ Դիլիջանի և Սևանի վրայով վերադառնում է Մայր Աթոռ լավագույն տպավորություններով։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՅՅԱՆ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 15-ին, շաբաթ, առավոտյան ժամը 12-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1962—1963 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը։

Հանդիսության ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Հայկական ՍՍՌ պետական հիմնի նվագով սկսվում է հանդեսը։ Ապա Հոգևոր Ճեմարանի երգչախումբը երգում է «Որք դարդարեցին» Թարգմանչաց շարականը։

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը կատարում է հանդիսության բացումը ներածական հակիրճ ճառով։

Այնուհետև, հանդիսության առաջին բաժնում, Հոգևոր Ճեմարանի ուսանողները գործադրում են գեղարվեստական մի ծրագիր՝ բաղկացած խմբերգերից և արտասանություններից։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարում է «Ջան հայրենիք», «Բլբուլն Ա-վարայրի» (Մ. Եկմալյան), «Լեռների ուսին», «Անջուլքի երգ» խմբերգերը, ղեկավարությամբ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանի, և մի շարք շարականներ հայկական խազագրությամբ։

Ճեմարանի ուսանողներից ոմանք հանդես են գալիս գեղեցիկ արտասանություններով։ Միլտոնի «Աղերս առ լոյսն» (գրաբար) արտասանում է Գ դասարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանը, նույն դասարանից Ղևոնդ Վարդանյանը՝ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի «Անառակ»-ը։ Գ. լսարանի ուսանող Կարապետ Քիլիջյանը արտասանում է Խաչակյանի «Աբու Լալա Մահարի»-ից յոթերորդ սուրաթը։ Ա դասարանցի Շահեն Բարդումյանը արտասանում է Սիլվա Կապուտիկյանի «Երևանի ձայնը»։ Նույն դասարանից Կարապետ Գալստյանը ռուսերեն արտասանում է «Աշունը», իսկ Հովսեփ Հակոբյանը անգլերեն՝ «Դիր մընք ավ մեյ»-ը։

Ուսանողների մանդոլինիստների խումբը կատարում է մի շարք հայ ժողովրդական երգեր։

Գ լսարանի ուսանող, շրջանավարտ Հրայր Գարավերդյանը, հանուն Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ լսարանի ուսանողության, կարդում է որդիական երախտագիտության ջերմ զգացմունքներով բարախոս՝ Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Այսօր այս սուրբ հարկի տակ հավաքված ենք ուրախ հանդիսությամբ փակելու Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարեշրջանը։

Մենք, Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ ուսանողներս, պարտք կզգանք Ձերդ Վեհափառության մեր երախտագիտական զգացումները հայտնել՝ մեր նկատմամբ Ձեր

ցույց տված հայրական խնամքին և հոգատարության համար։

Այսօր Հոգևոր Ճեմարանի անդաստանին մեջ նոր հունձք քաղվեցավ, հունձք բարի, հունձք կեցուցիչ, անմասն՝ չար, ապականիչ որոմեն։ Արդարև, այս բարի և խոստումնալից հունձքը արդասիքն է Ձերդ Վեհափառության, Ճեմարանի վերատեսչության և դասախոսական կազմի անձնվեր և անխոնջ աշխատանքին։ Դուք, որպես բարի սերմնացան, շրջապատեցիք մեզ գուրգուրանքով ու սիրով, հսկեցիք մեր վրա, աճեցուցիք և մեծացուցիք մեզ, որպեսզի այսօր մենք դառնանք, Ավետարանի խոսքով, «Ցորեան ատոք ի հասկին»։

Ձեր հայրական հոգածության ներքո, արդարև, Հոգևոր Ճեմարանը եղավ այն դարբնոցը, որն զմեզ հղկեց, զարդացուց հոգեպես, իմացապես և ֆիզիկապես և պատրաստեց մեզ մեր ապագա սուրբ ասպարեզին։

Մեր ուսումնական վեց տարիներու ընթացքին, մենք ականատես վկաները եղանք այն ջերմ հոգածության, զոր Ձերդ Վեհափառությունը ցուցաբերած է ու կցուցաբերե Հոգևոր Ճեմարանի նկատմամբ։ Այնքան մոտ կղզաք զայն Ձեր սրտին, որ նույնիսկ Ձեր հայրապետական Գահեն իջնելով, եկաք այստեղ և դասավանդեցիք, սերմանեցիք մեր մատաղ հոգիներուն մեջ Կենաց բանի սերմերը։ Ձեր անձնական բարի օրինակով, Դուք Ձեր նկարագրի դրոշմը դրիք մեր հոգեկան և իմացական զարգացման վրա։ Կյանքի մեջ մեր սկզբունքները, Վեհափա՛ռ Տեր, Ձեր հայրական իմաստուն, փորձառու խրատներն ու պատվիրանները պիտի ըլլան։ «Որդի՛ հարազատ զնմանութիւն հօրն բերէ»։

Ձենք կրնար մոռնալ նաև մեր վերատեսուչ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի տարած խնամքն ու հոգատարությունը մեր նկատմամբ։ Ան մեր անմիջական հսկիչն էր, միշտ մեր հետ և մեր մեջ։ Հուսահատության մեջ մեզի հավատք ներշնչողը եղավ, նեղության մեջ մեզի խրատատու օգնական եղավ։ Կհետաքրքրվեր մեր առօրյայով, մեր ներկայով և ապագայով։

Այստեղ մենք չենք կրնար չհիշատակել նաև մեր փոխ-վերակացու հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետի և արժանապատիվ Տ. Հովհաննես քահանայի անունները, որոնք հոժարությամբ և սիրով ստանձնած էին մեր ամենօրյա հովիվը ըլլալու նվիրական պաշտոնը։ Անոնք մասնակից դարձան մեր ուրախություններուն և մեր ուրախություններուն։

Այս հանդիսավոր պահուն, կարելի՞ է արդյոք մոռնալ մեր սիրելի և հարգելի դասախոսները, խումբ մը պատրաստված մշակներ, դիտակից իրենց պաշտոնին ու կոչման, որոնք հանձն առին զարդարել մեզ իրենց իմացական, բարոյական շնորհքներով ու կարողություններով, առատապես բաշխեցին մեզի իրենց դիտելիքներեն, սորվեցուցին մեզի հավիտենական ճշմարտություններ և վերջապես հասցուցին մեզ այս ցանկալի հանդրվանին։

Անսահմանորեն երախտապարտ ենք Ձեզի, սիրելի ուսուցիչներ։

Վեհափա՛ռ Տեր. Ձեր հայրապետական հովանիին տակ, միշտ կեցցե՛ Ս. Էջմիածինը իր Հոգևոր Ճեմարանով, որպեսզի Ձեր առաջնորդությամբ այս Ս. Ճեմարանը տարվեցտարի նոր մշակներ պատրաստե Հայ Եկեղեցվո համար, հայ հավատացյալ ժողովուրդի ծառայության համար, մշակներ բարի, մշակներ պարկեշտ և մշակներ «առանց ամօթոյ»։

Թող հավերժ ապրի, կենդանի մնա Ս. Էջմիածինը, քրիստոնյա հայ ժողովուրդի աղդային և կրոնական կյանքի կեդրոնը, ազգային օջախը։

Թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի ուսանողության, մատչիլ ի համբույր Ձեր օծյալ Ս. Աջույն»։

Հանդիսության երկրորդ բաժնի սկզբում, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը կարդում է Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարվա ընդհանուր գործունեության պատկերը ներկայացնող հետևյալ զեկուցագիրը.

«Վեհափառ Տեր.

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այսօր կբոլորե իր նոր շրջանի 18-րդ ուսումնական տարին։

Հոգևոր Ճեմարանի վերաբացումով, հնադարյան այս սուրբ հաստատությունը դարձյալ նոր կյանքի կոչվեցավ, որովհետև, ինչպես իմաստունը կըսե, «Տունը մանուկներով է ուրախ»։

Ս. Էջմիածնի դպրոցը դարերու պատմություն ունի։ Հին ժամանակներուն, մեր երկրի պատմության տխուր օրերուն, ան հանդիսացած է լույսի և մշակույթի փարոսը, մեր ժողովուրդի և Եկեղեցիի կյանքին մեջ։ Ե դարեն սկսած, Ա. Էջմիածնի դպրոցի աշակերտները քալած են շարունակ իրենց ժողովուրդին հետ, հարկ եղած ժամանակ սուր և գենք ըստացուցած՝ պաշտպանելու իրենց հայրենիքն ու հավատքը, իսկ խաղաղ ժամանակներու մեջ, առկայծող կանթեղի լույսին տակ, նվիրված են մշակութային աշխատանքի։

Այս խորհրդածություններով, մեր մտքին մեջ անդամ մը ևս կկենդանանան լուսապսակ անունները մեր Խոշմեծ վարդապետներուն,

որոնք կազմեցին էջմիածնի դպրոցի աշակերտության հավիտենական ոսկե շղթան։

Վեհափա՛ռ Տեր.

Ս. Էջմիածնի մշտավառ ջահը ութը տարիներն ի վեր կգտնվի Ձեր սուրբ ձեռքերուն մեջ, որպես նվիրական ավանդ՝ փոխանցված մեր նախնիքներեն։ Դուք այս հաստատությունը ևս առավել պայծառացուցիք և դրիք իր հոգևոր կոչման և ազգային, ժողովրդանվեր ծառայության ճանապարհի վրա։ Մեր ժողովուրդը, մեր եկեղեցին երախտապարտ են նաև Ձեզ այն ջանքերուն համար, որ կթափեք այս դպրոցի պայծառության և նպատակին համար։

Այս կարճ նախաբանեն հետո, թույլ տվեք անցնիլ Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարվան գործունեության։

Ա) Շրջանավարտ դասարան.— Այս տարվան մեր շրջանավարտ Գ լսարանի ուսանողներն են Վռամշապուհ Ջիհանյան, Կարապետ Քիլիջյան, Կայծակ սարկավագ Մահտեսյան, Հրայր Գարաբերդյան և Հակոբ Պարոնյան։ Առաջին երկուքը լրիվ կերպով հետևած են Ճեմարանի վեցամյա դասընթացներուն, իսկ վերջին երեքը՝ երկու տարի առաջ ընդունվեցան Ճեմարան։ Մարտ ամսու 5-ին, շրջանավարտներուն տրվեցան դիպլոմային աշխատանքի թեմաներ, որոնց բանավոր պաշտպանությունը տեղի կունենա հոկտեմբերին և շրջանավարտները կստանան Ճեմարանի ավարտական վկայականը։ Մեր շրջանավարտ ուսանողները ընդհանրապես եղած են կարգապահ, ուսումնատենչ ու գիտակից։

Բ) Կրոնական և եկեղեցական կյանք.— Հոգևոր Ճեմարանի ուսանողներու պարտականություններու գլխավորներեն մեկն է կրոնական պարտականություններու կատարումը։ Մեր Ճեմարանի ուսանողները չթերացան իրենց հոգևոր պարտականություններուն մեջ, սիրով մասնակցելով եկեղեցական արարողություններուն և իրենց գործոն մասնակցությունը բերին թե՛ Մայր Տաճարի, թե՛ էջմիածնի եկեղեցիին մեջ և պետք եղած ժամանակին, ուղարկվեցան զանազան քաղաքներ մեծ տոներու առթիվ։ Ուսանողները դպրոցական տարեմուտին և մեծ տաղավարներուն ստացան սուրբ հաղորդություն։ Անոնք բարեխղճորեն կկատարեն նաև Մայր Տաճարին մեջ իրենց բաժին ինկած հսկողության և ծիսակատարության ծառայությունները։ Լուսարարապետին օգնելու մեջ իրենց շնորհակալ ծառայությունը առավելապես մատուցին ուրարակիր Կարապետ Քիլիջյանը, Հովհաննես Հակոբյանը, Գրիգոր Բունիաթյանը և Հարություն Նալբանդյանը։

Գ) Կրթական և մշակութային կյանք.— Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարին սկսանք 1962 թվականի սեպտեմբեր 10-ին, երկուշաբթի օրը, 30 ուսանողներով, բանեցված հինգ դասարաններու վրա։ Ուսումնական տարին փակեցինք ամավերջի քննություններեն հետո, հունիսի 15-ին։ Տարվան ընթացքին կատարվեցան կիսամյա և տարեկան քննությունները լավագույն արդյունքներով։ Ճեմարանի հարկին տակ կատարվեցան մոտ 12 դասախոսություններ զանազան շինիչ նյութերու շուրջ և կազմակերպվեցան հինգեն ավելի հանդիսավոր նիստեր, նվիրված ազգային-եկեղեցական տոներու կամ դեմքերու։ Մշակութային կյանքին մեջ կմտնեն նաև համերգներու, թատրոններու և շարժանկարներու ցուցադրությունները, որոնք կկատարվեին միշտ Ձեր բարեհաճ արտոնությամբ և գիտությամբ։

Գոհություն Աստուծո, այս տարի ալ Ճեմարանեն ներս չենք ունեցած մտահոգիչ որևէ ծանր հիվանդություն։ Բարեշնորհ ժիրայր կիսասարկավագը այս տարի ևս շնորհակալ և բարեխիղճ աշխատանք տարած է թե՛ ուսանողներուն և թե՛ միաբանության մեջ, որպես բարի Սամարացի։

Անցնող տարվան ամավերջի քննություններեն հետո, ուսանողները լրջոր որ հանդիպացան Հաղարծնի մեր գեղեցիկ վանքին մեջ։ Իսկ այս ուսումնական տարվան շրջանին դժբախտաբար ոչ մեկ շրջապտույտ չկարողացանք կատարել, եղանակներու աննպաստ պայմաններու բերումով։

Դ) Գրադարան-ընթերցարան.— Հոգևոր Ճեմարանի գրադարանը այժմ ունի մոտավորապես 18 000 գիրք զանազան լեզուներով և Ճեմարանի հատուկ մասնագիտական կոմպլեկտավորմամբ։ Կրոնական, եկեղեցական, պատմական և գեղարվեստական գրքերը մեծ տոկոս կկազմեն։ Գրադարանի վարիչն է Վռամշապուհ Ջիհանյանը, իրեն օգնական ունենալով ուսանող Ղևոնդ Վարդանյանը։ Այս տարվան մարտ և ապրիլ ամիսներուն կատարվեցավ գրադարանի գրքերու ստուգումը։

Ե) Մարզական կյանք.— Մարմնամարզը Ճեմարանի բոլոր ուսանողներուն համար պարտավորիչ է։ Ճեմարանի մարզիչ Հարություն Սիմոնյանի ղեկավարությամբ, ամեն առավոտ, ուսանողները 20—25 րոպե կզբաղին մարմնամարզությամբ, առավոտյան ժամերգությունեն առաջ։ Ուսանողներու սիրած խաղերն են պինգ-պոնգ, վոլեյբոլ և բասկետբոլ։ Այս տարի Ձերդ Սրբությունը ներկա եղավ մեր փոքրիկ մարզահանդեսին։

Զ) Ուսուցչական կազմ.— 17 հոգին բաղկացած մեր ուսուցչական կազմի գլուխը կգտնվի Նորին Ս. Օծությունը, որ հակառակ իր բազմազբաղ վիճակին, սիրով կդասավան-

դն բարոզախոսություն և հոգեբանություն։ Այս տարի գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազան և Հ. Ռաստիկեանյան ավելցան ուսուցչական կազմին վրա։ Պետք է խոստովանիլ, թե միշտ գոհ մնացած ենք մեր ուսուցչական կազմի անձնվեր աշխատանքներեն և մանավանդ այն ոգիեն, որ կա յուրաքանչյուրեն ներս։

Այս ուսումնական տարեշրջանին, արտասահմանեն ընդունեցինք մեկ աշակերտ միայն՝ Հարություն Թերզյան։ Ուրիշ թեկնածուներ չկարողացան դալ։ Տեղացի ութը նոր աշակերտներով կազմեցինք ճեմարանի առաջին դասարանը։

Մեր խոսքը փակելե առաջ, որդիական երախտագիտական ջերմ խոսք ունինք Զերդ Սրբության հանդեպ, Վեհափա՛ռ Տեր, բարոյական, նյութական այն անդին կոհողությանց համար, որ կընեք ճեմարանի համար, որպես Հայրապետ և ճշմարիտ ռեկտոր։

Շնորհակալության պարտք ունինք նաև մեր հայրենի կառավարության և անոր ներկայացուցիչներուն, հանձինս պարոնայք Սարգիս Գասպարյանի և Սուրեն Հովհաննիսյանի, իրենց ընձեռած օժանդակությանց համար։ Շնորհակալություն Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներուն, Մայր Աթոռի պատվարժան միաբանության և բոլոր պաշտոնեության՝ իրենց թանկագին ծառայության համար։

Մեր շնորհակալությունները մեզ օգնող հոգևոր եղբայրներուն՝ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետին և արժանապատիվ Տ. Հովհաննես քահանային, որոնց աշխուրջ հսկողության ներքև ավելի կկանոնավորվի Հոգևոր ճեմարանի ներքին և կարգապահական կյանքը։

Օրհնությո՛ւն և շնորհակալությո՛ւն բոլոր այն բարեբարներուն, աստ և ի սփյուռս աշխարհի ցրված, որոնց բարեբար օժանդակությամբ բաց կմնան Հոգևոր ճեմարանի դռները։

Այնուհետև վերատեսուչ սրբազանը հրապարակեց անունները այն ուսանողների, որոնք հաշվետու ուսումնական տարվա մեջ հանդիսացել էին ուսման մեջ գերազանցիկներ և առաջավորներ։

Ուսման մեջ առաջին և երկրորդ հանդիսացողները արժանացան մրցանակների և նվերների։

Գ լսարանից ուսման մեջ առաջին հանդիսացել էր Վռամշապուհ Քիհանյանը՝ 9,59 ընդհանուր միջինով և երկրորդ՝ Հրայր Գարավերդյանը՝ 9,47 ընդհանուր միջինով։

Առաջին լսարանից առաջին էր հանդիսացել Ժիրայր կիսասարկավագ Գալփաքջյանը 9,34 ընդհանուր միջինով, երկրորդ՝ Դավիթ Դիլանյանը 8,06 ընդհանուր միջինով։

Գ դասարանից առաջին էր հանդիսացել Ղևոնդ Վարդանյանը 9,80 ընդհանուր միջինով, իսկ երկրորդ՝ Գրիգոր Բունիաթյանը 8,76 ընդհանուր միջինով։

Բ դասարանից առաջինն էր Սարգիս Բոզոյանը՝ 8,53 ընդհանուր միջինով, երկրորդ՝ Հակոբ Փանոսյանը 8,00 միջինով։

Առաջին դասարանից առաջինն էր Կարպիս Գալստյանը 8,46 ընդհանուր միջինով, իսկ երկրորդ՝ Եղվարդ Դանիելյանը՝ 8,04 ընդհանուր միջինով։

Ուսման մեջ ամենաբարձր գնահատականը ստացել է Գ դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը՝ 9,80 ընդհանուր միջինով։

Հանդիսության վերջում, Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, իր գոհունակությունը հայտնեց և շնորհավորեց Հոգևոր ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմին, ուսանողության՝ հաշվետու ուսումնական տարում ձեռք բերված լավագույն արդյունքների համար և Իր ուրախությունը արտահայտեց այն առողջ հոգևոր, եկեղեցական ու հայրենասիրական ոգու համար, որ տիրում է Հոգևոր ճեմարանում։

Իր հայրական խոսքի վերջում, Վեհափառ Հայրապետը օրհնեց Հոգևոր ճեմարանը և բարեմաղթեց նորանոր հաջողություններ ուսումնական առաջիկա տարում։

Հոգևոր ճեմարանի 1962—1963 տարվա ամավերջի հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։

Հանդիսության վերջում, վերատեսուչ սրբազան հոր գլխավորությամբ, դասախոսական կազմը և ուսանողությունը աջահամբույրով ստացան Վեհափառ Հայրապետի շնորհավորանքն ու օրհնությունները։



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 5-ին, հինգշաբթի, երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օրհնությամբ և «Պահպանիչ»-ով վարդապետական լանջախաչ շնորհել Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանին, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանին և հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանին, նրանց բարվոք և ազնիվ ծառայությանց որպես հայրապետական գնահատություն։

Պարգևատրվածները, ծնկի եկած Իշման Ս. Սեղանի առաջ, իրենց հոգևոր Հոր ձեռքից աջահամբույրով ստացան իրենց ապագա գործունեության ուղին և նպատակը խորհրդանշող լանջախաչերը, դրանք սրբությամբ և հոգևոր արթնությամբ կրելու ուխտով և խոստումով։

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը խաչագգեաց վարդապետներին խոսեց իմաստալից մի խրատական «Այլ մեք քարոզեցուք զխաչելեալն Քրիստոս՝ հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն» առաքելական բնաբանով։

Երեկոյան ժամը 7-ին, նոր Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի ողջ միաբանությանը։

Ընդունելության ժամանակ, խաչապսակ վարդապետներին ջերմորեն շնորհավորեցին գերաշնորհ Տ. Սահակ, գերաշնորհ Տ. Հայկազուն, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազաններ, հոգեշնորհ Տ. Վահան, Տ. Մուշեղ վարդապետները, հոգեշնորհ Տ. Արսեն, Տ. Նարեկ աբեղաները և Մայր Աթոռի սարկավագները։

Պարգևատրվածները խոսք առնելով, որդիական իրենց երախտագիտությունն ու սրտագին շնորհակալությունները հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ այդ բարձր և պարտավորեցնող պարգևի համար և խոստացան է՛լ ավելի եռանդով և նվիրումով աշխատել Նորին Ս. Օծության հովանու և ղեկավարության տակ՝ Մայր Աթոռի պայծառացման համար։

Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացուն է և միաժամանակ անգլերեն լեզվի դասատու Ճեմարանում։

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը Մայր Տաճարի ավագ լուսարարն է և կրոնի ուսուցիչ Հոգևոր Ճեմարանում։

Հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը Մայր Աթոռում մի շարք պատասխանատու պաշտոններ կատարելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ մեկնում է Լոնդոն՝ 3 տարով հետևելու աստվածաբանական դասընթացների։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է խաչապսակ երիտասարդ վարդապետներին, մաղթելով, որ նրանք այսուհետև ևս լինեն իրենց ապագա ծառայության ասպարեզներում «մշակք առանց ամօթոյ», հուրախություն Վեհափառ Հայրապետի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին, կիրակի, Հոգեգալուստ: Օրվա մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը։ Ս. Սեղանին սպասարկում էին գերաշնորհ Տ. Ասողիկ և Մաշտոց սրբազանները, հոգեշնորհ Տ. Գրիգոր և Ներսես վարդապետները, հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղան և արժանապատիվ Տ. Հովհաննես քահանան։

Վեհափառ Հայրապետը ընթերցեց Ս. Հովհան Ոսկեբերան հայրապետի մեծ աղոթքը և քարոզեց Հոգեգալստյան տոնի հոգևոր նշանակության մասին։

Սուրբ պատարագին ներկա էին Ստամբուլից եկած ուխտավորներ, որոնք հաղորդվեցին։

* * *

Հունիսի 7-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Լոնդոն ուսանելու մեկնեց Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պազոպալյանը, 3 տարվա ժամանակով։ Հայր սուրբին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը, հոգեշնորհ Տ. Արսեն և Տ. Նարեկ աբեղաներն ու բարեշնորհ Կարպիս և Կայծակ սարկավագները։

* * *

Հունիսի 9-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետը, բնաբան ունենալով «Ես եմ ջուրն կենդանի»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունիսի 10-ին, երկուշաբթի, «Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Ս. Հռիփսիմեի տաճարում պատարագեց վանքի վանահայր արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ «Հայր մեր»-ի ժամանակ պատարագիչ հայրը քարոզեց «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» բնաբանով։ Տաճարը լիքն էր էջմիածնից և Երևանից եկած հավատացյալների բազմությամբ։ Սուրբ պատարագը երգեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։ Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն երանաշնորհ Կոմիտաս և Փիլիպոս կաթողիկոսների և Ս. Հռիփսիմե տաճարի նորոգությանց բարերարներ Հյուսիսյան և Մանուկյան գերդաստանների ննջեցյալների համար։

* * *

Հունիսի 11-ին, երեքշաբթի, «Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց»։

Ս. Գայանեի տաճարի նորոգության պատճառով սուրբ պատարագը մատուցվեց Մայր

Տաճարում։ Պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց ավուր պատշաճի։

* * *

Հունիսի 13-ին, երեքշաբթի, «Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինէի եպիսկոպոսին»։ Սուրբ պատարագը մատուցվեց Ս. Շողակաթի տաճարում։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

* * *

Հունիսի 15-ին, շաբաթ, «Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղան «Ընտրեալ յԱստուծոյ Քահանայապետ ճշմարիտ և հովիւ հոգևոր բանաւոր հօտիս բնաբանով։

* * *

Հունիսի 16-ին, կիրակի, «Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը բնաբան ունենալով «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն և ես ճանաչեմ զնոսա և զկնի իմ գան» (Յովհ. Ժ 27)։

* * *

Հունիսի 17-ին, երեքշաբթի, Հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը, գլխավորությամբ ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի, մեկնեցին չորսօրյա շրջապտույտի՝ Երևան—Լենինական—Կիրովական—Ալավերդի երթուղով։ Նրանք այցելեցին Հառիճ, Մարմաշեն, Հաղբատ և Սանահին պատմական վանքերը և ամսի 20-ին Սևանի ճանապարհով վերադարձան Մայր Աթոռ։

* * *

Հունիսի 17-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Իրանի հայ գաղութի ծանոթ ազգայիններից պր. Ռոման Իսայանը։ Պատվարժան հյուրին Ջուլֆայի կայարանում հանուն Վեհափառ Հայրապետի դիմավորեց Մայր Աթոռի դիվանապետ Հ. Առաքելյանը։ Նույն օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել մեծարգո հյուրին և զրուցեց Իրանի հայ թեմի ազգային-եկեղեցական կյանքի մասին։

Չորս օր Վեհափառ Հայրապետի հյուրը լինելուց հետո, պր. Ռ. Իսայանը վերադարձավ Թեհրան նույն ճանապարհով։

* * *

Հունիսի 23-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Պատարագիչ հայր սուրբը խոսեց Մեծն Ներսես Հայրապետի կյանքի և գործունեության մասին, բնաբան ունենալով «Ցիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ (Եբր. ԺԳ 7)։

* * *

Հունիսի 30-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։



Լենինականի քաղաքային հրապարակը իր շատրվաններով

ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ԼԵՆԻՆԱԿԱՆԸ

Գեղատեսիլ Շիրակի հովտում, Ձյունափառ Արագածի հովանու տակ, բարգավաճում է մեծ Լենինի անունը կրող քաղաքը՝ Լենինականը։

Լենինականը որպես քաղաք ունի հարյուր տարվա պատմություն, իսկ որպես բնակավայր՝ Քսենեֆոնի վկայությամբ, գոյություն է ունեցել մեր թվարկությունից առաջ 4-րդ դարում։

Ալեքսանդրոպոլը եղել է արհեստավորական, հետամնաց քաղաք։ Մյուս արհեստների կողքին այստեղ մեծ ծաղկում է ապրել քարակոփությունը։ Քարտաշ-որմնադիրները, որոնք եղել են արվեստագետ վարպետներ, ստեղծել են փոքրաթիվ, սակայն ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող կառուցվածքներ՝ եկեղեցիներ, բաղնիքներ, անհատական տներ։ Առանձնապես արժեքավոր են նուրբ ու մանրաքանդակ շքամուտքերը, դռների ու պատուհանների շրջանակները, քիվերը, խոյակները։ Վարպետները կարողացել են տարբեր երանգներ ունեցող տուֆերի միացումից ստանալ գեղեցիկ, ներդաշնակ ճարտարապետական հետաքրքրություն ներկայացնող շենքերի առանձին էլեմենտներ, ինչպես նաև մոզաիկ հատակներ, պարիսպներ, պատշգամբներ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, ստեղծագործ հայ մարդու աշխատանքով, նախկին Ալեքսանդրոպոլը բուռն թափ է ապրեց նոր կյանքի անշեղ վերելք և դարձավ Հայաստանի արդյունաբերության և մշակույթի երկրորդ կենտրոնը։ Այժմ արագ տեմպերով զարգանում է քաղաքը, հզոր թափ է ստացել գործարանային, բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունը։

Գործարանային արտադրության մեջ հատուկ տեղ են գրավում տեքստիլի, գուլպայի և այլ տրիկոտաժեղեն ապրանքների արդյունաբերությունը, ինչպես նաև մետաղամշակումը, հաստոցաշինությունը, հեծանվի, կենցաղային սարքավորումների, ճշգրիտ չափիչ գործիքների թողարկումը, որոնց արտադրան-

Կապի շենքը Լենինի հրապարակում

քը ուղարկվում է նաև մեր երկրի սահմաններից դուրս։ Նորի արմատավորման մեջ իր աշխատանքային գործունեությամբ առանձնակի ակտիվություն է հանդես բերում քաղաքի երիտասարդությունը։

Աննախընթաց թափ է ստացել բնակարանային շինարարությունը։ Վերջին հինգ տարում կրկնապատկվել է գոյություն ունեցող բնակելի ֆոնդը։ Միայն այս տարի լենինականցիները կստանան ավելի քան 1300 գեղեցիկ, հարմարավետ բնակարաններ։

Շինարարությունը հիմնականում կատարվում է քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան։ Կառուցապատումը իրականացվում է քաղաքի հյուսիսային, հարավային և արևմտյան հատվածներում՝ միկրոշրջանների սկզբունքով։

Բացի բնակելի շենքերի խմբերից, կառուցվում են նաև կուլտուր-կենցաղային և կոմունալ սպասարկման օբյեկտներ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ, բաղնիքներ, առևտրական և հասարակական սենյակի շենքեր, սպորտային հրապարակներ, այգի-պուրակներ, որոնք բնակչության համար ստեղծում են ապրելու և հանգստի լավագույն պայմաններ։ Յուրաքանչյուր միկրոշրջանում բնակվելու է 10—12 հազար մարդ։ Միկրոշրջանների կառուցապատումը կատարվում է հինգ հարկանի բնակելի շենքերով, որոնք երեսապատվում են տեղական տարբեր երանգների Արթիկի վարդագույն և Անիի դեղնավուն տուֆերով։ Նախագծվում է և շուտով կսկսվի 9—14 հարկանի բնակելի շենքերի շինարարությունը, որոնք կունենան բարձր դիմադրողականություն՝ երկրաշարժերի նկատմամբ։

«Արագածն» կոչվող բնակելի թաղամասը, որը սկսվում է քաղաքի կենտրոնական հրապարակից և ձգվում մինչև Հաղթանակի պողոտան, դարձյալ կառուցապատվելու է բազմահարկ բնակելի շենքերով։ Այս ճեմափողոցից բացվելու է գեղեցիկ տեսարան դեպի Արագած լեռը։

Բնակարանային շինարարությանը զուգընթաց, քաղաքում լուրջ ուշադրություն է դարձվում կինո-թատրոնների, ակումբների, հիվանդանոցների, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների կառուցման գործին։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի մեր քաղաքում հիմնադրված գեոլոգիայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտի կոլեկտիվը, որին ղեկավարում է ակադեմիկոս Ա. Նազարովը, մշակել է մի շարք նոր միջոցառումներ երկրաշարժային պայմաններում բարձրահարկ շենքերի անվտանգությունն ապահովելու համար։

Պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի բաժնում սովորում են բազմաթիվ ուսանողներ, որոնք ավարտելով ինստիտուտը

Կալինինի պողոտան

և դառնալով որակյալ մասնագետներ, կաշխատեն քաղաքի նոր կառույցներում, արդյունաբերության մյուս բնագավառներում։

«Հայպետնախագիծ» նախագծային ինստիտուտի Լենինականի ճարտարապետական արվեստանոցը, որտեղ աշխատում են շուրջ 40 երիտասարդ ճարտարապետներ, կատարում է քաղաքի հատակագծման, կառուցապատման, բարեկարգման նախագծումներ։ Ճարտարապետների կողմից նախագծված կառույցներն արդեն արագորեն իրականացվում են։



Բնակելի շենքեր Ռուսիսային շրջանում (Լենինականյան «Զերմուշկա»)

Քաղաքի հյուսիսային մասում գտնվող «Աստղիկ» հրապարակում (ճարտ. Ֆ. Աֆրիկյան), որտեղ միանում են հինգ մայրուղիներ, գրանիտյա պատվանդանի վրա տեղադրվում է հավերժական փառքի կրակը՝ ի նշան բնական գազի անցկացման։ Նույն հրապարակի վրա՝ Կալինինի պողոտայի առանցքով, վեր է խոյացել նորակառույց «Հայաստան» լայնէկրան կինո-թատրոնի շենքը։

Ընթացիկ տարում վերջնականապես վերակառուցվեց Մայիսյան ապստամբության հերոսների անվան կենտրոնական հրապարակը։ Քրառատ շատրվանները, ճաշակով ձևավորված ծաղկանոցները, սալահատակված մայթերը, քարե նստարանները, գրանիտե տրիբունան հրապարակին տվել են գեղեցիկ, ուշագրավ տեսք։ Քաղաքի լայնահուն փողոցներով սլանում են տրոլեյբուսները։ Տրանսպորտի այդ հիանալի տեսակը շահագործման հանձնվեց անցյալ տարվա նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման 42-րդ տարեդարձի օրը։

Արովյան ճեմափողոցի վրա կառուցվել են «Անի» և «Հանգիստ» սրճարանները (ճարտարապետներ՝ Ռ. Եղոյան, Հ. Պողոսյան)։ Նոր բացված «Կումայրի» և «Վան» ռեստորանները ձևավորված են ժամանակակից ոճով, որի մեջ իրենց տեղն են գտել հայկական ճարտարապետության լավագույն տրադիցիաները։ «Վան» ռեստորանի կողքին ծփալու է Վանա լիճը՝ փոքրացված չափերով։

Վերջին տարիների ընթացքում քաղաքում բացված լայնահուն, ասֆալտապատ պողոտաները, նորաստեղծ ծաղկանոցները, պաղպաղակի, գրքերի, ծաղկի տաղավարները, ռեստորանները, շատրվանները, արձանները և ճարտարապետական մյուս կառույցները քաղաքին տվել են հմայիչ տեսք։

Լենինականցիները, սրբությամբ պահպանելով հայ ժողովրդի արժանավոր զավակներ, համաքաղաքացիներ Ա. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի, Ա. Տիգրանյանի և մյուսների հայրենասիրական լավագույն ավանդույթները, ջանք չեն խնայում հարազատ քաղաքի պատվի բարձրացման, նրա ծաղկման ու բարգավաճման համար։

Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

ՆԿԱՐԻՉ ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի կերպարվեստի աշխատողների բաղմանդամ ընտանիքը ավելացավ մեկ ցայտուն դեմքով ևս, հանձին նկարիչ Գևորգ Գրիգորյանի, որը վերջերս Թբիլիսիից տեղափոխվել ու մշտական բնակություն է հաստատել Երևանում։

Ստեղծագործական երկար և դժվարին ուղի է անցել այս արվեստագետը, որը նկարչական շրջանակներում հայտնի է նաև Ջիոտտո մականունով։ Միշտ չէ, որ կյանքը ժպտացել է նրան։ Նրա ստեղծագործական ուղղությունը, արտահայտչական ձևերը, մանավանդ թեմայի վերարտադրման եղանակը շատ հաճախ տեղի են տվել տարակարծությունների իր իսկ արվեստակիցների շրջանում, լինի դա Մոսկվայում, Թբիլիսիում, թե Երևանում։

Նրա կտավների առաջ երբեմն բախվել են մեկը մյուսին ժխտող տարբեր կարծիքներ ու տեսակետներ, ոչ սակավ թելադրված ստեղծագործական նեղմտությունից։ Սակայն ամեն անգամ, կամ գրեթե միշտ հաղթող է հանդիսացել իսկական ռեալիստական արվեստը, որն այնքան ինքնատիպ է Գ. Գրիգորյանի մոտ ու վկայում է նրա անժխտելի բաղմակողմանի շնորհքի մասին։

Գևորգ Գրիգորյանը ծնվել է Թբիլիսիում 1898 թվականին, չքավոր ընտանիքում։ Ունեցել է դառն և ընչազուրկ մանկություն։

Սալաթ-Նովա

Կարիքն ու զրկանքը անբաժան են եղել վտիտ մանկանից։ Օրվա ապրուստը հայթայթելու հոգսը միշտ ծանրացած է եղել նրա ուսերին դեռ վաղ մանկությունից։ Ինչով ասեք որ նա

չի զբաղվել, մի պատառ հաց վաստակելու համար։ Ու չնայած ծով կարիքին, սերը դեպի նկարչությունը և բնական ձիրքը նրան անկոտրում կերպով մղել են դեպի նպատակը, դեպի նկարչությունը։

Ինչպես հաճախ նման դեպքերում, գտնվել են բարի մարդիկ, որոնք տեսնելով դեռատի պատանու շնորհքն ու ձգտումը, օգնության ձեռք են մեկնել նրան, աշակցել են ընտրելու ճիշտ ուղին դեպի արվեստը։

Պատանի Գ. Գրիգորյանը իր նկարչական կրթությունը նախ ստացել է Թբիլիսիում, ապա 1921—1924 թվականներին շարունակել է Մոսկվայում, ժամանակի նշանավոր նկարչական դպրոցներից մեկում։ Դպրոցից դուրս նա սերտորեն շփվում է Մոսկվայի նկարչական կյանքին, ծանոթանում այն ժամանակ գոյություն ունեցող հոսանքներին, ուշի ուշով հետևում Սովետական Միության մեծ մայրաքաղաքի անցուդարձին արվեստի բնագավառում։ Հարկավ, այդ ամենը օգնում է երիտասարդ նկարչին կազմավորվելու, ձեռք բերելու իր տեսակետը արվեստի վերաբերյալ, մշակելու իր հետագա ուղղությունը։ Դա մի շրջան էր, երբ ծնունդ էր առնում նոր, հեղափոխական, սոցիալիստական, իսկական ռեալիստական արվեստը։ Ու մեր նկարիչը անվերապահորեն հարում է այդ նոր արվեստին և ընտրում ռեալիզմի ուղին, որով և շարունակում է ընթանալ իր ստեղծագործական կյանքի ընթացքում։

Վերադառնալով Մոսկվայից, Գ. Գրիգորյանը ամբողջովին նվիրվում է իր սիրած արվեստին և միաժամանակ զբաղվում մանկավարժությամբ, երկար տարիների ընթացքում ստանձնելով նկարչության դասեր Թբիլիսիի տարբեր հայկական դպրոցներում։

Հավանաբար սխալված չենք լինի եթե ասենք, որ Գրիգորյան—Ջիոտտոյի շուրջ 40-ամյա նկարչական գործունեության ընթացքում բնորոշ է եղել մի գիծ՝ ստեղծագործական որոնումներ։ Արվեստագետի անհանգիստ խառնվածքը միշտ թելադրել է նրան փնտռել նոր ձևեր, նոր գույներ, արտահայտչական նոր եղանակներ։

Անվերապահ ձիրքն ու շնորհքը, անխոնջ, եռանդուն աշխատանքը միաձուլվելով այս արվեստագետի մեջ, տվել են փայլուն արդյունքներ։ Մենք ունենք տաղանդավոր մի նկարիչ, խորապես ինքնատիպ, նկարչական ցայտուն ինքնուրույնությամբ և ոճով։

Դիտեցեք ուշի ուշով նրա կտավները՝ դիմանկարները, նատյուրմորտները, հին Թբիլիսին պատկերող գործերը և կհամոզվեք, որ գործ ունեք նկարչական արվեստի ակնհայտ վարպետի հետ։ Մի ուրույն, գրավիչ և տրամադրող բան կա այդ կտավների մեջ, դեմքերն ու երևույթները սեփական տեսանկյունով վերարտադրելու անժխտելի հմտություն։

Իր կյանքի աշունը թևակոխած մարդ է Գ. Գրիգորյանը։ Նա անցել է ստեղծագործական երկար ու բեղմնավոր ուղի։ Սակայն տակավին կայտառ է նա, լիցքավորված ստեղծագործական եռանդով, պատրաստ իր կարողությունները ի սպաս դնելու հայրենի արվեստի հետագա զարգացման։

Ցանկանանք բազմավաստակ և անխոնջ նկարչին ստեղծագործական նորանոր հաջողություններ հայրենի հողի վրա։

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

5. ՀԱՅ ԽՃԱՆԿԱՐԸ ՊՈԼՍՈ ՄԵՋ

Մանրամասնություններ կպակսին մեկի այն մասին, թե ո՞ւր ղեսեղվեցան Ջալալիներու 1597, 1606 և 1607 թվականներու ասպատակությանց առջևն Պոլիս խուժող հայ բազմությունները։ Գիտենք միայն, որ անոնք բազմապատկեցին հայոց թիվը Պոլսո մեջ և ստվարացուցին «Ալթը ջեմաաթ»-ները, տարածվելով մայրաքաղաքին լայնքին ու երկայնքին, մինչդեռ առաջ անոնք համախմբված էին Ս. Գևորգ և Ս. Նիկողայոս եկեղեցիներուն շուրջ, Սամաթիո և Էդիրնեքափուի մեջ, ու մասամբ ալ Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցվո շրջակաները։

Դարանաղեցի երբ Պոլիս կհասնի Ղրիմի ճամբով, Գարակյոմրյուկ թաղին մեջ զետեղված կգտնե իր հայրենակիցներեն շատերը, որոնք իրմե առաջ ժամանած էին. «Սոքա ամենեքեան ի հայրենկացն, ի լայն և ընդարձակ յարկացն, և եկեալ նժդեհութեամբ ի նեղ տեղի, և ի նեղ յարկաց բնակելով, սակայն ամբողջ զերծեալք ամենայն ընտանեօք իւրեանց ի սովոյ սաստկութենէ, ի գաղանակերութենէ, և ի մարդակերպ Ջալալոց գազանաց ժանեացն զերծելոցն, ի միասին լինելով՝ խնամօք ողորմութեան Աստուծոյ յանդորրութիւն գտեալք»[287]։

«Մինչև ԺԶ դարուն երկրորդ կեսը և ԺԷ դարուն սկիզբը,— կգրե հայ բանասեր մը,— Կ. Պոլսո մեջ Սամաթիայե և Էդիրնեքափուի շրջանակեն դուրս հայ բնակչություն գրեթե չկար կամ շատ ցանցառ էր։ ԺԶ դարու վերջերը և ԺԷ դարուն սկիզբը ամբողջ Անադոլուն տակնուվրա եղավ և բնակչության մեկ կարևոր մասը երկիրը ավերող հելուզակային արշավներեն զերծ մնալու համար գաղթեց մայրաքաղաք կամ անոր մոտերը։ Մասնավորապես Ջալալիներու ապստամբության հետևանոք Կ. Պոլիս և շրջակայքը ապաստանող հայոց մասին մանրամասն տեղեկություններ կուտա իր Ժամանակագրության մեջ Գրիգոր վարդապետ Դարանաղեցին, որուն գրածներեն կհասկցվի, թե Անադոլուի զանազան մասերեն գաղթող հայերեն մեծ մաս մը տեղավորված է Կ. Պոլսո հայոց առաջին կայանը հանդիսացող Էդիրնեքափուի մոտերը, և մասնավորապես Թոփքափուի ներսը և դուրսը և մաս մըն ալ Խասգյուղի բարձունքը։ Իսկ ստվար թիվով հայեր ալ հաստատված են Գումքափուի մեջ, մինչև Լանկա, և Ենիքափուի դուռը, և ուրիշ խումբ մը Սկյուդար, և Վոսփորի վրա քանի մը վայրեր»[288]։

Բռնագաղթն ու խուճապահար փախուստը չէին միայն, որ Պոլիսը ողողեցին գավառով, ու հայության նոր դիմագիծ ստեղծեցին հոն։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № № Թ-ից, ԺՌ-ից և 1963 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից և Ե-ից։

287 Դարանաղեցի, «Ժամանակագրութիւն», էջ 71։

288 Արշակ Ալպոյաճյան, «Պայքար թաղի կազմությունը...», էջ 173։

Ժէ դարուն սկիզբը Թուրքիան ալեկոծող այդ դեպքերեն հետո ալ գավառեն վտակներ շարունակած են հոսիլ դեպի մայրաքաղաք։

Արդարև, բացի բռնագրքերեն և հալածանքներեն, պանդխտութիւան շարժառիթ եղան նաև կյանքի դժվարութիւնները գավառական շրջաններու մեջ, աշխատանքի պակասը տեղվուն վրա, տուրքերու զարհուրելի բեռը, կեղեքումները տեղական հարստահարիչներու կողմե, վաշխառուներու անհագ մոլուցքը և անոնց պարտադրած ահավոր տոկոսները և այլն։

Սիմեոն Լեհացի, որ Ժէ դարուն սկիզբը ատեն մը ապրած է Պոլիս և անցած է նաև Թուրքիո գավառներեն, որևէ մեկեն ավելի ի վիճակի էր բազդատելու մարդոց կենցաղը այս գարուն, գավառի մեջ ու Պոլիս։

«Ի ստամպօլ սակաւ մի ունին մխիթարութիւն քրիստոնեայք և վայելչութիւն, զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբութիւն ձայնիւ. հեծնուն ձի և ջորի, հագանին նուզչայ, եթ-միշչայ լուխայ. ուտեն, ըմպեն, ուրախ լինին. ունին մեծամեծ տունս, էգիս և դրախտս և այլն, զոր յԱնատոլին բնաւ զայս ոչ երևի. այլ տներն ախոռի նման, և չալուտվ, ցած. իսկ ի քաղաքսն քարբիչով, դռվին փոքր և խորափտիտ, խաւարչտին։ Եւ յայնմ ամի (1613), յորում ես էի Թոխաթ, ել հրաման չար, թէ եկեղեցիս և վանորայս մի վառեսցեն մոմեղէն ճրագ, այլ եղէ. և թէ ուրեք գտանէին՝ տուգանէին։ Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռքս տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, տուգնեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն. և թէ տասն որդի ունիցի ոք, ամէնքն խարաճ առնուն. և թէ հեռանայ, դարձեալ առնուն։ Եւ Ստամպօլայ դաւառօք ձի, ջորի հեծնուն. և անտի Սեբաստ մինչ յԱմիթ էշ և ուղտ. իսկ Սեբաստուին տան էշ ալ տէկմա չէրևի, ամէնն եզ կու բանեցնեն, աղ և բեռն բեռնած, այլև հեծնան»[286]։

Դիտելի է, որ Պոլսո մեջ հայ կորիզներ նվազ էին գլխավորապես այն շրջաններեն, ուր համեմատաբար ավելի տանելի էր կյանքը, և ուր մանավանդ առևտրական գործունեութիւն կար։ Եվ առաջին հերթին ծովեզերքներեն։ Իզմիրցիները կնախընտրեին Իզմիր մնալ և այցելութեամբ միայն կուգային Պոլիս։ Սև ծովու և Միջերկրականի եզերքներեն ևս Պոլիս համախմբվողներ սակավ էին։

Էվլիա Չելեբի, Ժէ դարու Թուրք հեղինակը, որ իր ուղեգրութեանց շարքին առաջին հատորը գրեթե ամբողջութեամբ նվիրած է Պոլսո և որուն թիվերուն կարելի չէ սակայն հավատք ընծայել, նույն դարու երկրորդ կեսին 9990 իսլամ թաղեր ցույց կուտա Պոլսո մեջ, 304 հույն, 657 հրեա, 17 ֆրենկ և 27 հայ[290]։

Ըստ Էվլիա Չելեբիի, Ղալաթիո մեջ 18 իսլամ թաղ կար, 70 հունական, 3 ֆրենկ, 1 հրեա և 2 հայկական։ Տեղվույն բնակչութիւնը, սուլթան Մուրադի օրով կատարված մարդահամարին համաձայն, 200 000 գյավուրե և 60 000 իսլամե կբաղկանար։ Յոթանասունի չափ եկեղեցիներ կային հոն[291]։

Քաղաքին նույն մասին մեջ հայերը, ըստ Չելեբիի, 3 եկեղեցի ունեին, հրեաները՝ 2 սինագոգ[292]։

Զանազան շրջաններեն խուժող այս հայերը Պոլիսը խճանկար մը կդարձնեին տակավ։ Եվ այդ խճանկարին մեջ հաճախ կարելի էր զանազանել ամեն մեկ խիճն ու գույները։ Ամեն գավառ արդարև իր երանգը կրբերեր, իր բարքերեն նմուշներ, հաճախ և իր տարազները, խոսակցական տարբեր շեշտն ու հնչումը, ու նաև հետքեր իր բարքառեն։

Պոլիս երկար ատեն պահպանեց իր խճանկարը, թեև այդ խճանկարը կազմող զանազան ու զարմանազան խիճերը փոփոխութիւն կրեցին հաճախ։ ԺԸ դարու սկիզբը, «Կոլոտի ատեն, հայութիւնը երեք դարու կյանք մ'ուներ դեռ օսմանյան մայրաքաղաքին մեջ։ Ներքին գավառներու ներկայացուցիչ ընտանիքներ կկազմեին այդ հայութիւնը իրենց զատ ըմբռնումներով և ավանդութիւններով. հասարակաց միութեան, նուիրութեան կապը Հայաստանյայց եկեղեցին էր միայն։ Սերունդներ անցած էին և պետք էին անցնիլ, որպեսզի Պոլիս ալ ունենար իր ինքնութիւնը, իր նկարագիրը իբր մեծ կեդրոն մը հայութեան համար»[293]։

Պոլսո խճանկարը այլապես ալ շահեկան էր։ Ամեն գավառ զգալի էր հոն։ Պոլսո զանազան թաղերուն մեջ խումբ-խումբ եղած կապրեին զանազան գավառներեն եկող հայերը։ Գավառները կզանազանվեին իրենց արհեստներով ալ։ Մինչև մեր օրերուն ալ Պոլսո մեջ կիրարկվող արհեստներեն շատերը զանազան գավառներու սեփականութիւնը մնացին։

Պոլսո թաղերեն ոմանք ևս հայ արհեստավորներու ուրույն դաս մը ունեին։

Հիշենք, օրինակ, թէ Խասգյուղի հայերը մեծ մասամբ կղմինդրագործ էին։ «Մեր ա-

---

[286] Սիմեոն Լեհացի. «Ուղեգրութիւն», էջ 193—194։

[290] Էվլիա Չելեբի. «Սիյահաթնամէ», Ա, էջ 510։

[291] Անդ, էջ 481։

[292] Անդ, էջ 482։

[293] Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան. «Կոլոտ Հովհաննես պատրիարք», Վիեննա, 1904, էջ 99։

կընցիքն,—կգրե Դարանաղեցին,—որ ի խաս-գեղն կու լինին և քիրամտագործք ենն»[294]։

Սարգիս դպիր Սարաֆ-Հովհաննեսյան, իր Կոստանդնուպոլսո տեղագրության մեջ, խոսելով Այվանսարայի մասին, կըսե. «Անդ կազմեն բրուտք դպէսպէս անօթս խեցեղէնս, և թրծեն ի փոան, որք ըստ մեծի մասին՝ են ադգէս Հայոցն»[295]։

Երեմիա Չելեպի Պոլսո թաղերուն մեջ իր կատարած պտույտին առթիվ էյուպի մասին կդրե.

«Անդ սահմանօքս շատ են՝

Պօստան՝ ուր պուլղար և հայ պարտիզպանն»։

6. ՊՈԼՍՈ ՄԵՋ ՀԱՅ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ցորս հայ եկեղեցիներ միայն ուներ Պոլիսը Ֆաթիհի դարուն։ Հաջորդ երկու դարերուն պիտի աճեր սակայն անոնց թիվը սուլթաններու մայրաքաղաքին մեջ, հայ բնակչության աճման հետ զուգընթաց։ Այնպես, որ ժէ դարուն Պոլսո հայերը եկեղեցիներու և աղոթատեղիներու բավարար թիվ մը ունեին զանազան թաղերու մեջ։

Սիմեոն Լեհացի, երբ 1608-ին կհասնի Պոլիս, հայոց պատկանող հինգ եկեղեցի կգտնե. «Եւ կայր Ստամպոլ հինգ եկեղեցի Հայոց. ի Վլանկայ երեք, այսինքն Սուրբ Նիկողայոս, Սուրբ Աստուածածին և Սուրբ Սարգիս. ի Պալատն մէկ. և ի Սուլտանասարն մէկ, Սուրբ Գէորգ անուն։ Եւ կայր յորս հինգ վարդապետ. երեք եպիսկոպոս, հարիւր քահանայ կայ այլ աւելի. թող զաբեղայսն»[296]։

Սիմեոն Լեհացի կակնարկե հավանաբար միայն Պոլսո կողմը գտնված եկեղեցիներուն, որովհետև Գալաթիո եկեղեցվո մասին կգրե այլուր, թե Պոլսո հանդիպակաց եզերքին վրա, Գալաթիո թաղին մեջ, կան «21 եկեղեցի, 10 հոռմի և 10 ֆռանկի, և մին հայի՝ ապա յոյժ գեղեցիկ վիմաշէն և կամարակապ Ս. Լուսաւորիչ անուն»[297]։

Կոստանդնուպոլսո տեղագրության նվիրված և 1632-ին Հոլանդա տպված լատիներեն գրքի մը մեջ կըսվի նույնպես, որ ժէ դարուն սկիզբը Կոստանդնուպոլսո հայերը վեց եկեղեցի միայն ունեին[298]։ Բժիշկ Վ. Թորգոմյան, ըսելե հետո, թե հեղինակը հավանաբար կակնարկեր Քումքափուի Ս. Աստվածածին, Հիսար-դիպիի Ս. Սարգիս, Նշանճըի Ս. Նիկողոս, Սամաթիո Ս. Գեորգ, Պալաթու Ս. Հրեշտակապետ և Գալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցիներու, կավելցնե, թե Երեմիա Չելեպի հայ եկեղեցիներ կհիշե նաև Բեշիկթաշ, Սկյուդար և այլուր, որոնք 1632-ին և ավելի առաջ ալ գոյություն ունեին[299], և որոնք սակայն հավանաբար պարզ աղոթատեղիներ էին կամ, Չելեպիի բառով՝ ժամատուն։

Ժէ դարուն Պոլսո մեջ հիշատակված այս հայ եկեղեցիներեն երկուքը հինեն ծանոթ են մեզի. առոնք Գալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչը և Սամաթիո Ս. Գեորգն են։ Հին եկեղեցիներեն մեկ քանին արդեն չկան այս դարուն, ինչպես Պալաթի Ս. Հրեշտակապետը, զոր թուրքերը մզկիթի վերածեցին 1627-ին։

Փոխարեն՝ նոր եկեղեցիներ պիտի ունենային հայերը այդ դարուն՝ Պալաթի Ս. Հրեշտակապետը, Ս. Սարգիսը, Հիսարդիրի թաղին մեջ, Քումքափուի Ս. Աստվածածինը, և Ս. Կարապետը Սկյուդարի կողմը, առանց թվելու զանազան թաղերու մեջ կառուցված փոքր աղոթատեղիները։

Առաջին եկեղեցին, զոր ժէ դարը պարգևեց Պոլսո՝ Պալաթի Ս. Հրեշտակապետն է։ Ինչպես տեսանք նախընթաց գլուխի մը մեջ, Ս. Նիկողայոսը, որ իբրև աղոթատեղի կծառայեր նույն թաղի հայերուն նույնիսկ Ֆաթիհի օրեն, 1627-ին խլվեցավ և վերածվեցավ մզկիթի։

Ժամանակակից աղբյուրներ բարեբախտաբար հասած են մեզի Ս. Հրեշտակապետ եկեղեցվո շինության պարագաներուն շուրջ։ Առաջինը այդ աղբյուրներեն Դարանաղեցին է, որ ոչ միայն Պոլիս է գտնված այդ պահուն, այլև աջակցած եկեղեցվո շինության։ Դարանաղեցին Կաֆայեն Պոլիս էր ժամանած 1604-ին Ջալալիներու սարսափներուն առջևեն փախչող իր հոտին գալ միանալու համար և իր օրերը կանցներ կաֆայեցիներու թաղին մեջ, Ս. Նիկողայոս եկեղեցվո մեկ խուցը, ուր պիտի բնակեր նաև ավելի հետո, երբ զանազան վայրեր ման դալե ետք, Պոլիս պիտի դառնար 1612-ին, ինչպես և 1621—1623 տարիներուն՝ երբ մաս կառներ ինքն ալ Պատրիարքական Աթոռին շուրջ մղված պայքարներուն մեջ, և վերջապես դարձյալ նույն թաղը պիտի մնար ատեն մը 1627-ին, երբ կնորոգվեր Ս. Հրեշտակապետ եկեղեցին, Ս. Նիկողայոսը մզկիթի վերածվելե հետո։ Արդ, Պալաթու այս տաղին հետ իր ունեցած զանազան շփումները մղած են զինքը իր ժամանակագրության մեջ լայն տեղ տալու այս երկու եկեղեցիներու հետ կապված անցքերուն։

---

294 Դարանաղեցի, էջ 190։

295 Բժիշկ Վ. Թորգոմյան, «Պատմություն Ստամպոլյոյ», Բ, էջ 419։

296 Սիմեոն Լեհացի, «Ուղեգրություն», էջ 7—8։

297 Անդ, էջ 25։

298 P. Cyllì, «De Constantinopoléos topographia.», Lugduni Batavarum, 1633, p. 33.

299 Դոկտ. Վ. Թորգոմյան, «Երեմիա Չելեպի...», Բ, էջ 486։

Պալաթի թաղին մեջ պատահած զգայացումց դեպքերուն համար ոչ նվազ վավերական աղբյուր է ձեռագիր այն գրքույկը, որ կպահվի Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցվո մեջ և որ հետևյալ վերնագիրը կկրե. «Պատմութիւն յաղագս առնոյն տաճկաց զՍ. Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց Հայոց և տալոյն՝ զկնի միոյ տարւոյ, զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին, փոխանակ նորինն։ Այս գրքույկը էջմիածին գտնվող ձեռագրե մը քաղվածք մըն է, զոր կատարած է 1811-ին Պալաթի Մելքոն քահանան. «ի ՌՄԿ թուականիս մերոյ գնացեալ ոմն յեկեղեցական եղբարց ի Մայր Աթոռն մեր, ի Ս. Էջմիածին, և անդ ի գրքատանն տեսեալ ի մէջ գրքի միոջ, որ է Լուծմունք Յոբայ և Մեկնութիւն Յայտնութեան յԱնդրէաս եպիսկոպոսէ և Մեկնութիւն էր ընդ եղբարս ի Լամբրոնացւոյն, երեքն միասին կազմեալ, յորմէ անտի օրինակեալ՝ երեր ի Կոստանդնուպոլիս։ Եւ ի նոյն գաղափարէն սա օրինակեցաւ։

Առաջին մասը այս ձեռագիր գրքույկին, որմե կօգտվի Պալաթի եկեղեցվո նվիրված մենագրության հեղինակը[300], Ս. Նիկողայոսի գրավման պատմությունն է և այսպես կսկսի. «Ի ժամանակս իշխանութեան տաճկաց չորրորդ սուլթան Մուրադին, որ էր Փրկչական թիւն 1627, և մերս ՌՀՂ, և հիճրէթի 1036, էր եկեղեցի մի Հայոց յԸստամպոլ՝ մերձ ի յէտրէնէ դուռն ի թաղն Կաֆայու (ըստ տաճկաց Քէֆէյու) և անուն նորա Սուրբ Նիկողայոս։ Եւ եղև շարանալ և ի նախանձ շարժիլ ոմանց տեսանելով զերթալն քրիստոնէից ի ժամ աղօթից, մեծաւ խմբիւ, զարս և զկանայս, զծերս և զտղայս։ Եւ ոմն ի մեծաց մութպախ էմինի Օսման աղա անուն, կամեցեալ վրէժխնդիր լինել՝ ասէ. ի մեր մէջն այսչափ համարձակութիւն շատ է քրիստոնէական միլլէթին. և համախոհ գտեալ զոմն, որոյ անունն Հավրուզճի (Հօրոզճի) Ջավուշ, և դեռ զայլս ժողովեալ ի մի վայր, խորհուրդ արարին, թէ որով հնարիւ խափանումն արասցեն եկեղեցւոյն. զի ի պատճառ այս ցրուեսցին քրիստոնեայքն»[301]։ Գրքույկը կպատմե հետո պարագաները, որոնց մեջ խլվեցավ հայերեն Ս. Նիկողայոսը և վերածվեցավ մզկիթի։

Մելքոն քահանա իր ընդօրինակած գրքույկին շարունակության մեջ կպատմե ասկիզբն ստանալոյն ազգիս Հայոց Ս. Հրեշտակապետ եկեղեցին Պալաթու, ի յունադի Եօրկիլէ, եղև ի թուին Հայոց ՌՀԶ (1627) և հիճրէթի 1037, ի ժամանակս թագաւորութեան Դ.րդ Սուլթանին Մուրատ արքայի, որդւոյ՝ Սուլթան Ահմէտի, Զէյէպի կոչեցելոյ։ Եւ ի հայրապետութեան Սրբոյ Գահին էջմիածնի, Տեառն Խաչատուր Դ.րդ սրբազան կաթողիկոսի։ Եւ ի պատրիարքութեան Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի՝ Տեառն Դաւթի Բ.ի։ Եւ ի պատրիարքութեան մեծի Պոլսոյս, Տեառն Զաքարիայ առաջնոյ, զոր շինեալ վայելեցին ամս 64»։ Կհետևի նկարագրությունը հրդեհին, որ պատահեցաւ 1691 սեպտեմբեր 28-ին, հրոճարակ ընելով Ս. Հրեշտակապետը, եկեղեցվո վերաշինության, 1729-ին պատահած երկրորդ հրդեհին և անոր հետևող երկրորդ վերաշինության[302]։

Այն պարագան, որ Ս. Հրեշտակապետ եկեղեցվո տիրացման անցքերը պատմող անանուն հեղինակը, որ շարադրած է սկզբնական ձեռագիրը, սուլթանին կողմե հայոց տրված ֆերմանին պատճենը ևս մեջ կբերե և կաղոթե բարյացակամ սուլթանին արեշատության համար, տարակույս չի թողուր, որ դեպքերուն ժամանակակից մըն էր ան։ «Թագավորին աթոռին հաստատությանը և անոր կյանքին՝ ամեն փորձանքե պահպանելուն և թշնամյացը վրա հղոր ընելու մաղթանքը ցույց կուտա, որ սոյն պատմագիրն ալ, Դարանաղցվույն պես, ժամանակակից կղերական մ'է, և անկից ավելի իրազեկ՝ Ս. Հրեշտակապետի և Ս. Նիկողայոսի բոլոր անցքերուն և դեպքերուն»[303]։

Ձեռագրերու տրցակի մը մեջ, որ կգտնվի Վիեննայի Մխիթարյանց մոտ և զոր «Հատակոտորք» խորագրով կցուցակագրե Տաշյան, քանի մը թուղթեր կան, որ կներկայացնեն «Պատմութիւն յաղագս առնոյ տաճկաց զՍ. Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց Հայոց և տալոյն զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին։ Ի ժամանակս իշխանութեան տաճկաց չորրորդ սուլթան Մուրատին, որ էր Փրկչական թիւն 1627» (թուղթ 5ա)։

«Այլ եւ պատմութիւն յայլմէ վասն նոյնոյ սուրբ եկեղեցւոյ։ Գրիգոր վարդապետ ոմն, որ կոչիւր Պարոն Տէր, որ յետոյ եղեալ է պատրիարգ Սրբոյ Երուսաղէմի՝ յամի Տեառն 1631, զամենայն անցսն իւր և զտեսեալն վասն Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն, տետրակ մի է շարադրեալ, որ գրէ այսպէս. ի թուին Հայոց ՌՀԶ (=1627) յորժամ մեծաւ տաժանմամբ դարձաք յԵրուսաղէմէ և հասաք ի Կոստանդնուպոլիս...» (թուղթ 10)[304]։

Այս ձեռագրին հեղինակը շփոթած է մեր Դարանաղեցին Երուսաղեմի Գրիգոր Պարոն Տեր պատրիարքին հետ։ Պարոն Տեր տիտղո-

[300] Միլիոն-Առատուր, «Երեքդարյան հոբելյան Ս. Հրեշտակապետ եկեղեցվո, 1627—1931», Կ. Պոլիս, 1931։

[301] Անդ, էջ 44։

[302] Անդ, էջ 102—103։

[303] Անդ, էջ 55։

[304] Հ. Հ. Տոշյան, Մայր ցուցակ...», էջ 913։

սը, զոր իրեն կուտա Դարանաղեցին, շվարեցուցած է նաև ուրիշները։ Հրանտ Ասատուր, օրինակ, խոսելով Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցվո նորոգության մասնակցող Գրիգոր վարդապետին մասին, որ պարզապես Դարանաղեցին էր, կըսե, թե «Գրիգոր Պարոն Տեր, Երուսաղեմի այդ նշանավոր պատրիարքը, քիչ ետքը իր պաշտոնատեղին վերադարձավ, վճարեց Ս. Հակոբա վանքին պարտքերը և նոր շինություններ ու նորոգություններ ըրավ հոն (+1645)[305]։ Իրականին մեջ Գրիգոր Պարոն Տեր Դարանաղեցին, Ս. Հրեշտակապետը նորոգելե հետո, կմեկնի Ռոդոստո, զոր կհովվե մինչև իր մահը՝ 1643։

Վիեննայի Մխիթարյաններու մոտ պահված այս «Հատակոտորք»-ը կպարունակե ինչ որ կպատմեն Մելքոն քահանայի ընդօրինակած ձեռագրին մեջ հիշատակվող անցքերը, իսկ իր շարունակության մեջ՝ ինչ որ մեզ ծանոթ է Դարանաղեցիի ժամանակագրությենեն։ Իր հիշատակած Գրիգոր վարդապետ Պարոն Տերը, ինչպես ըսինք, նույնինքն Դարանաղեցին է, որ հաճախ այդ տիտղոսը տված է իրեն իր ժամանակագրության մեջ։

Անցնինք Ս. Հրեշտակապետի գնման և նորոգության պարագաներուն։

Երբ Պալաթի հայերը 1627-ին կորսնցուցին Ս. Նիկողայոսը, ամբողջ ուժը ամիս առանց աղոթատեղիի մնացին, և անոնցմե շատերը, ստիպված, սկսան ցրվիլ հեռակա թաղեր[306], և անկեալ ի բաղում դրունս մեծամեծաց,— կըսե Դարանաղեցին,— զի հնարս գտցեն յայլ տեղի, նորոգելոյ զայլ եկեղեցիս, և ոչ եղև հնարս,— մինչև որ,— ազգութեամբն Աստուծոյ, ինքեանք իւրեանց մէջն միաբանութիւն առնելով՝ մէկ խափան եկեղեցի մի դտնուն Հռոմի, Հրեշտակապետ անուամբ, ի Պալաթու դրան ներքոյ, իբրև կէս մղոնաւ հեռի, ի խաւարչուտ տեղի մի, ի մէջ Հրէից։ Եւ կու ջանան առնուլ։ Բայց նա մեծածախս գանձիւք հապիւ լինելոց էր։ Բարեբախտաբար այդ պահուն Բրուսայեն Պոլիս կհասնի խարբերդցի Արիստակես վարդապետը, գլուխ կկանգնի անոնց, և զայտ դրամ և արծաթ ժողովեալ, յետ այնորիկ դիմէ առ վէզիրն, և մեծամեծան արքունեացն, մինչև որ մեծ-վեզիր Ռեշեր փաշան արքունական հրամանագիր կուտա հայոց, և երեք չավուշներ ալ ընկերացնելով անոնց, բանալ կուտա եկեղեցին ի հեծուկս հույներուն, և զայն հանձնել կուտա հայոց։ Կորտմին սակայն հայերը զվասն փոքրկութեան և խաւարչուտ գոլոյն, և հնարս որոնեն թէ զիա՞րդ, կամ ո՞րպէս կարասցեն առնուլ զհրաման վասն նորոգութեան՝ քանզի խախտեալ էր ի հիմանէնն։ Եվ սակայն ամենաւ ջանիւ, և բաղում ծախիւք, բայց մանավանդ շնորհիվ դիվրիկցի Պոլպոլճի Աստվածատուր աղայի ջանքերուն, կհաջողին ստանալ արքունական հրամանը Ս. Հրեշտակապետ եկեղեցվո նորոգության համար։

Ժամանակակից մյուս աղբյուրը ավելի մանրամասն է Ս. Հրեշտակապետի ստացման մասին. «Այս եկեղեցիս,— կգրե,— էր ումեմն Հռոմի, Եռոկի անուն, ի հայրենեաց մնացեալ։ Եւ սա պարտս ունէր կարգեալ, զոր տարուց տարի կու տայ եղեր սուլթան Մուհամմէտի ճամուն։ Եւ աղքատացեալ յընչից, ո՛չ էր կարացեր տալ ի բաղում ժամանակս, զայնքան պարտուն, սուլթան Մուհամմէտի մյութավելլուն։ Հայերը, լսելով այս պարագան, կհամաձայնին մյութավելլիին հետ, որպեսզի վճարեն հույնին պարտքը, պայմանով որ հույնը իր պարտքին փոխարեն եկեղեցին փոխանցե մյութավելլիին, և սա ալ՝ հայոց։ Այս բոլորը տեղի կունենային գաղտուկ, ազի մի՛ գիտասցին գիտորհուրդս Հայոց նախանձոտ ազգն Հոռոմոց, և ոչ տացեն զեկեղեցին առ պարտուցն փոխարէն։ Քանզի, թէ զայս խորհուրդս գիտացեալ էին Հոռոմք, զամենայն ինչս իւրեանց վաճառէին, և ոչ տային թոյլ՝ տալոյ եկեղեցին Հայոց։ Եւ այսմ պատճառաւ, եկ եկեղեցին ի ձեռացն Հոռոմոց, և մնաց առ մութէվէլլին։ Իսկ Աստուածասէր արք ոմանք, յազգէս մերմէ, որ վառեալ էին ի սէրն աստուծային, գնացեալ առ մութէվէլլին, և զոր ինչ խոստացեալ էին, ետուն։ Եւ զայն, յետ մնացեալ պարտսն, որ հոռոմն պարտ էր, զայն ևս ետուն, և զկամս մութէվէլլուն հաճեցուցին ըստ բաւականին։ Եւ նա առեալ զՀայքս, տարաւ առ Բէճէպ փաշայն, որ վէզիր էր յայնմ ժամանակին, և մի ըստ միոջէ պատմեաց նմա զեղեալսն ամենայն։ Եւ նորա հաւանեալ եղելոց իրացն, արզ արար թագաւորին։ Եւ նորա ևս հաւանեալ, հաճոյ թուեցաւ բանն, և հատտի շէրիֆ տուեալ, շնորհեաց զՍ. Հրեշտակապետ եկեղեցին ազգիս Հայոց, զորոյ աթոռն հաստատ պահեսցէ Քրիստոս Աստուած մեր, և զինքն անփորձ պահեսցէ ի չարէն, և ի վերայ թշնամեացն զօրաւորս արասցէ. ամէն»[307]։

Հայերը կհաջողին ամբողջական մատնել հույներու հետագա փորձերը ևս, և վերջնականապես տեր կմնան Ս. Հրեշտակապետին։

Չէր բավեր սակայն տեր դառնալ խարխուլ եկեղեցվո մը շենքին։ Պետք էր հիմնապես նորոգել զայն, որովհետև «եկեղեցին լցեալ էր աղբիւք, և ծովային ծծմունքով, զոր ոչ ոք կարաց աղօթս առնել, որ ի մէկ շաբաթ հազիւ սրբեալ մաքրեցաւ։ Իսկ և աւերմանն նորոգե-

[305] Հրանտ Ասատուր, «Պոլսո հայերն ու իրենց պատրիարքները», էջ 93։

[306] Մելքոն-Ասատուր, հիշված աշխատությունը, էջ 61։

[307] Անդ, էջ 66։

լոյ վասն. խնդրեցին ֆէթվա և էմր, և զայն ևս շնորհեցին։

Նորոգութիւնը գլուխ կելլէ հսկողութեանը տակ խարբերդցի Արիստակես վարդապետի, զոր Պալաթի հայերը կանչեցին Բրուսայեն, և երկու հայ խալֆաներու՝ Մուսայի և Խալերի ջանքերով, որոնք ամբողջ յոթը ամիս, փետրվարեն մինչև օգոստոս, կտքնին ավարտելու համար այդ նորոգութիւնը։ Այս նորոգութեան զորավիդ կըլլան եկեղեցվո քահանաները, թվով տասը, և կարևոր թիվ մը հայ խոջաներու և մահտեսիներու հականէ հանվանէ հիշված քրոնիկագրին կողմէ, ինչպես և անոնց բազմաթիվ օգնականներուն, «զորոց անուանսն ինքն գիտէ Աստուածն»։

Եկեղեցին, հազիվ նորոգված, ճարակ կըլլա հրդեհի, երբ արդեն Բրուսա իր պաշտոնատեղին մեկնած էր Խարբերդցին։ Այս անգամ Դարանաղեցին է, որ գլուխ կկանգնի շինութեան աշխատանքներուն։ Ան նոր վերադարձած էր Երուսաղեմեն, երբ նորոգութեան աշխատանքներն սկսած էին Աստվածատուր Խարբերդցիի հսկողութեան տակ, և աչակցած էր անոնց, ինչպես ինքն իսկ կպատմէ իր ժամանակագրութեան մեջ. «Յաւուրսն յայնոսիկ, և մեք եկաք հասաք յԵրուսաղէմէ... Ապա այնուհետև սկսաք յարդարել և քաջալերել զքահանայսն և ժողովուրդն ամենայն, առ ի շինութիւն եկեղեցւոյն... Յետոյ ես, անարժանս, և Արիստակէս վարդապետն, վերակացու լինելով նոցա, և օժանդակութիւն առնելով ըստ կարողութեան մերոյ, մինչև կատարեցաք, ըստ յաջողմանն Աստուծոյ, և օրհնեցաք, նալակատիս առնելով մեծամեծ տենիւք։ ... Եւ ի կատարման եկեղեցւոյն՝ եթող Արիստակէս վարդապետն և գնաց ի կողմանս Բիւթանիոյ...»։

Եւ ահա նորոգված սուրբ եկեղեցին զոհ կդառնա հրդեհի մը, մեկը այն աղետներեն, որոնք ստեպ հարվածած են Պոլիսը, սուգ ու ավեր սփռելով թաղե թաղ, և մոխրացնելով հաճախ նաև հայ եկեղեցիները. «Եւ յետ քանի աւուրց, հրայրեցութիւն եղև, որ տոչորեաց զամենայն թաղն, և զամենայն տունն Հրէից որ յոյժ կից էր և հուպ՝ եկեղեցւոյն։ Յորժամ որ հուրն անկաւ, նախ զնոցա շինուածքն մինչև-ի հիմն յստակեաց. որ մէկ շինող չեթող. որ յաւիտենից աւերակ դարձաւ տեղիքն, և եկեղեցւոյն շրջապատ շինուածքն այլ տրեցան, և վրայի քիրամիտն մաներ, խորտակեցան ի մարդկան ոտից, և զսեղանն կործանեցին, հայա լոկ առաստաղն զերծաւ՝ խախտեալ։ ... Նա մեք ի Դալաթիայ էաք, ընդ լուսանալն մարդ էին դրկել ի կոչել զմեզ անդ, ի հրայրեացն։ Եւ գնացաք կրկին քաջալերս տվաք ամենեցուն, վասն վերոյին նորոգելոյն զամենայն խախտեալքն, և տոչորեալքն հրոյնն»։

Դժվար էր այս երկրորդ նորոգութիւնը։ Հրդեհներուն պատճառով, որոնք վերջին օրերուն ճարակեր էին Պոլսո մեջ, անհունապես սղած էին շինանյութերը. «Մեկ քիրամիտին ոսկի մի տային, չէր հնար գնահատելոյ»։ Բարեբախտաբար Խասգյուղի կողմը աշխատող ակնցի քիրամիտագործները օգնության կհասնին, այնպես որ «երեք օրն տասներկու հազար քիրամիտ հաւաքեցաք, և ծածկեցաք զվերեն եկեղեցւոյն», ինչ որ սրտմտություն կպատճառե թուրքերուն, որոնք «ի նախանձ շարժեցան ասելով՝ դեռ մեր աւերակքն չենք կարացեր շինել, դուք զայդքան քիրամիտն և քարաստան (ատաղձը) ուսկի՞ց գտաք։ Ապա տարաւ դատաւորն զեկեղեցպան (Պոլպոլճի խոջա Աստվածատուրը), և գան եհարան»։

Դարանաղեցին թշնամանքին կրախի նաև քահանաներուն, որոնք հաշտ աչքով չեն դիտեր անոր ջանքերը ժողովուրդեն դրամ ժողվելու և ավարտելու եկեղեցվո բարեզարդությունը, ինչ որ պիտի ցամքեցներ իրենց հասույթի աղբյուրները։ Այնպես որ «մեք վիրաւորեալ սրտիւք, ելեալ գնացաք ի Դալաթիայ. արդ այսպիսի անվայելուչ բանիւք, վճարեցին փոխանակ երախտեաց մերոց»։

Քանիցս այրած ու քանիցս նորոգված Պալաթի Ս. Հրեշտակապետը ամբողջ երեք դար պիտի հանդիսանար մեկը Պոլսո ամենեն համբավավոր հայ եկեղեցիներեն, և իր շուրջը պիտի ծաղկեր, մանավանդ որոշ շրջաններու, մտավոր կյանք մը ևս, որուն առիթ պիտի ունենանք անդրադառնալու։

* *
*

Ժէ դարուն Պոլսո մեջ գոյություն ունեցող հայ եկեղեցիներեն մեկն էր Ս. Սարգիսը, Ենիքափուի մոտ, Հիսարդիբի թաղին մեջ։ Չի գիտցվիր, թե ե՞րբ է կառուցված այս եկեղեցին։ Ան կհիշատակվի առաջին անգամ 1576-ին, եկեղեցվո նորոգության հրովարտակին առթիվ, զոր շնորհած է սուլթան Մուրադ Գ-ը Սեֆեր անուն հայու մը խնդրանքով, և որ մինչև անցյալ դարուն կեսերը կպահվեր Սամաթիո հայ եկեղեցվո դիվաններուն մեջ[308]։ Հրովարտակներու մեջ ան ծանոթ է «Բիզուսալը քիլիսեսիա» անունով, որովհետև անոր շուրջն էին խմբված առավելապես Բրուսայեն բերված գաղթականները։ Ժէ դարուն սկիզբեն ան կդառնա Կոստանդնուպոլսո հայոց հոգևոր կեդրոններեն մեկը և նույնիսկ պահ մը պատրիարքանիստ։ Հոն կնստեր Գրիգոր Կեսարացի պատրիարքը Ժէ դարու

[308] «Հայաստան», 1849, թիվ 27։

սկիզբը[308]։ Ձեռագրերու հիշատակարաններեն գիտենք, որ ժէ դարու կեսերուն գրչագրեր ևս ընդօրինակված են անոր հովանիին տակ, ինչպես 1641-ին[310], 1648-ին[311] և 1649-ին[312]։

Ժամանակակից հիշատակարան մը, հիշելով 1652 ապրիլ 23-ի ադեստալի հրդեհը, որուն զոհ գնաց այս եկեղեցին ալ, կգրե. «Հուր անկեալ ի մէջ գիշերի այրեաց զՍուրբ Սարգիս եկեղեցին մեր. բոլորովին մնացին մերկ չորք պատք նորին. և օր աւուր դայն ևս քանգեալ երիցանց յուսալով ընդարձակ և լաւ շինել սկսան մեր իշխանք և կարգաւորք խորհուրդ առնել և շինել առ Եղիազար [Այնթապցի] վարդապետին, որ էր առաջնորդ և վերատեսուչ քաղաքիս»[313]։

Եկեղեցին կվերաշինվի, բայց այս անգամ ալ ան զոհ կդառնա Պատրիարքական Աթոռին շուրջ մղված կռիվներուն։ 1658-ին Թլթլյանց խումբը կասպատակե եկեղեցին ու կողոպուտի կենթարկե զայն՝ լուծելու համար Թովմա Բերիացի պատրիարքին մահվան վրեժը։

1674-ին կրկին կվերաշինվի եկեղեցին. սակայն 1690—1700 թվականներուն կամ անկե առաջ, նույնիսկ վերաշինութենեն անմիջապես հետո, քանդված է ամբոխին կողմե և հողն ալ ծախված[314]։

Ավելի քան դար մը հետո, Ինճիճյան սապես կպատմե եկեղեցվո ոդիսականը. «էին ի քաղաքին ի Վլանգա Թաղին և այլ երկու եկեղեցիք Հայոց։ Սուրբ Սարգիս մերձ ի Ջինիլիհամամն որ այժմ է տուն բնակութեան, և Սուրբ Նիկողոս ի Հիսար-տիպին մերձ ի դուռն Ենի-գափուին, որ այժմ է պարտէզ։ Առաջին եկեղեցւոյն առաստաղ այրեցաւ ի 1652, և մնացին միայն չորեքին որմունք. յոյր սակս ծախսեալ դռուշս 2000, առին հրաման շինութեան ի վէզիրէն, այլ իւէմայք խստանեցին՝ մանաւանդ Քիլիսա-տէլիսի անուանեալ գաղիասքէրն։ Ի 1660 ի մեծի հրդեհին դարձեալ այրեցաւ ընդ այլ բաղում եկեղեցիս. և Քէօփրիլի վէզիրն հրաման եհան տաճկաց գնել գտեղիս եկեղեցեաց ի քրիստոնէից միրի թէզքէրեաւ. յետ մահու նորա Հայք և Յոյնք հրաման առեալ ի Քէօփրիլի-օղլու վէզիրէն՝ դարձեալ գնեցին ի տաճկաց և զայլ տեղիս տիվան թէզքէրեաւ, և շինեցին զեկեղեցիս. նախ ծախսեալ զռուշս 15 հազար, արարին նաւակատիս շինութեան Սրբոյն Սարգսի ի 1661... Այլ յորժամ Քէօփրիլի-օղլի վէզիրն եկն նստաւ ի Ստանպոլ, Վանին՝ որ էր Թշնամի քրիստոնէից, իբրև քարող իմն կարդայր՝ թէ քրիստոնեայք առանց հրամանի թագաւորին շինեցին զ20 եկեղեցիս, վէզիրն կնքել տայ զդրունս եկեղեցեաց Հայոց և Յունաց դաւուրս 14. և ապա կործանէ զՍուրբն Նիկողոս և զՍուրբ Սարգիս, և զեօթն եկեղեցիս Յունաց»[315]։

Երրորդ եկեղեցին, զոր կհիշատակեն ժէ դարու աղբյուրները, Քումքափուի Ս. Աստվածածինն է։ Անոր հիմնարկության ստույգ թվականը հայտնի չէ։ Բայց ոչ մեկ տարակույս, որ ան գոյություն ուներ 1641-են, այսինքն Պատրիարքական Աթոռին Սամաթիայեն հոն փոխադրվելեն առաջ։

Քումքափուի այս Ս. Աստվածածին եկեղեցին կայրի 1645-ին և կվերաշինվի տարի մը ետքը, 1646-ին, դիվրիկցի Պողոս վարդապետին նախաձեռնությամբ և ժողովրդական լայն խավերու ճիգերով, ինչպես կպատմե Երեմիա Չելեպին. «Սկսան շինել զՍ. Աստուածածինն ուր գրոհեցան աստուածապաշտք և բարեսէրք յամենայն եկեղեցեաց... փութացին սիրով, վաղվաղէին բաղձանօք, տրիւք և գոյիւք ոչ միայն արք՝ այլ և կանայք բաց յարանց թոպէին որպէս զգործաւորս և զմշակս ի բառնալ և ի կրել ցեխից և նիւթից շինուածոց՝ ևեթ զկատարումն նորա տեսանել։ Օրհնեալ էին աւուրքն այնոքիկ զորս տեսին այք մեր ի խնդութիւն քրիստոնէից երամոց մասին քաղաքիս, ուր գտաւ և ի պատրաստի տիվրիկցի Պողոս վարդապետ մասնակցեալ առ ի յորգորումն աստուածասիրաց անձանց. լցաւ կուտեցաւ ծախք շինուածոյն առատապէս և յաւելան. և սա առաւել պայծառութեամբ բազմաւ յոլովումն սպասից անօթից զարդուց նորաշէն եկեղեցւոյս Սրբուհի Տիրամօրն, և մեծաւ նաւակատեօք օծաւ բազմախումբ քաղաքիս ժողովրդովն»[316]։

Ս. Աստվածածինը, ավելի հետո, հրաշքով կազատի իրեն սպառնացող ուրիշ հրդեհ մը, ինչպես կվկայե Երեմիա Չելեպին այլուր.

Զորս քիլիսա ընդ Գում Գաբի
և երեքն յունաց մերձ մեր տան։
Մերձ յեկեղեցեաց յերից
արդ կայ մին ազգիս հայկական,
Որ է Սուրբ Աստուածածին՝
պանդխտից և մեր սփոփարան։

---

308 Ա. Ալպոյաճյան, «Գալաթու թաղի կազմությունը...», էջ 173։

310 Մնասական եպիսկոպոս Սմբատյանց, «Երնյակ», էջ 115։

311 Հ. Հ. Ցաշյան, «Մայր ցուցակ...», էջ 376։

312 «Միութիւն հանդէս Հաշտենից», Իզմիր, 1860, էջ 41։

313 «Դիվան Հայոց պատմության», հատ. Ժ, էջ 86։

314 Ա. Ալպոյաճյան, «Անհետացած հայ եկեղեցիները Պոլսո մեջ», «Ընդարձակ տարեցույց», Կ. Պոլիս, 1925, էջ 331։

316 Հ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրութիւն...», Եւրոպիա», Ե, Վենետիկ, 1804, էջ 133։

316 Հ. Ս. Նահնյան, «Բազմավէպ», 1902, էջ 368—369։

Զսա շրջապատեաց մեծ հուրն՝
փրկեցաւ ինքն մեծ հրաշական[217]։

1718 հուլիս 6-ին Ս. Աստվածածինը այրեցավ կրկին, և հետևյալ տարին իսկ, 1719-ին, ձեռնարկվեցավ իր վերաշինության։ Կոլոտ և շղթայակիր պատրիարքներուն ալակցեցան երկու «մահտեսիս»-ները՝ Սեղրոս և Մելիտոն Արաբ-օղլու, և Սարգիս խալֆա Ցոթանատուն օրվան մեջ ավարտեցավ եկեղեցիին վերանորոգությունը և օծվեցավ Շղթայակիր պատրիարքի ձեռքով[218]։

Այս թվականեն հետո է, որ Ս. Աստվածածինը կճանչցվի Մայր եկեղեցի անունով[219]։

Ինճիճյանը ԺԸ դարուն վերջերը Պոլսո մեջ երեք գլխավոր հայ եկեղեցիներ կգտնե Պոլիս, այսրս պատրիարքական եկեղեցին է ի Գումգափումն որոշեալ յերիս. միջինն որ է աւագ եկեղեցին՝ է յանուն աստուածածնի, յորոյ անուն կոչի և համարէն եկեղեցին. երկրորդն՝ որ է հարաւակողման՝ է յանուն Սրբոյն Յակոբայ որոշեալ վասն կանանց. երրորդն՝ հիւսիսակողման՝ յանուն Սրբոյն Սարգսի, կոչեցեալ ոմկ. Դրսի ժամ, որ ունի խորանս երիս[220]։

Իսկ չորրորդը եկեղեցիներուն, զորս ունեցան Պոլսո հայերը ԺԸ դարուն, Սկյուտարի Ս. Կարապետն է։ Ուրիշ շատ մը եկեղեցիներու պես Ս. Կարապետն ալ իր հիմնարկության սկզբնական թվականը կծածկե մեզմեն։ Ընդունված է ընդհանրապես, թե զայն կառուցած է Զաքարիա վարդապետը ԺԸ դարուն սկիզբը, Պոլսո Պատրիարքական Աթոռը նստելե առաջ։

Արդարև, Սարգիս դպիր Սարաֆ Հովհաննեսյան իր Պոլսո տեղագրության մեջ կգրե. «Եւ աստ յիւսքիւտար քաղաքի հեռի ի ծովեզրէն ի լեռնակողմն կոյս, զոն երկու Քաղք բնակության Հայոց մօտ իրերաց հանդերձ երկու եկեղեցեօք։ Որոյ առաջինն կոչի Սելամսրզ... և երկրորդ Քաղն կոչի Եէնի մահալլէ և ունի սա բարեձև եկեղեցի մի Ս. Կարապետին Յովհաննու Զայս եկեղեցի՝ նախ շինեաց Վանեցի Զաքարիա վարդապետ, որ եղև պատրիարք ի Կ. Պոլիս, ի թուին Հայոց ՌԼԶ (1627) ուր ի գերեզմանատան անդ՝ կայ և տապան շիրմի նորին։ Քանզի աւանդեն ծերունիքն ի վիճակի Սրբոյ Կարապետին թէ այս եկեղեցին յառաջագոյն էր մատուռ ինչ ի տեղւոջ փոքրիկ աղբերն՝ որ կայ հանդէպ արտաքին դրան այժմու եկեղեցւոյ ի կողմանէ վանուցն Երուսաղէմացւոց, որ ապա յայսկոյս անցուցեալ և յայսմ տեղւոջ զայն հաստատեալ շինեցին զայս եկեղեցի ի թուականին Հայոց ՌԿԶ (1617), հոգաբարձութեամբ վերոհիշեալ Զաքարիա վարդապետին յորում ամի եդեալ է ի նմա և խաչ մի արծաթեայ և գրեալ ի վերայ. Սուրբ խաչս յիշատակ է Զաքարիա վարդապետին օգնականութեամբ Իւսքիւտարու ժողովրդեան ի դուռն Սուրբ Կարապետին թուին ՌԿԶ»[221]։

Ս. Կարապետի սկզբնական շինությունը շատ ավելի հեռուները տանողներ ալ կան, թեև ժամանակակից աղբյուրներ իսպառ կպակսին, և ավանդությանց վրա է որ կհիմնվին ենթադրությունները։ Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցվո նվիրված մենագրության մը մեջ, մեկ կողմե այդ եկեղեցին ևս կառուցված կհռչակվի ԺԷ դարուն, այլև ավելի քան մեկուկես դար ետ կմղվի Ս. Կարապետի կառուցման թվականը։ Այդ մենագրության մեջ կրսվի արդարև. «Ավանդությամբ կպատմվի, թե [Սկյուտարի] Ս. Խաչ եկեղեցվո հիմնադիր Տեր Աբրահամ քահանա, Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցվո երիցանց դասեն, 1626 տարվո կրոնական-դավանական վեճերու պատճառով և Տեր Կոմիտասի ու Ճամճի-օղլու Տեր Կարապետի դեմ եղած հալածանքները տեսնելով առ ահի խույս տված է, որպեսզի այդ հակառակությանց զոհ չերթա, և իր ապահով վստահելի վայր մը հաստատվի Սկյուտար Սելամիե թաղը։ Հոն կգտնվեր արդեն հայ գաղթականություն մը առանց եկեղեցվո, որ իր հոգևոր պետքերը կհոգար դրացի Սուրբ Կարապետ եկեղեցիին, որ արդեն գոյություն ուներ 1555-են ի վեր 20 791 կանգուն տարածությամբ գերեզմանատունով մը միասին»[222]։

Արդ, այս Աբրահամ քահանան է, որ «կհիմնե 1676-ին Ս. Խաչ եկեղեցին, Պոլսո պատրիարք կեսարացի երեց Կարապետի օրով, որ և կկոչվեր Կրպո»[223]։ Եկեղեցին ունի ձեռագիր Ավետարան մը, զոր 1689 թվին ակնցի Հունանյան Սեղբոսի կողակից Հռիփսիմե ետ ի դուռն Ս. Խաչ եկեղեցւոյն Խրիստուպոլսոյ»[224]։

Ս. Կարապետը դար մը և ավելի հետո, այն է 1727-ին, կվերաշինվի Հովհաննես Կոլոտ պատրիարքին օրով Ս. Խաչ եկեղեցվո հետ

---

217 Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան, «Մատմպալայ պատմութիւն», Վիեննա, Ա, էջ 8։

218 Հրանտ Ասատուր, հիշված աշխատությունը, էջ 139։

219 Դոկտ. Վ. Թորգոմյան, «Ստամբուլայ պատմութիւն», Ա, էջ 232։

220 Հ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրութիւն...», Նուռպիրա, Ե, էջ 129։

221 Դոկտ. Վ. Թորգոմյան, «Ստամբուլայ պատմութիւն», Գ, Վիեննա, 1958, էջ 27—28։

222 Հմայակ Ֆանոնս Էֆեսեցյան, «Հիշատակարան հնգեակ հոբելյանի Սուրբ Խաչ եկեղեցվո Սկյուտարու (1876—1926)», Կ. Պոլիս, 1927, էջ 7։

223 Անդ, էջ 9։

224 Անդ, էջ 16։

մեկտեղ, և իր հովանիին տակ է, որ հայ վերածնության պատմությունը կգրե իր քանի մը աղվոր էջերը։

Երեմիա Չելեպիի օրով, 1681-ին, Պոլսո հայոց բնակության գլխավոր կեդրոններն էին.

1. Քումքափու, Վլանդա և Ենիքափու՝ ամենեն բազմահայ կեդրոնը, Ս. Աստվածածին Մայր եկեղեցիով.

2. Սամաթիա, ուր հազարե ավելի հայ տուն կար, Ս. Գեորգ եկեղեցիով.

3. Էդիրնեքափու և Պալաթ, Ս. Հրեշտակապետ եկեղեցիով.

4. Ղալաթիա, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիով.

5. Սկյուդար Ենիմահալլե, Ս. Կարապետ եկեղեցիով։

Ասկե զատ հայեր սկսած էին հաստատվիլ Էյուբ և Խասգյուղ, որոնք չունեին դեռ հայ եկեղեցի և որոնց բնակիչները կհաճախեին դեռ Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, Բեշիկթաշի մեջ կային «փոքր մի հայք ժամատամբ», Օրթաղեղի մեջ «փոքր մի հայք ժամատամբ», և Գուրուչեշմե «հայք ժամատամբ։ Սակավաթիվ հայեր կային նաև Ենիգյուղ, առանց ժամատան։

Պոլսո ֆրանսական դեսպանատան քարտուղար պր. Դը Լա Քրուա հինգ հայ եկեղեցի կհիշե 1673-ին Պոլսո մեջ՝ Ս. Գեորգ, Ս. Աստվածածին, Ս. Հրեշտակապետ, Ս. Լուսավորիչ և Ս. Կարապետ, ավելցնելով, որ ըստ իրեն հաղորդվածին, 8000 հայու տուն կա Պոլսո մեջ, բացի շուրջ 50 000 ոչ բնիկ հայերեն[325]։

Թե ինչո՞ւ արագ չէր աճեր հայ եկեղեցիներու թիվը Պոլսո մեջ՝ ընթերցողին համար դժվար չէ հետևցնելը։ Եկեղեցի շինելու համար արտոնություն ստանալը կապված էր «հավատ ձևակերպությանց, լայց մանավանդ նյութական զոհողություններու և միջնորդությանց հետ։ Արտոնությունը պետք էր ստացվեր ֆիկտիվ անձնավորությանց անունով, որ կհիշեցներ նույնիսկ սուրբը. որուն նվիրված պիտի ըլլար աղոթատեղին։ Եվ ադոր համար պետք է հագենալին նախ փաշան և մյուֆթին։ Հետո, եկեղեցին չէր կրնար շատ տեղ գրավել ու շատ բարձրանալ, և չէր ալ կրնար զանգակատուն ունենալ՝ որպեսզի չիշխեր շրջականներուն վրա։ Եվ վերջապես ներելի չէր, որ շատնային քրիստոնյա տաճարները Պոլսո մեջ. արտոնությունները կառնվեին հինցած կամ այրած եկեղեցի մը տեղ նոր մը շինելու պատրվակով։

Ահմեդ Ռեֆիք Թուրք հայտնի պատմագետը կգրե, թե «Իսթանբուլի եկեղեցիներուն համար դրված կանոնները շատ խիստ էին։ Կայսերական հաղթանակեն—Պոլսո առումեն—վերջ, Իսթանբուլի մեջ նոր եկեղեցի շինել արգիլված էր։ Նույնիսկ եկեղեցի մը նորոգության համար կայսերական դիվանին պետք է դիմում ըլլար։ Դիվանին կողմե ավագ ճարտարապետներ և վարպետներ եկեղեցիին գտնված վայրը կերթային, թաղին ամենեն ծեր իսլամները կհավաքեին և անոնց վկայության կդիմեին ստուգելու համար, թե այդ տեղը եկեղեցի՞ էր նախապես։ Վկաներուն անուներ արձանագրելե վերջ, նորոգվելիք եկեղեցիին քննությանը կսկսեին։ Այս քննությունը շատ ուշադրությամբ տեղի կունենար։ Եկեղեցիին պատուհանները, ձեղունը, տանիքը, բակը, մինչև իսկ սենյակները կչափվեին և մեկ սանտիմետր իսկ ավելի չըլլալու պայմանով կտրվեր նորոգության արտոնությունը։ Երբ նորոգությունը լրանար՝ պետք էր դարձյալ յուր տալ դիվանին։ Եկեղեցին դարձյալ կչափվեր և բացման արտոնություն կտրվեր այն ատեն միայն, երբ հաստատվեր, թե նորոգությունը կատարված է ճիշտ նախագծումին համաձայն, առանց սանտիմետր մը ավելի ըլլալու։

Քանոնի սուլթան Սուլեյմանի կողմե Պոլսո Թուրք դատավորին ուղղված 973 բերիուլէվվել 8 (1565 հոկտեմբեր 3) թվակիր ֆերման մը կիմացնե, թե պաշտոն տված է արքունական պալատի մութեֆերիքանեբեն Սեֆքան Ալիի, որպեսզի փլցնե Պալաթի դռնեն դուրս գյավուրներու կողմե կառուցված եկեղեցին, որ շրջակա տուներեն ավելի բարձրացած էր և զայն հավասարեցնե այդ տուներուն բարձրության. հետևաբար կհրամայե դատավորին ևս, որպեսզի ի կատար ածել տա իր հրահանգը, և միևնույն ատեն պատվիրե գյավուրներուն չփորձել այսուհետև իրենց եկեղեցիները բարձրացնել շրջակա տուներեն ավելի վեր, իսկ իսլամներուն՝ հետամուտ ըլլալ նման արարքներու և տեղեկացնել իշխանությանց[326]։

Պոլսո հայ եկեղեցիներու ճարտարապետության նվիրված գրության մը մեջ, մասնագետ մը կրսե. «Պոլսո գրեթե բոլոր եկեղեցիները մեծ կամ փոքր՝ հատակագծային որոշ ոճով մը ու քիչ փոփոխությամբ մեկզմեկու կնմանին, այսպես. Կիսաբոլորակ շրջապատով մայր խորանը (abside), որուն երկու կողմը հառաջացյալ փոքր խորաններ իրենց հետի ունենալով աջ ու ձախ ավանդատուններ. մուտքը մայր խորանին ետևեն քովընտի

325 Հրանտ Ասատուր, հիշված աշխատությունը, էջ 111։

326 Ահմեդ Ռեֆիք, «Իսթամբուլի կյանքը ԺԶ դարուն», Ստամբուլ, 1935, էջ 44։

դուռներով. փոքր խորաններու առջևն 4—5 ոտք սանդուղ երկու կողմեն իջնալով. մեջտեղը դպրաց դասու (choeur—դաս), իսկ երկու կողմերը եկեղեցականաց հատկացյալ տեղերը՝ որ ժողովուրդեն բաժնված է մասնավորապես ազնիվ փայտե շինված բազրիքներով, երկու ծայրերը ու մեջտեղը դուռներով։ Դասին երկու ծայրերեն զուլգ դուռներով կմտցվի աջ ու ձախ պահարանները, որոնցմե աջին մեջ կգտնվի մկրտության ավազանը, իսկ ձախին մեջ շապիկներու և առհասարակ գործածվելիք շուրվառներու և այլն և այլն հատուկ պահարաններ. ասոնց շենքերը ընդհանրապես եկեղեցվո մայր շենքեն դուրս ցցված ըլլալով, հատակագիծը կխաչանեն. յուրաքանչյուր պահարանի մեջ կան սուրբերու հատկացված խորաններ. դասին ետին ժողովրդյան հատկացված տեղը (nef—առյան) արտաքին գավիթեն բաժնված է վանդակով ու վանդակապատ դռռով. սույն դուռնեն մինչև եկեղեցվո արտաքին դուռը գլխավոր մուտքի անցքն է, որուն կողմերը մեկ քանի աստիճանով բարձրացած տախտակամածով աջ ու ձախ գավիթներ (nartex) կան, իսկ ասոնց ամենուն վրա կգտնվի եկեղեցվո վերնատունը և ընդհանրապես զանգակատան մուտքը։ ...Բացի Գուդկունդուկի Ս. Լուսավորիչ, Գաղրգյուղի Ս. Թագավոր և Բեշիկթաշի Ս. Աստվածածին փոքր քառակուսի եկեղեցիներեն, որոնք գմբեթավոր (coupole) են (այս վերջինը միայն ներսեն գմբեթավոր է. այն ատենի տեղական արգելքները ստիպեր են, որ դուրսեն գմբեթ չերևի, որով տանիքով և կղմինդրով ծածկված է), մնացյալ Պոլսո լուսավորչական եկեղեցիները առհասարակ առանց գմբեթի շինված են (Բերայի Ս. Երրորդություն եկեղեցին հո ասոր երկայնությամբ կես հավկթաձև (elliptique) քառուկիր կամարով (voûte) ծածկված է, կեռևի ժամանակին պարագաներու ստիպման տակ, զի այսչափ բազմածախս ու ամրակուռ շինություններ մեջ, ինչպես Ս. Երրորդությունը, առանց գմբեթի շինվելու նյութական կամ գիտական արգելիչ պատճառ մը չկար բացի հատակագծային պզտիկ փոփոխութենե մը)։ Գալով եկեղեցվո արտաքին և ներքին զարդերու ճարտարապետական ոճին, Պոլսո մեջ գրեթե բոլոր եկեղեցիներու նման Ս. Երրորդություն եկեղեցվո շինությունն ալ հա՛ ճարտարապետության, հայ գեղարվեստի կամ ազգային ճաշակի որևէ հետք չի կրեր, և հունա-հռոմեական դասական (classique) ճարտարապետության ոճին կպատկանի. դուրսի կողմ տոսկան և դորիկ ոճով, իսկ ներսի կողմ կորնթական (corinthien) ոճով, իր ակոսավոր (cannelure) որմասյուներով (pilastre), խոյակներով (chapiteau), սարավանդով (entablement), կամարներով (arcade), և այլն և այլն»[327]։

Ղալաթիո հայ եկեղեցվո մասին կակնարկե հետագային ուրիշ հեղինակ մը ևս. Գոզիմա Կոմիտաս դր Գարբոնյանո, թոռը նահատակ Կոմիտաս քահանա Քյոմյուրճյանի. «Այդ (Ղալաթիո) քաղաքին մեջ նկարագրված յոտին եկեղեցիներե զատ, կգտնվին երկու ապ հունաց եկեղեցիներ, ... և մեկ եկեղեցին ալ լմիացյալ հայերուն, նվիրված Ս. Գրիգոր Լուսավորչի։ Բոլոր այս եկեղեցիները լոր շինություններ են, և առտաքուստ բնավ զարդ չունին, որպեսզի ուշադրության առարկա ըլլան. այնուամենայնիվ՝ հայերու եկեղեցին իբրև շինություն կամարակապ շինված ըլալու առավելությունը ունի և ծածկված է կապարով»[328]։

Հայ եկեղեցիները պարզ ադոթատեղիներ չէին միայն։ Ինչպես մեր բոլոր մյուս գաղութներուն՝ Պոլսո մեջ ևս հայ հոգևոր կյանքը հայ եկեղեցիներու շուրջն էր որ ծաղկեցավ։ Եկեղեցիներուն հովանիին տակ էր, որ մարմին առին առաջին հայ կրթարանները, ինչպես որ անոնց խուցերուն մեջ էր, որ հայ տառը փոխանցվեցավ սերունդե սերունդ։ Եկեղեցիներու քովիկն էր նույնպես, որ սկսավ ճոնչել առաջին անգամ Գութենբերգի մեքենան։ Եվ վերջապես եկեղեցիներուն հովանիին տակ էր, որ գովեցան ու ընդօրինակվեցան այնքան ձեռագիրներ, սերունդներու իրարու փոխանցեցին հայ շարականները, պահպանվեցան հայ ավանդություններու։

Ինչպես պիտի տեսնենք դեռ, հակառակ խորթ պայմաններուն, որոնց մեջ ստիպված էր շնչել ան, և հակառակ նաև որդին, որ հաճախ կրծեց դայն ներսեն, Պոլսո մեջ ևս Հայ եկեղեցին փորձեց մնալ ճանաչիկ բերդն հայ հոգվույնց։

7. ԱՔՈՌԸ ԻՐ ՀՈԳԵՐՈՒՆ ՄԵՋ

Այն պայմաններուն մեջ, ուր ծնունդ առած էր Պոլսո Պատրիարքական Աքոռը և ուր ստիպված էր գործել, դյուրին չէր անշուշտ դերը այն հոգևորականներուն, որոնք պիտի կոչվին վարել դայն։ Նույն չափով դժվար պահերու չհանդիպեցան անշուշտ անոնցմե բոլորը, ոչ ալ հավասարապես դժվար շրջաններու միևնույն չափով ուժեղ խառնվածքի և

---

327 Ա. Սարգսյան (Ճարտարապետ), «Հարյուր քսանեհինգամյա հոբելյան Բերայի Ս. Երրորդություն եկեղեցվո» Ճարտարապետական տեղեկագիր», Կ. Պոլիս, 1932, էջ 35—37։

328 Cosima Comidas de Corbognano, „Discrizione topografica dello stato presente di Constantinopoli", Bassano, 1794, p. 62.

ճարտարության տեր մարդիկ բազմեցան Պոլսո Աթոռը։

Ամբողջ մեկուկես դար հազվագեպ եղան բացառիկ վայրկյաններն ու բացառիկ դեմքերը Պոլսո Աթոռի կյանքին մեջ։ Մեզ հասած նյութերն իրենք ալ շատ հարուստ չեն այդ շրջանը լրիվ ճանչնալու համար։ Անշուք այս մեկուկես դարուն կհաջորդե տագնապներով և ալեկոծություններով լեցուն հարյուրամյակ մը։ Արդարև, ծէ դարը եղած է, ըլլա Պոլսո Աթոռին, ըլլա առհասարակ Պոլսո հայության համար, տխուր շրջան մը, որ ամոթալի դրվագներ արձանագրած է Հայ Եկեղեցվո պատմության մեջ։ Այնպես որ ամբողջ երկուքուկես դար, այսինքն 1461-են մինչև 1715, երբ Հովհաննես Կոլոտ կուդար հագնիլ պատրիարքական կապան, Պոլսո Աթոռը պանծալի էջեր չէ թողած մեզի։ Երկուքուկես դարու այդ շրջանին մեջ 48 պատրիարքներ Աթոռ բազմած են։ Առաջին հարյուր տարիներու տասնյակ մը պատրիարքներն են, որ 8-են մինչև 20 տարի կրցած են գայն գրաված պահել։ Մնացյալ քառասունի մոտ պատրիարքները պաշտոն վարած են շատ կարճ, հաճախ զիրար քշելով կամ Աթոռ գալով ի նորու։

Պատրիարքներու հաճախակի փոփոխությամբ շահագրգռված էին արքունիքն ու Բարձրագույն դուռը։ Ոչ միայն այն կաշառքներուն համար, զորս օրվան պաշտոնատարները պիտի ստանային Աթոռին թեկնածուներեն կամ անոնց պաշտպաններեն՝ օրվան պատրիարքը հեռացնելու և անոր տեղ բազմեցնելու համար ամենեն շատ վճարողը, ոչ միայն այն ընծաներուն համար, որոնք սլաշտոնական սակի վերածված էին ա՛լ և որոնցմով կպատվվեին իշխանավորները մեծ վեզիրեն սկսած մինչև նոր պատրիարքին ընկերացող չավուշը, այլ նաև կարևոր այն գումարին համար, զոր ամեն պատրիարք, անվանման «բերաթ»-ը ստանալե առաջ, պարտավոր էր հատուցանել արքայական գանձին։

Ի սկզբան հունաց պատրիարքները որևէ հարկ չէին վճարեր սուլթանին։ Բայց ավելի հետո, Պոլսո և Տրապիզոնի հույն կղերին միջև հակառակությանց հետևանքով, պետք եղավ որ «նվեր» մը առաջարկվի սուլթանին։ Սիմեոն Տրապիզոնցի, հինգերորդ պատրիարքը Գենատիոսե հետո, գնեց Պատրիարքական Աթոռը, սուլթանին ընծայելով 1000 դուկատի «նվեր» մը, որ շուտով պիտի բարձրանար 2000-ի, ծՁ դարի կեսերուն 4000-ի հասնելու համար[329]։

Բաղդատմամբ հունաց պատրիարքներուն, ավելի նվազ էին անշուշտ նյութական պարտականությունները, զորս հայ պատրիարքներն ունեին։ «Ընծայ կամ տուրք պատրիարքին զոր ունի տալ ի գանձն արքունի,— կգրե Ինճիճյան,— սահմանեալ է ի հրովարտակի նորին 100 հազար փող (այսինքն ստակ) յորժամ առնու զպատրիարգութիւն. և 140 հազար փող յիւրաքանչիւր ամի, զոր տայ ի դուռն տէֆթէրտարին. թո՛ղ և զայն ձեռագիրս զոր ունի տալ ոմանց ի նոյն դուռն, որով համօրէն տուրք իւր լինի 1244 զոշ.։ Յորժամ նոր վէզիր առնու զիշխանութիւն՝ ունի տալ 500 զոշ. իսկ յորժամ վէզիր քեան իսի՝ 250 և յորժամ չավուշ պաշի՝ 200, հանդերձ այլ ևս ընծայիւք կերպասուց. և 40 զոշիւ չափ աստ և անդ»[330]։

Արդարև, ինչպես տեսանք Գրիգոր Պասմաճյան պատրիարքին անվանման «բերաթ»-ին մեջ, տուրքը զոր նորընտիր պատրիարքը պետք էր վճարեր սուլթանի գանձին և որ փեշքեշ կկոչվեր, 100 000 աքչեի կհասներ։ Այնպես որ մեծապես ձեռնտու էր Բարձրագույն դռան և իր պաշտոնատարներուն՝ հաճախակի փոփոխությունը հունաց թե հայոց պատրիարքներուն, և անոնք էին հաճախ, որ կգրգռեին այդ փոփոխությունը, կամ կաջակցեին Պատրիարքական Աթոռը գրավել փորձող հոգևորականներուն։

Օսմանյան կայսրության պատմության ծանոթ եղողները գիտեն, թե Բարձրագույն դուռը նույն դրությունը կկիրարկեր հարկատու իշխաններու անվանման առթիվ ալ, ինչպես ոումեն զույգ իշխանապետությանց վոյվոդներու պարագային։ Շրջան մը հասած էր, որ ամեն երեք տարին անգամ մը կփոփոխվեին Բուքրեշի և Յաշի իշխանները՝ կա՛մ բոլորովին պաշտոնանկ ըլլալով և կամ փոխանակելով իրենց աթոռները։ Եվ ամեն փոփոխության հետ սուլթանական գանձը կստանար անվանման սակը (մուքարրեր) և օրվան իշխանավորները՝ պարտադիր դարձած և սակի վերածված «ընծա»-ն։

Պատրիարքը, բացի իր անվանման սակեն, տարեկան 140 000 աքչե ևս կվճարեր արքայական գանձին մուքաթաա՝ անվան տակ, իրավունք ունենալով սակայն զայն թեմերեն հավաքել առաջնորդներու ձեռքով, և դավառ ուղարկել ստեպ հատուկ հոգևորականներ, որոնք մուքաթաա՛չի կկոչվեին և պաշտոն ունեին առաջնորդներեն գանձել իրենց համար սահմանված սակը[331]։

Հայոց Պատրիարքարանը ուրիշ պարտականություն մը ևս ուներ արքունի գանձին

[329] G. F. Hertzberg, „Geschichte der Byzantiner und der Osmanischen Reiches bis gegen Ende des secha zehnten Inhrhunderts", Berlin, 1883, p. 592.

[330] Հ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրութիւն..., Ներպիա», ե. էջ 117։

[331] Անդ։

հանդեպ՝ հայ ազանուտերը-ներին գանձել և պետության հանձնել «թիատուրքը» կոչված հարկը, զոր հայերն ու հույները պարտավոր էին վճարել պետական գանձին, գերծ մնալու համար այն տարապարհակեն. զոր ստիպված էին կատարել նախապես ամեն կիրակի՝ երթալ աշխատելու համար արքունի նավարանին մեջ[332]։

Պատրիարքարանը թիատուրքը կգանձեր թաղերու եկեղեցականներուն միջոցով, ինչպես կիմանանք 1804-ին գրված և Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցվո մեջ պահված հրահանգե մը՝ «Վասն հաւաքման արքունական հարկապահանջութեան որ կոչի քիւրէքճի զոր սահմանեալ են յուսաւորեալ հոգի նախնի հարքն մեր յաղագս դիւրութեան և հանգստութեան աղգին մերոյ որք բնակեալ են ի Կոստանդնուպոլիս»[333]։

Քանի մը շահեկան տողերու հանդիպած ենք թուրքերեն ձեռագրի մը մեջ, որ քաղվածքներ կպարունակե թուրք արքունիքին մոտ կատարվող արարողական ձևակերպութեանց մասին, և ուր մանրամասնված են այն նյութական պարտավորութիւնները, զորս ունեին հարկատու իշխանները պետական պաշտոնատարներուն հանդեպ, երբ Աթոռ կնստեին։ Այդ առթիվ հիշված է նաև, թե հուն և հայ պատրիարքներու ի՛նչ նվերներ ստիպված էին տալ օրվան մեծերուն պաշտոնի եկած ժամանակ[334]։

Արարողութեանց նվիրված հիշյալ ձեռագրին մեջ (էջ 93) նշանակված է 1187 մուհարրեմ 15-ին (1773 ապրիլ 8).

«Հուն և հայ պատրիարքներու անվանման. մեռահաստատութեան և պայմաններու առթիվ [տրված նվերներ ենիչերի պետերուն]։

Քյաթիբ էֆենդիին՝ 1 յուխա, 1 կերպաս.

Էմին աղային՝ 1 յուխա, 1 կերպաս.

Դուաջի չավուշին՝ 4 կանգուն յուխա, 10 կանգուն կերպաս.

Քյավուզ չավուշին՝ 4 կանգուն յուխա, 10 կանգուն կերպաս։

Հուն պատրիարքին տրվեցավ քյաթիբ էֆենդիին և էմին աղային ամեն տարի.

Մեր-մեկ տոքը կուժ ձիթայուղ.

Տասնական օխա ձիթապտուղ.

Երեքկու գառնուկ։

Հայոց պատրիարքին կրվեցավ քյաթիբ էֆենդիին, էմին աղային, քյավուզ չավուշին և դուաջի չավուշին ամեն տարի.

Մեր-մեկ ազանուտ։

332 Հ. Ղ. Իշխանեան. «Ազգապահպանութիւն...», Ներածութիւն, հ. էջ 117—118։

333 Մելքոն-Ալամդար. Հիշված աշխատութիւնը։

334 H. Dj. Siruni. "Domnii remini la Poarta otomană", Bucureşti, 1941, p. 105.

1195 ջեմազ-ուլ-ախեր 15-ին (1781 հունիս 8) նշանակված է (էջ 94). «Երբ հայոց պատրիարքը կանվանվի. խիլա կհագնի Բարձրագույն դռան մեջ. քեթխյուդա բեյը (ներքին գործերի նախարար) ձի կհեծցնե դայն, հետո անմիջապես [Մայր] եկեղեցի կերթա. առաջնորդված 7—8 չավուշներե. զորս երբոր կճամբե՝ մեյ-մեկ ոսկի կուտա յուրաքանչյուրին»։

1195 ջեմազ-ուլ-ախեր 15-ին (1781 հունիս 8) նշանակված է (էջ 94). «Հայոց [Զաքարիա] պատրիարքը պաշտոնանկ եղած և Բրուսա աքսորված ըլլալով կայսերական հրովարտակով, իր տեղ նշանակ [եցավ Բրուսայի առաջնորդ [Հովհաննեսը]. ան առաջնորդված դուաջի չավուշին. որ մուրաշիր կարգված էր իրեն, խիլա (քաֆթան) հագավ հոս (Պոլսո մեջ) և նստավ իբրև պատրիարք։ Այդ առթիվ ան հետևյալները բաշխեց [ենիչերիներու] օջախին չավուշներուն.

Քյաթիբ էֆենդիին	50	դրուշ
Էմին աղային	50	»
Դուաջի էֆենդիին	20	»
Քյավուզ աղային	20	»
Անոր յամախին	10	»
Հարերջի չավուշին	10	»
Մեհթիրներուն	10	»
Նյոբեթչի չավուշին	8	»
Քյաթիբ էֆենդիին	լուխա և	կերպաս
Էմին աղային	»	»
Դուաջի էֆենդիին	»	»
Քյավուզ աղային	»	»

Պատրիարքական Աթոռին հասնիլ տոչորող հոգևորականներեն ոմանք իրենք էին, որ պատճառ եղան թուրք պաշտոնատարներու հավակնութիւններու աճելուն։ Անոնք կերպով մը աճուրդի հանեցին թուրք իշխանավորներու ազակցությունը իրենց փառասիրության։ Ոչ միայն կաշառքներն ու նվերները հոսեցան թուրք փաշաներու գրպանը, որպեսզի անոնք դյուրացնեն հաղթանակը մրցակիցներեն մեկուն կամ մյուսին, այլ նաև բարձրացան հաճախ պաշտոնական փեշքեշն ու մուհաբաան, զորս պատրիարքները պետք է հատուցանեին արքունի գանձին իրենց պաշտոնի անցած պահուն և հետո տարվե տարի։

Ժէ դարու կեսերուն, օրինակ, աշխարհական տեղակալները, որոնք 1655-են ի վեր իրենց ձեռքն էին առած Պատրիարքարանի գործերը, երբ բանտարկվեցան մեծ եպարքոս Քյուփրիլիի հրամանով, 10 000 դահեկան տուգանքով ազատած էին, և Մինեուլն ատեն Պատրիարքարանի տարեկան 100 000 փողի տուրքը 140 000 փողի բարձրացուցած էին պատրիարքական ընտրության արգելք ըլլալու նպատակով։

Եվ սակայն Թովմաս Բերիացին, Պոլսո պատրիարքությունը ամեն գնով ձեռք ձգելու մոլուցքեն տարված, Ագրիանուպոլիս կմեկներ 1657-ին, մեծ եպարքոս Քյոփրիլիի մոտ, և Պատրիարքարանի տարեկան տուրքը 400 000 փողի բարձրացնելով, պատրիարքական հրովարտակ կստանար[335].

Թովմաս Բերիացիի դեմ տրված մահապարտության վճիռեն և անոր եղերական մահեն հետո, որ 1658 օգոստոս 1-ին տեղի ունեցած էր բանտին մեջ Թունավորմամբ, Մարտիրոս Կաֆացին հաջողեցավ Պատրիարքական Աթոռը նստիլ 1659 մայիսն, 10 000 դահեկան վճարելով պատրիարքական ծախքերուն համար և 140 000 փող իբրև տարեկան տուրք, ինչպես հանձնառու եղած էին տեղակալները, և ոչ 400 000, ինչպես ահեցուցեր էր Թովմաս Բերիացին[336].

Ricaut, հիշելե հետո, թե չորս պատրիարքություն (այսինքն կաթողիկոսություն) ունին հայերը՝ էջմիածնի, Սիսի, Գանձասարի և Աղթամարի մեջ, կավելցնե. «Ճիշտ է որ Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի մեջ ալ հայ պատրիարքներ կան։ Բայց ասոնք տիտղոսակիր պատրիարքներ են, հաստատված՝ գոհացնելու համար Թուրքերը, որոնք կարծեցին, թե նույնիսկ Թուրքիո հայոց շահուն, կամ ավելի ճիշտ՝ իրենց իսկ շահուն համար, պետք է պահել այդ պատրիարքությունները։ Ավելցուցի՝ Թուրքերու իրենց իսկ շահուն, որովհետև պատրիարքներու գահակալությունը օգուտ կբերե իրենց։ Այս կերպով գիտեն ալ, թե որու պետք է դիմեն, եթե բաղձանքն ունենան հայերը ծծելու և կեղեքելու։ Ասկե զատ՝ այս տիտղոսով միայն պատրիարքները պարզապես ներկայացուցիչներն են կաթողիկոսին, որ նման ներկայացուցիչներ ունի նաև Զմյուռնիո, Անկյուրիո և բոլոր այն վայրերուն մեջ, ուր վաճառականությունը համախմբած է հայերու մեծ թիվ մը»[337].

Ավելորդ է ըսել, որ պատրիարքներու հանդեպ կիրարկված այս սիստեմին, թեև համեմատաբար ավելի մեղմ չափով մը, ենթակա էին նաև դավառի առաջնորդները։ Ինչպես տեսանք նախընթաց հատվածի մը մեջ, 600 աչքե փնջեջ կվճարեին ստանալու համար իրենց անվանման «բերաթ»-ը, բացի այն կաշառքներեն, զորս ստիպված էին սփռել աջ ու ձախ՝ ձեռք ձգել կարենալու համար առաջնորդական պաշտոնը։

Ասկե զատ, դավառներու մեջ պաշտոնավարող հայ եպիսկոպոսները, ինչպես և հայ վանքերու վանահայրերը, մասնավոր պարտք մը ևս կվճարեին, որ մարեսիա ամչեսի կկոչվեր և որ զիրենք զերծ կկացուցաներ ուրիշ տուրքերե, ինչպես իսփենշեն։

Մարեսիա, մարեսսա, մաճեռասա, մարխասա բառերուն ստուգաբանության նվիրված հոդվածի մը մեջ[338] Հայկ Պերպերյան, մեջբերում մը ընելով Էրզրումի վիլայեթին մեջ կիրարկության մեջ եղող 1540 թվակիր օրենքե մը, կգրե, թե «օրենքին այս տրամադրությունեն կհետևի, թե վանահայրերը, Էրզրումի վիլայեթին մեջ, ըստ երևույթին, վանքին իրավասության ենթակա գյուղերուն հարկատու անհատներուն հաշվույն կանխորոշյալ գումար մը կվճարեին, որ ընդհանրապես մուգաթաա կկոչվեր, և այս գումարին վճարումով զերծ էին իսփենշե կոչված տուրքեն»։

Ակնարկված մեջբերումը, որ քաղված է Թուրք պատմագիր Օմեր Լութֆի Բարքանի մեկ գործեն[339], հետևյալ բովանդակությունը ունի. «Հիշյալ Լիվային մեջ մարեսիանեռևն ոմանք, որ դարարաշ կհորջորջվին, վանքի մը (այս բառը Թուրքերեն բնագրին մեջ ևս «վանք» ձևով) զլխավորներն են, և այս վանքին պատճառով անոնց վրա մարեսիյլ ամչեսի անուն կանխորոշյալ գումար արձանագրված է։ Երբ այս գումարը ըստ տոմարի վճարեն, փոխարեն պիտի չվճարեն իրենց իսփենշեն...»։

Իսփենշե կոչված այդ տուրքը, որուն դեռ պիտի անդրադառնանք երբ քրիստոնյաներեն և հետևաբար հայերեն դանձվող հարկերուն մասին խոսինք, բացառապես կդանձվեր քրիստոնյաներեն, թեև անոր բնույթին մասին համաձայն չեն պատմաբանները։ Էրզրումի համար սահմանված հիշյալ օրենքին համաձայն, նույն Լիվայի «անհավատները», իրենց խարաջները վճարելե հետո, ամեն մեկ հարկատուի համար 25 աչքե իսփենշե կվճարեն ռեսմի-չիֆրի փոխարեն, տուրք, զոր կվճարեին իսլամները[340].

Հողերը, զորս ժէ դարը Պոլսո Աթոռին բերավ, կանդ չեն առներ սակայն հոս։

Նույն այդ դարը տաղնապի դար մը եղավ ինչպես Պոլսո Աթոռին, նույնպես բովանդակ Հայ Եկեղեցվո համար։

(Շարունակելի)

[335] «Ազգապատում», Բ, էջ 2518։

[336] Անդ, էջ 2528։

[337] Chevalier de Ricaut, „Histoire de l'estat préseut de l'Eglise Grecque et de l'Eglise Arménienne, trad. de l'anglais par M. de Rosemond, Amsterdam,1698, p. 387.

[338] «Հանդես ամսօրյա», 1962, էջ 73։

[339] Ömer Lutfi Barkan, „XV ve XVI-inci asirlar da osmanli imperatorlugunda ziraî ekonominin hukukî ve malî esaslari. I. Kanunlar", s. 53.

[340] Տե՛ս այս մասին Մ. Զուպալյան, «16-րդ դարում Արևմտյան Հայաստանում տիրող Թուրքական հարկային սիստեմի մասին», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1958, № 2, էջ 39—53։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԸ*

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սակավաթիվ են Արևելյան Հայաստանում գտնվող այն վանքերը, որոնք երկարատև գոյություն են ունեցել։ Նրանց մեծագույն մասն ամայացել է ԺԴ—ԺԶ դարերում Թուրք-Թաթարական արշավանքների ժամանակ։ Այդ տեսակետից Հավուց Թառի վանքը առանձին տեղ է գրավում՝ անցնելով հրի ու սրի միջով, նա իր գոյությունը շարունակել է մինչև վերջին դարերը։

Հիշատակագրական աղբյուրները Հավուց Թառի վանքում հիշատակում են միայն Ամենափրկիչ, Ս. Աստվածածին, Կաթուղիկե և Ս. Հարություն անուններով եկեղեցիները։ Վանքի կազմում եղած հուշարձանների թվի ու տեսակի մասին համեմատաբար լրիվ տեղեկություններ են պարունակվում մի ձեռագրի հիշատակարանում, գրված շափածո ձևով, որը մեջ է բերել Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը «Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» աշխատության մեջ (էջ 90—91)։ Հիշատակարանում հիշվում են Կաթուղիկե, Ս. Աստվածածին, Ս. Հարություն անուններով եկեղեցիներ, զանգակատուն և ժամատուն։

Այժմ տեղում պահպանվել են, ինչպես այդ ցույց են տալիս հնագիտական հետազոտությունները, երեք եղեկեցիներ, մեկ գավիթ-ժամատուն, մեկ դամբանատուն-զանգակատուն, երեք մատուռ-մատարաններ, միաբանության բնակելի շենքեր, գերեզմանատուն և պարիսպ։

Նկարագրենք այդ բոլոր հուշարձաններն առանձին-առանձին, աշխատելով ճշտել նաև նրանց իսկական անունները։

Արևմտյան կամ բարձունքի վրա եղած խումբ

1. Կաթուղիկե եկեղեցի.— *Մխիթար Այրիվանեցու վկայությամբ, Գեղվո Գեորգ իշխանը կառուցում է Հավուց Թառը՝ 1001—1011 թվականների ժամանակամիջոցում։ Մեր կարծիքով այդ եկեղեցին պիտի լինի Գեորգ իշխանի կառուցածը։ Եվ քանի որ դա վանքի ամենահին և գլխավոր եկեղեցին է, հետևաբար նա էլ պետք է կոչվեր* Կաթուղիկե եկեղեցի։

Կաթուղիկե եկեղեցին գմբեթավոր մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, դարձել է խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևում մշակված է կիսակլոր աբսիդը՝ ցածր, քիչ դուրս շեշտված բեմով, ուր բարձրանում են ձախ կողմում եղած եռաստիճան քարե սանդուղքով։ Աբսիդի կողերի պատերում կան մեկական սլաքաձև դագաթ ունեցող խորշեր, որոնք եզերված են բուսական և երկրաչափական ձևերի քանդակներ ունեցող շերտով։

Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միացած են եղել կամարնե-

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № 6-ից։*

Հալոց թաղի վանք.—Կաթուղիկե եկեղեցին հարավ- արևելքից:

բով, որոնք իրենց վրա են կրել զմբեթը։ Վերջինիս առագաստները պատած են եռանկյունաձև բուսական միահյուսված զարդաքանդակներով։ Բոլոր խորանների ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունեն փոքրիկ աբսիդներ։ Արևելյան կողմի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, իսկ արևմտյան կողմի խորանների մուտքերը՝ եկեղեցու արևմտյան խաչթևի մեջ՝ իրար դիմաց։

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով և գեղեցկազարդ պարակալով. վերջինս կողերից գլանաձև զույգ կիսասյուներից է, որոնք ունեն խարիսխներ ու խոյակներ՝ զարդարված երկրաչափական միահյուսված քանդակներով և միանում են մուտքի ճակատակալ քարը եզերող կամարներով։ Պարակալի մյուս շերտը պատած է ծաղկեհյուս զարդաքանդակներով, իսկ սրանց միացնող կամարը, որը նույնպես եզերում է մուտքի ճակատակալ քարը, պատած է պտուտակաձև, շղթայանման զարդաքանդակներով։

Եկեղեցու լուրաքանչյուր ճակատից բացվում է մի-մի երկար ու նեղ լուսամուտ։ Սեկական նման շատ փոքր լուսամուտներ էլ բացվում են արևելյան կողմի խորանների արևելյան պատերից, մեկ հատ՝ հարավ-արևմտյան խորանի հարավային պատից և մեկ հատ էլ՝ հյուսիս-արևմտյան խորանի հյուսիսային պատից։ Ճակատներում բացված լուսամուտներն ունեն շրջանակներ, որոնք պատած են բուսական ու երկրաչափական ձևերի զարդաքանդակներով և գծավոր պսակներով. իսկ խորանների մեջ բացվող լուսամուտները՝ միայն պսակներ։ Թեմի առաջամասը պատած է բուսական ու շղթայաձև զարդաքանդակներով։

Արևելյան պատի մեջ, արտաքուստ կան երկու եռանկյունաձև խոր խորշեր, որոնց կամարաձև գագաթները զարդարված են բուսական ու երկրաչափական ձևերի զարդաքանդակներով։

Ամբողջ շենքը կառուցված է սև ու կարմիր տուֆի սրբատաշ քարերով՝ շախմատաձև դասավորությամբ։ Սալահատակված է եղել. տանիքը պատած է եղել սալաքարերով։ Ավերակ վիճակում է, քանդված են տանիքը գմբեթի հետ միասին, պատերի վերի մասերը, սալահատակը, թափված են երեսապատ քարերի որոշ մասը, կանգուն մնացած պատերի մեջ առաջացել են ճեղքեր։

2. Ս. Կարապետ եկեղեցի.— *Գտնվում է Կաթուղիկե մեծ եկեղեցու հարավային կողմում։ Միանավ բազիլիկ ձևով կառուցված փոքր շենք է. տանիքը թաղակապ է. արևել-*

Հավուց թառի վանք.—Կաթուղիկե եկեղեցու արևելյան պատի կենտրոնական լուսամուտը և արձանագրությունները։

յան կողմից ունի կիսակլոր փոքրիկ աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կողերից երեքական գլանաձև կիսասյուներ ունեցող շրջանակով։ Մի փոքրիկ լուսամուտ բացվելիս է եղել արևելյան պատից։ Շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով մածուցված։

Կառուցման ժամանակը և կառուցողները անհայտ են, իր կառուցողական ձևերով վերաբերում է Ժ—ԺԱ դարերին։ Ավերակ վիճակում է, պահպանվել է հյուսիսային պատը և դրան կից արևելյան պատի կես մասը, ինչպես և մուտքի շրջանակի հյուսիսային կողմի մասը։ Քանդված բեկորների մի մասը թափված է տեղում, իսկ մեծ մասը անհայտացած է։

3. Մատուռ.— Գտնվում է Կաթուղիկե և Ս. Կարապետ եկեղեցիների արանքում. հավանաբար եղած լինի դամբարան։ Փոքր է, ուղիղ քառանկյունի հատակագծով։ Ծածկը թաղակապ է։ Արևելյան կողմից ունի կիսակլոր շատ փոքրիկ աբսիդ՝ ցածրիկ բեմով և վեմքարով, որը կալունակի ձևով ագուցված է արևելյան պատի մեջ։

Նկատվում է, որ կողերից պատեր չի ունեցել, այլ օգտագործվել են երկու եկեղեցիների պատերը, որոնց կից ձգվում են կիսասյուներ։ Վերջիններս միանում են որմակամարներով, որոնց վրա հենվում են ծածկի թաղի եզրերը։ Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով. արևելյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ լուսամուտ՝ կամարակապ գագաթով և ծաղկեհյուս քանդակներ ունեցող պսակով։

Մուտքի առջևում կառուցված է փոքրիկ սրահ, որի մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով և զեղազարդ պարակալով։ Վերջինս կողերից գլանաձև կիսասյուների ձևով է, որոնք ունեն իարիսխներ ու խոյակներ։ Խարիսխները ստորին մասում քառակուսի են, հարթ կողերով, իսկ վերևի մասում՝ ծայրերից սեղմված գնդի ձևով։ Միաժամանակ մուտքը եզերվում է ծաղկեհյուս քանդակներով պատած մի ուրիշ շերտով։

Կառուցման վերաբերյալ արձանագրությունը փորագրված է մուտքի ճակատակալ քարի վրա, որի սկզբի մասը, որտեղ սովորաբար լինում է կառուցման տարեթիվը և կառուցողի անունը, պոկվել, վայր է ընկել ու անհետացել, ուստի սրա կառուցման ճիշտ ժամանակը և կառուցողի ո՛վ լինելը պարզ չէ. հավանաբար կառուցված լինի ԺԸ—ԺԳ դարերում։

Կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով։ Ավերակ վիճակում է՝ քանդված է ծածկը, արևմտյան պատը, ընկած է մուտքի ճակատակալ քարը. պահպանվել են սրահի որմասյունները և որմակամարների մի մասը։ Քանդված մասերը թափված են տեղում՝ փլատակների ձևով։

4. Խաչքար-մահարձան.— Գտնվում է Կաթուղիկե եկեղեցուց դեպի արևմուտք, եկեղեցու մուտքի հարավային կողմում։ Պատվանդանը ուղիղ քառանկյունի հատակագիծ ունի, երկարաձիգ՝ հարավից հյուսիս ուղղությամբ։ Կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով։ Կազմված է չորս կարգից՝ ստորին կարգը կամ հիմքի մասը ցածր է, հարթ կողերով, երկրորդ կարգը բարձր է, արևմտյան երեսը պատած է շատ բարակ գլանաձև կիսասյուների զարդաքանդակներով, որոնք միացած են որմակամարներով։ Երրորդ կարգը կարնիզային մասն է, իսկ չորրորդ կարգը երեք հատ՝ ուղիղ քառանկյունի ձևով, հարթ կողերով առանձին քարեր են, որոնց վրա ամրացված են եղել խաչքարերը, որը հանդիսացել է մահարձանի կոթողի մասը։ Պատվանդանի երկարությունը 3,0 մետր է, լայնությունը 0,6 մետր և բարձրությունը 1,6 մետր։*

Վրան եղած երեք խաչքարերից մեկը վայր է ընկած պատվանդանի առջևում և ջարդոտված մանր կտորների, որոնք խառնված են այլ բեկորների հետ։ Մյուս երկու խաչքարերը անհայտացած են։ Մահարձանի պատվանդանի վրա փորագրված արձանագրություններից (տե՛ս արձանագրությունների բաժնում) իմացվում է, որ խաչքարերից մեկը կանգնեցրել է Սարգիս քահանան ՈԿ (1211) թվականին. իսկ մյուս երկու խաչքարերը՝ Ծնովք քահանան։ Բայց որովհետև այդ մասին եղած արձանագրության սկզբի մասը թափված է, որտեղ սովորաբար լինում է տարեթիվը, ուստի դրանց կանգնեցման ժամանակը ստույգ հայտնի չէ։ Սակայն անկասկած է, որ նրանք նույնպես կանգնեցված լինեն ԺԳ դարում։

5. Խաչքար-մահարձան.— Գտնվում է Կաթուղիկե եկեղեցու արևմտյան պատին կից, արտաքուստ, մուտքի հյուսիսային կողմում։ Կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով։ Ամբողջապես ավերակ է ու ծածկված փլատակներով, որոնց միջից նկատվում են պատվանդանի հիմնամասերը՝ ուղիղ քառանկյունի ձևով և առջևում թափված բեկորների մեջ մի քար՝ վրան գլանաձև բարակ կիսասյուների զարդաքանդակներով։ Վերջինս անկասկած պատվանդանի բեկորներից է, ուստի պարզ է դառնում, որ այդ մահարձանն էլ պետք է կառուցված լինի նախորդի ձևով։

6. Խաչքար-մահարձան.— Գտնվում է Կաթուղիկե եկեղեցու արևմտյան կողմում՝ հյուսիսային պատի ուղղությամբ, չորս մետրաչափ եկեղեցուց հեռու։ Պատվանդանը կապտագույն բազալտի մի ամբողջական քարից է, հարթ կողերով, ուղիղ քառանկյունի ձևով. երկարությունը մեկ մետր է, բարձրությունը 0,6 մետր և նույնչափ լայնությունը։

Խաչքարը սովորականի պես շքեղորեն քանդակազարդված է, բարձրությունը 1,5 մետր է, լայնությունը 0,88 մետր և հաստությունը 0,27 մետր։ Գրավոր հիշատակություններ չունի, ուստի հայտնի չէ, թե ե՞րբ է կառուցված այն, ո՞ւմ հիշատակին և ո՞վքեր են եղել նրա կառուցողները։ Նրա մշակման ձևերը բնորոշ են ԺԳ դարին։

7. Գերեզմանոց.— Տարածվում է Կաթուղիկե և Ս. Կարապետ եկեղեցիների շուրջը, բարձունքի ողջ գագաթով մեկ, այնպես որ բավականին մեծ գերեզմանոց է։ Գերեզմանաքարերը բոլորն էլ կապտագույն բազալտից են և մշակված են զանազան ձևերով՝ քառակող հարթ երեսով, օրորոցաձև, բարձրադիր լայն կողերով և այլն։ Դասավորված են առանձին շարքերով, իրար շատ մոտիկ՝ խիտ ձևով։ Բոլորն էլ թաղված են գետնի



Հավուց թառի վանք.—Արևելյան խմբի Ռուշարձանների ընդհանուր հատակագիծը։

մեջ, ոմանք ծածկված հողով։ Հարթ երես ունեցող մի գերեզմանաքարի վրա քանդակված է դավազան. մի քանիսի վրա նկատվում են տապանագրություններ ՈՂԵ (1246), ՁԼԱ (1282) թվականներով և այլն։ Մենաստանի ամենահին գերեզմանոցն է, ուր թաղումները շարունակվել են մինչև ԺԷ դարը։

8. Խաչքար-մահարձան.— Գտնվում է հիշյալ գերեզմանոցում, Կաթուղիկե եկեղեցու արևելյան կողմում։ Հիմնովին ավերակ վիճակում է՝ մնում են պատվանդանի մասի կրաշաղախ միջուկը՝ ուղիղ քառանկյունի ձևով։ Կից թափված են բեկորների մի մասը, որից երևում է, որ կառուցված է եղել կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, սովորականին պես բարձր պատվանդանով։

Արևելյան կամ սարահարթի վրայի խումբ

9. Ամենափրկիչ—Ս. Աստվածածին եկեղեցի.—Հավուց թառի միաբան Քուրդ Հովհաննեսի արտագրած արձանագրության մեջ, որը փոխագրված է եղել նկարագրվող եկեղեցու հարավային պատի արտաքին երեսի վրա, ասվում է, որ Գրիգոր Մագիստրոսը 1013 թվականին կառուցում է այդ եկեղեցին որպես «Հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին... հրամանաւ Մօր Տեառն մերոյ

Սուրբ Աստուածածնինն։ Այդտեղից էլ բխում է, որ այդ եկեղեցին պետք է կոչվեր Ամենափրկիչ և Ս. Աստվածածին կրկին անուններով։ Որ հիշյալ արձանագրությունը իրոք փորագրված է եղել հենց այդ եկեղեցու վրա, դա որոշակիորեն երևում է այն բանից, որ վանքում եղած մյուս բոլոր եկեղեցիների հարավային պատերը կանգուն են և միայն այդ եկեղեցու հարավային պատն է քանդված։ Բացի այդ, նրա կառուցողական ձևերն էլ, ինչպես այդ պարզ կլինի նկարագրությունից, միանգամայն բնորոշ են ԺԱ դարին։

Եկեղեցին եղել է գմբեթավոր մի կառուցվածք և, որքան այդ թույլ են տալիս դատելու նրա պահպանված մասերը, ունեցել է ուղիղ քառանկյունի, արևելքից-արևմուտք քիչ երկարաձիգ հատակագիծ։ Կողերի պատերը արևմտյան ծայրերում մոտիկ ունեն հատուկ ելուստներ, որոնց ծայրերից, ինչպես և արևելյան աբսիդի եզրերից ձգվող կիսասյուները միացած են եղել կամարներով, իրենց վրա կրելով գմբեթը։ Արևելյան կողմից ունեցել է կիսակլոր աբսիդ՝ կից խորաններով։ Պահպանված մուտքը արևմտյան կողմից է, որը տանում է գավթի ներսը։

Ամբողջ շենքը կառուցված է եղել կարմիր տուֆի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով մածուցված։ Պատերն արտաքուստ ունեցել են երեք կարգ հենապատ և զարդարված են եղել գլանաձև կիսասյուներով, որոնց մնացորդները նկատվում են պատերի կանգուն մնացած մասերի վրա։

Հիմնովին ավերակ վիճակում է՝ սկզբնապես ավերվել է 1679 թվականի մեծ երկրաշարժից. ապա 1722 թվականին այնտեղ մի նոր եկեղեցու կառուցման կապակցությամբ օգտագործում են երկրաշարժից քանդված մասերը, ինչպես և քանդում կանգուն մնացած մասերը։ Այժմ պահպանվել է միայն եկեղեցու հարավային պատի կենտրոնական մասը։

10. Գավիթ.— Մի մասով կից է Ամենափրկիչ—Ս. Աստվածածին եկեղեցուն՝ արևելյան կողմից։ Թե ե՞րբ է կառուցվել այդ հետաքրքրական շենքը և ո՞վքեր են եղել նրա կառուցողները, պարզ չէ։ Նրա կառուցողական ձևերը խիստ բնորոշ են ԺԲ դարին։

Գավիթը նույնպես ավերակ վիճակումն է՝ սկզբնապես քանդվել է 1679 թվականի երկրաշարժից, ապա 1722 թվականին՝ նոր եկեղեցի կառուցելու կապակցությամբ։ Այդ վերջինս տեղադրված է այնպես, որ բռնել է գավթի հյուսիսային կես մասը։ Պահպանվել են միայն արևելյան և արևմտյան պատերի հարավային կես մասերը, հարավային պատի ստորին քարաշարը և ներսում հարավային կողմի երկու սյուների խարիսխները։

Գավթի պահպանված մասերը, ինչպես և տեղում թափված բեկորները ինքնին վկայում են, որ դա եղել է ճարտարապետական մի հոյակապ կառուցվածք։ Սա նույնպես կառուցվել է գավիթներին հատուկ ձևով, այն է՝ ներսում եղած չորս սյուները և յուրաքանչյուր պատին կից ձգվող երկուական կիսասյուները միացել են կամարներով, կազմելով թաղակապ ծածկը, կենտրոնում հատուկ լուսանցքով՝ երդիկի ձևով։ Թե՛ սյուների և թե՛ կիսասյուների բները, խարիսխները ու խոյակները ամբողջական մեծ քարերից են եղել՝ բները գլանաձև, իսկ խարիսխները ու խոյակները մի ծայրում քառակուսի, իսկ հակառակ ծայրում գնդաձև։ Կիսասյուները միաժամանակ միանալիս են եղել որմակամարներով, պատերի վրա առաջացնելով սաղրիկ, բայց ծավալուն խորշեր։

Հարավ-արևելյան անկյունում ունի կրկնահարկ խորաններ, որոնց մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ գավթի մեջ։ Դեպի վերին հարկի խորանը բարձրանալիս են եղել գավթի արևելյան պատին կից կառուցված քարե սանդուղքով։

Գլխավոր մուտքը եղել է արևմտյան կողմից, կենտրոնի թևից։ Բացի Ամենափրկիչ եկեղեցին տանող մուտքից, մի ուրիշ մուտք էլ արևելյան պատից տանում է կից կառուցված դամբանատունը։ Մի փոքր լուսամուտ բացվում է արևելյան պատից։ Ամբողջ շենքը կառուցված է եղել կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով մածուցված. սալահատակված է եղել, հատակին նկատվում են մի քանի դերեզմաններ։

Հուշարձանը զարդարված է եղել բազմապիսի նուրբ ձևերով մշակված քանդակներով, որոնց մեջ խիստ բնորոշ ու հետաքրքիր են հնգաթև աստղերի ձևով զարդաքանդակները։ Հարուստ է եղել վիմագիր արձանագրություններով, որոնց բեկորները նկատվում են ամենուրեք՝ պատերի, սյուների բների, խոյակների, խարիսխների և ամեն տեսակ բեկորների վրա։

11. Ս. Հարություն՝ եկեղեցի-դամբանատուն-զանգակատուն.— Գտնվում է Գավթի արևելյան և Ամենափրկիչ եկեղեցու հարավային կողմերում՝ կից երկուսին։ Սրա կառուցման ճիշտ ժամանակը նույնպես պարզ չէ. հայտնի չէ նաև, թե ո՞վքեր են եղել նրա կառուցողները։ Արևելյան Հայաստանի մի շարք վանքերում բնորոշ է այն հանգամանքը, որ դամբանատունը, եկեղեցին և զանգակատունը միավորված են եղել մի ընդհանուր շենքում. ըստ որում ստորին հարկը, որ սովորաբար կիսագետնափոր է եղել, ծառայել է որպես դամբանատուն, երկրորդ հարկը հարմարեցված է եղել եկեղեցու՝ դամբանատանը

Հավուց թառի վանք.—Նորակառույց անավարտ եկեղեցու արևելյան մասը ներսից:

թաղվածների հիշատակին ժամերգություն կատարելու համար, իսկ երրորդ հարկը, որը հանդիսացել է այդ ընդհանուր շենքի գմբեթը, ծառայել է որպես զանգակատուն։ Վերջիններս առանց բացառության եղել են սյունադարդ։ Այդ ձևով են կառուցված, օրինակ, Ամադու նորավանքի, Նոր Գետիկավանքի կամ Գոշավանքի, Հաղբատավանքի և շատ ուրիշների դամբանատուն-եկեղեցի-զանգակատուն շենքերը։

Այդ նույն հանգամանքը նկատվում է նաև այստեղ՝ Հավուց թառի վանքում։ Չնայած այն բանին, որ ամբողջական շենքը քանդված լինելու պատճառով նրա վերին հարկերի լրիվ պատկերը որոշ չէ, սակայն մի բան պարզ է, որ այստեղ էլ գործադրվել է նույն սկզբունքը, ինչպես վերը նշված վանքերում։ Եվ որովհետև դամբանատունը ծառայել է որպես ննջեցյալներ թաղելու տեղ, իսկ թաղման և հարության հասկացողությունները խիստ առնչված են միմյանց, ուստի այդ կարգի շենքերը առանձին դեպքերում կոչվել են Ս. Հարություն, որպիսի երևույթը նկատվում է նաև Հավուց թառի վանքում։

Դամբանատուն-զանգակատան շենքի հատակագիծն արտաքուստ քառակուսի ձև ունի, ներսից խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Կիսագետնափոր է, դեռևս փորելիս բացվել են դավթի և եկեղեցու՝ նրան կից պատերի հիմքերը։ Արևմտյան և հյուսիսային կողմերից ինքնուրույն պատեր չունի, այլ դավթի և եկեղեցու պատերին կից ձգվում են որմասյուներ, որոնք միանալով որմակամարներով, իրենց վրա են կրում ծածկի թաղի այդ կողմերի եզրերը։ Յուրաքանչյուր անկյունում կա մի-մի կամարակապ, խոր, մեծ խորշ՝ խորանների նմանությամբ։ Միակ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվելիս է եղել դավթի մեջ։

Ներսակողմից՝ քանդված է ողջ ծածկը, պատերի վերի մասերը՝ մինչև որմակամարների կեսերը (միայն հարավային պատի որմակամարն է մնում ամբողջական), թափված են հարավային պատի արտաքին երեսապատ քարերը։ Քանդված մասերը մասամբ թափված են ներսում, իսկ մեծ մասը տարել և օգտագործել են նոր եկեղեցու շինարարության վրա։ Կանգուն մասերը շարված են կարմրագույն տուֆի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով, որոնց վրա փորված են բազմաթիվ պարզ խաչեր։ Կառուցողական ձևերը բնորոշ են ԺԳ—ԺԴ դարերին։

12. Նորակառույց եկեղեցի.— Կառուցումն սկսվել է 1721 թվականին, Մաղաքիա վարդապետի առաջնորդության ժամանակ, հասցվել է մինչև ծածկի թաղի հիմքերի մասը



Հավուց քառի վանք.—Նորակառույց անավարտ եկեղեցու հատակագիծը։

և թողնվել անավարտ։ Այդ եկեղեցու հիմնադրմամբ, կարծես լրացվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի պատճառով վանքի հուշարձանների ավերումը, որովհետև հիմնադրելով գավթի շենքի տեղում, ամբողջովին քանդել են նրա հյուսիսային պատը, արևմտյան և արևելյան պատերի կեսերը՝ հյուսիսային կողմից և այդ կողմի ներսի երկու սյուները, օգտագործելով նաև երկրաշարժից ավերված մասերը, այդպիսով միանգամայն ոչնչացնելով ճարտարապետական այդ հրաշալի ու հոյակապ կոթողը։ Նույն ձևով են վերաբերվել նաև վանքի մյուս կառուցվածքներին։

Այդ եկեղեցին իր հատակագծով արևելքից արևմուտք ձգվող ուղիղ քառանկյունի տեսք ունի։ Հարավային և հյուսիսային պատերը ներսից ունեն ելուստներ, որոնց ծայրերից ձգվում են որմասյուներ։ Արևելյան ծայրում պատրաստված է աբսիդ, որի երկու կողմերում կան ուղղանկյուն հատակագծով խորաններ։ Վերջիններիս մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, որոնք ունեն ճակատակալ քարեր և եղերվում են կրկնակի կամարներով. գրանցից մեկը անմիջապես եղերում է ճակատակալ քարը և վերջանում է սլաքաձև գագաթով, իսկ մյուսը ձգվում է մինչև որմասյունների բարձրության հավասար և ավարտվում է կիսակլոր-կամարաձև գագաթով։

Միակ մուտքն արևմտյան կողմից է՝ արտաքուստ ուղղանկյուն, ներսից կամարակապ՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով և զարդարուն պարակալով։ Վերջինիս զարդերը երկրաչափական, ստալակտիտ ձևերով են ու պտուտակաձև։ Հարավային և հյուսիսային պատերի մեջ բացվում են երկուական լուսամուտներ, իսկ արևմտյան պատի մեջ մեկ լուսամուտ։

Արևելյան պատի մեջ, արտաքուստ, կան երկու եռանկյունաձև մեծ խորշեր։ Արևմտյան պատի մեջ, արտաքուստ, մուտքի երկու կողքին կան մեկական կամարակապ գագաթով խոր, մեծ խորշեր, որոնց ներսը պատած է բուսական, երկրաչափական և ստալակտիտ ձևերի զարդաքանդակներով։ Նույնաչափ հինգ խորշեր էլ գտնվում են արևելյան աբսիդի պատերում՝ համաչափ ձևով դասավորված. եզրերում և կենտրոնում եղած խորշերի գագաթները սլաքաձև են, իսկ մյուս երկուսի գագաթները կամարակապ։ Զորսական մեծ խորշեր էլ կան հարավային և հյուսիսային պատերի մեջ՝ ներսից։ Արևմտյան ծայրերին եղածները սլաքաձև գագաթով են, իսկ մյուսները կամարակապ գագաթով։ Բոլոր այդ խորշերը զարդարված են բուսական, երկրաչափական և ստալակտիտ ձևերի քանդակներով։

Արևմտյան պատում եղած խորշերի մեջ ագուցված են մի-մի խաչքար, որոնք բերված են այլ տեղից։ Խաչքարերը շքեղ քանդակազարդված են, որոնց մեջ հետաքրքիր են եղրերի շերտերի վրա եղած 8 թևանի աստղաձև քանդակները։ Հյուսիսային պատի մեջ, արտաքուստ, դրված է մի մեծ քարի հին բեկոր, որի ամբողջ երեսը պատած է հնգաթև աստղանման զարդաքանդակներով։ Եկեղեցու պատերի վրա փորված են բազմաթիվ խաչերը։ Բոլոր անկյունավորման մասերը պատած են պտուտակաձև-պարանահյուս քանդակներով, իսկ դրանց կից մասերը՝ երկրաչափական զանազան ձևերի զարդաքանդակներով պատած նեղ շերտով։

Ընդհանրապես այդ եկեղեցու շենքը իր կառուցողական և մշակման ձևերով հայ ճարտարապետության ու արվեստի կատարյալ աղավաղումն է։



Հալուց բաղի վանք.—Գավթի պյուներից մեկի խոյակը ընկած վանքի բակում, վրան արձանագրություն:

13. Պարիսպ.— Զգվում է վանքի հուշարձանների արևելյան խմբի շուրջը՝ քառակուսի ձևով։ Պատերը շարված են անմշակ, տարբեր մեծության լեռնաքարերից՝ ցեխով մածուցված։ Պատերի մեջ օգտագործված են խաչքարերի բազմաթիվ քանդակազարդ բեկորներ և այլ քարեր, ոմանց վրա կան արձանագրության կտորներ։ Պարսպապատերի հաստությունը մեկ և կես մետր է, բարձրությունը մինչև 8 մետր։

Գլխավոր մուտքը հարավային կողմից է։ մի այլ մուտք էլ բացվում է արևելյան կողմից։ Երկու մուտքերն էլ արտաքուստ ուղղանկյուն են, ներսից կամարակապ։ առանձին ճակատակալ քարերով։ Հարավային մուտքի ճակատակալ քարը կիսակլոր է, իսկ արևելյան մուտքինը երկարավուն։ Պարսպապատերին կից, թե՛ դրսից և թե՛ ներսից, թափված են զանազան հին բեկորներ՝ գերեզմանաքարեր, խաչքարեր, շենքի քարեր և այլն։ Տեղացի այլազգի բնակիչները, ելնելով նրա ամրակուռ պարիսպներից, վանքը անվանել են Կրդ-կալա (Աղջկա բերդ), ըստ որի օտար ճանապարհորդները սխալմամբ Կարմիր բերդ են թարգմանել։

14. Վանքի միաբանության բնակելի շենքերը.— Կառուցված են պարսպապատերին կից, ներսի կողմից՝ արևմտյան պատի ամբողջ երկարությամբ և դրան կից հարավային ու հյուսիսային պատերի՝ մինչև վերջիններիս կեսերը։ Որոշ շենքերի հետքեր էլ նկատվում են պարսպի հարավ-արևելյան անկյունում։ Պարսպի արևմտյան պատին կից շենքերը երկհարկանի են, իսկ մյուսները մի հարկանի։

Հարավային պատին կից եղած շենքը շատ մեծ է՝ երկար ու լայն, ծածկը թաղակապ. մուտքը հարավային կողմից է՝ պարսպից դուրս, որը ենթադրել է տալիս, թե դա մենաստանի անասնագոմը եղած լինի։ Կողերի պատերին կից ձգվում են պարզ խոյակներով չորսական որմասյուներ, որոնք միանալով կամարներով՝ գոտկում են շենքի առաստաղը։

Այդ շենքի հարավային պատի մեջ, որի հաստությունը երկու մետր է, բացվում են չորս կամարակապ գագաթով խորշեր և երկու լուսամուտ։ Նույնաձև 12 խորշեր էլ կան հյուսիսային պատի մեջ, որոնք հավանաբար անասունների մսուրներ եղած լինեն։ Մեկական լուսամուտներ էլ բացվում են արևելյան և արևմտյան պատերի կենտրոնական մասերից։

Մի երկրորդ մուտք էլ բացվում է այդ նույն շենքի արևմտյան պատից, որը տանում է պարսպի հարավ-արևմտյան անկյունում ե-

ղած բնակարանը։ Այդ բնակարանի վրա հետագայում ավելացրել են երկրորդ հարկ, որի մուտքը հյուսիսային կողմից է՝ դեպի մենաստանի բակը։ Յուրաքանչյուր հարկի արևմտյան պատից բացվում է մի-մի լուսամուտ։ Վերի հարկն ամբողջովին փլվել ու թափվել է ստորին հարկի մեջ։

Արևմտյան կողմի շենքերի ստորին հարկերի ծածկը թաղակապ է, իսկ վերին հարկի շենքերինը փայտածածկ։ Ամբողջապես փլված են վերի հարկերի շենքերը, իսկ ստորին հարկի շենքերի որոշ մասը։ Որոշակի կերպով նկատվում է, որ վերին հարկի շենքերը հետագայում են ավելացրել։ Հյուսիսային կողմի շենքերի ծածկը նույնպես թաղակապ է և ենթարկվել է նկատելի չափով վերանորոգումների ու վերակառուցումների։

Բոլոր շենքերի պատերն ու ծածկը անմշակ լեռնաքարերից են, իսկ առաստաղը դուտկող կամարները, որմասյունները և մուտքերի կողերի քարերը կապտագույն բազալտի սրբատաշ քարերից, ըստ որի թաղակապ ծածկ ունեցող ստորին հարկի ավելի հին շենքերի շարվածքը կրաշաղախով է, իսկ վերի հարկի ավելի ուշ կառուցած փայտածածկ շենքերի շարվածքը ցեխով է։ Բոլոր շենքերի պատերի մեջ օգտագործված են հին շենքերի բեկորներ, դերեզմանաքարեր ու խաչքարեր, ոմանք քանդակազարդ և արձանագրության մասերով։

Բոլոր շենքերն էլ ավերակ վիճակում են, բացառությամբ անասնագոմի. պահպանվել են պատերի ու ծածկի որոշ մասերը։ Դրանց մի մասի կառուցումը վերաբերում է ԺԳ դարին, իսկ մյուս մնացած մասերինը՝ ավելի ուշ ժամանակներին։

16. Ջրամբար.— Ինչպես մյուս վանքերը, Հավուց Թառի վանքն էլ ունեցել է իր ջրամատակարարման սիստեմը, ոռոգման և խմելու համար։ Պարսպից դուրս, հարավային դարբասի առջևում, սարալանջը արևմտյան կողմից ամրացված է ամբարտակաձև պատով, իսկ դրան կից փորելով սարալանջը, կազմել են մի մեծ ավազան։ Ջուրը քարե կիսախողովակների միջով ջրամբարն է լցվում տարբեր կողմերից։ Իսկ ամբարտակ պատի ստորին մասում պատրաստված է հատուկ անցք՝ ջրի արտահոսման համար։ Ամբարտակ-պատի մեջ օգտագործված են հին շենքի բեկորներ, դերեզմանաքարեր, խաչքարեր, ոմանք քանդակազարդ և արձանագրության մասերով։

Այս ջրամբարի հյուսիսային կողմում, պարսպին կից շինված է մի փոքրիկ սենյակ, որի պատերը շարված են զանազան քարերից՝ ցեխով, ուր օգտագործել են նաև հին բեկորները՝ ինչպես ամբարտակ-պատը։ Եղել է փայտածածկ և հավանաբար հանդիսացել է դռնապան-պահակի կացարանը։

18. Ս. Կարապետ մատուռ-դամբարան.— Գտնվում է վանքի արևելյան խմբից քառորդ կիլոմետրաչափ դեպի արևելք, սարալանջին, անտառի մեջ։ Հյուսիսային պատի վրա փորագրված արձանագրության համաձայն այն կառուցել են Սոսթանես, Մատթեոս և Գրիգորես կրոնավորները՝ իրենց ուսուցիչներ Սեթի և Սիմոնի ու այլ ենթեցյալների գերեզմանների վրա՝ 1213 թվականին։

Սովորական մատռան ձևով կառուցված, քիչ ավելի մեծ մի շենք է, որի մուտքն արևմտյան կողմից է՝ գլանաձև կիսասյուներ ունեցող շրջանակով և կիսակլոր ճակատակալ քարով. արևելյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ լուսամուտ։

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով։ Արևմտյան պատի մեջ, արտաքուստ, գրված են քանդակազարդ փոքր խաչքարեր։ Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։ Քանդված է ծածկը, արևմտյան պատի վերի մասը՝ մուտքի ճակատի հետ միասին, արևելյան պատի կենտրոնի մասը. թափվել են արսիդի տանիքի սալաքարերը։ Քանդված մասերը թափված են հուշարձանի ներսը և շրջապատը։ Սարալանջից սղացող հողն ամբողջապես ծածկել է հյուսիսային պատը։

17. Խաչքար-մաճարձան.— Գտնվում է Ս. Կարապետ մատռան հարավային կողմում, արևմտյան պատի հարավային ծայրին կից։ Պատվանդանը և խաչքարի ստորին մասերը ծածկված են սարալանջից սղացող հողով։ Խաչքարի ազատ պահպանված մասը սովորական ձևով շքեղ քանդակազարդված է. ըստ քանդակների մշակման ձևի պատկանում է ԺԳ դարին։

18. Խաչքար-մաճարձան.— Գտնվում է Ս. Կարապետ մատռան հյուսիսային կողմում, արևելյան պատի հյուսիսային ծայրին կից։ Կազմված է պատվանդանից և խաչքարից, երկուսն էլ կապտագույն բազալտից և նույն ձևով մշակված։ Պատվանդանը ուղիղ քառանկյունի է, հարթ կողերով, վերևի մասը քանդված է, իսկ ստորին մասը ծածկված է հողով։ Երկարությունը 1,20 մետր է, լայնությունը 0,80 մետր։

Խաչքարը սովորական ձևով շքեղ քանդակազարդված է. լայնությունը մեկ մետր է, հաստությունը 0,27 մետր և բարձրությունը 2,85 մետր։ Վերջինս իր տեղից վայր է ընկած և սարալանջով գլորվել է չորս մետրաչափ դեպի ցած։ Գրավոր հիշատակություններ չեն նկատվում. իր մշակման ձևերով հատուկ է ԺԲ—ԺԳ դարերին։

10. Մահարձան-կոթող.— Գտնվում է Ս. Կարապետ մատուռից 30 մետրաչափ դեպի հյուսիս արևելք, թփուտների մեջ։ Նստվածքը ուղիղ քառանկյունի է, երկարաձիգ՝ հարավից հյուսիս ուղղությամբ։ Արևելյան, հարավային և հյուսիսային կողերը հարթ են, տանիքի մասը վեղարաձև, իսկ անկյունները գլանաձև։ Արևմտյան նրեսը խորշաձև է, խորշի եզրերը գլանաձև են, որոնց ամենավերի մասը խոյականման է և իրար հետ միանում են ծաղկեհյուս զարդաքանդակներ ունեցող շերտով՝ որմակամարի ձևով։ Խորշի կողերից ձգվում է շղթայաձև զարդաքանդակներ ունեցող շերտ՝ շրջանակի նմանությամբ։ Այդ նույն խորշի մեջ ագուցված է կարմրագույն տուֆից պատրաստված զեղաքանդակ մի խաչքար։ Կառուցված է սև ու կարմիր տուֆի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով։

Հյուսիսային կողի վրա փորագրված արձանագրության համաձայն, մահարձանը կառուցել է վանքի սպասավոր Պողոսը՝ վանքի միաբաններ Հովհաննես քահանայի և Հովսեփ ու Վարդ կրոնավորների գերեզմանների վրա։ Այս Հովհաննես քահանայի և Հովսեփ կրոնավորի մասին հիշատակվում է Հավուց Թառի վանքում 1464 թվականին գրված մի ձեռագրի հիշատակարանում՝ որպես այդ ձեռագրի կազմողների, հետևապես կոթողի կառուցումը պետք է վերաբերի ԺԵ դարին։

20. Խաչարձան.— Ս. Կարապետ մատուռից հիսուն մետրաչափ դեպի հյուսիս-արևելք, մացառուտների մեջ պահպանվել է մի խաչարձանի պատվանդանը՝ շարված կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով։ Վրայի խաչքարն ընկած ու անհայտացած է. պատվանդանն էլ քանդված է՝ քարերի մի մասը թափված է տեղում, իսկ մի քանի քարեր էլ դլորվել են սարալանջով ներքև։

21. Հավուց թառ բնակատեղի.— Տարածվում է վանքի շուրջը՝ ընդարձակ տարածության վրա. տեղում պահպանվել են առանձին տների քարաշար պատերի մնացորդները և որոշ տների հետքերը՝ փոսերի ձևով։ Մեծ մասամբ անտառապատված է, մի մասն էլ վեր է ածված վարելահողերի ու խոտհարքի։

22. Խաչարձան-մահարձան.— Մենաստանից քառորդ կիլոմետրաչափ դեպի հարավ-արևմուտք, ձորակի հակառակ ափին, Գառնի տանող կածանի աջ կողմում պահպանվել է մի մահարձան, որի վրա փորագրված արձանագրությունից իմացվում է, որ այն կառուցվել է ՉԻԵ (1276) թվականին, Հակոբ քահանայի գերեզմանի վրա։ Անկասկած է, որ վերջինս եղել է Հավուց Թառի միաբաններից մեկը։

Ամբողջ մահարձանը կառուցված է կապտագույն բազալտի խիստ ողորկ ձևով մշակված քարերով՝ կրաշաղախով։ Պատվանդանի ստորին-հիմքի մասը աստիճանավոր է՝ երեք աստիճաններով, միջին մասը բարձրադիր է՝ կարնիզային մասով, իսկ դրա վրա դրված է խաչքարի հիմքը հանդիսացող մեծ քարը։

Խաչքարը բարձրադիր է, սովորական ձևով շքեղորեն քանդակազարդված, տեղահան է եղած և ընկած գետնին։ Պատվանդանից նույնպես թափված են առանձին քարեր։

23. Երկու տարբեր խաչքարերի մեկական բեկորներ էլ ընկած են վանքից հարյուր մետրաչափ դեպի հարավ-արևելք, բարձունքի ստորոտում։ Մի խաչքարի ստորին մասն է, իսկ մյուսի վերին մասը։ Երկուսն էլ կապտագույն բազալտից են, գեղեցիկ և նուրբ ձևով մշակված զարդաքանդակներով։ Վերի մասը հանդիսացող բեկորի գագաթը կամարաձև է, կամարի շրջանակի մեջ քանդակված է մի հեծյալ՝ նիզակը ձեռքին, իսկ սրա վերևում փորագրված է «Ժուրբ Սարգիս»։ Դրանցից քիչ ներքև, ձորալանջին ընկած է խաչքարերից մեկի պատվանդանը։

Խաչքարերի այդ բեկորներն իրենց հիմնական տեղում չեն, անկասկած է, որ դրանք բերված են Հավուց Թառի վանքից։

Գ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հավուց Թառի վանքը հարուստ է եղել վիմագիր արձանագրություններով, որոնց մեծագույն մասը ոչնչացել է 1679 թվականի երկրաշարժի պատճառած ավերածություններից և 1722 թվականին նոր եկեղեցի կառուցելու կապակցությամբ տեղի ունեցած քանդումներից։ Այդ արձանագրությունների առանձին մասերը նկատվում են պարսպապատերի, միաբանության բնակելի շենքերի և ջրամբարի պատերի մեջ օգտագործված, ինչպես և գետնին թափված բազմաթիվ բեկորների վրա։

Շատ սահմանափակ թվով արձանագրություններ են պահպանվել հուշարձանների վրա՝ ամբողջական վիճակում, սակայն դրանց մի մասն էլ հողմահարված լինելու պատճառով լրիվ ընթեռնելի չեն։ Մեջ ենք բերում համեմատաբար լրիվ պահպանված արձանագրությունները՝ վերծանված ձևով։

Ա. Կաթուղիկե եկեղեցու հյուսիսային պատի վրա.

1. Կամաւն Աստուծոյ մեք նուաստ քահանայքս՝ Թադէոս և Հայրապետ ստացաք Աւետարան
2. զարդարեալ ոսկով և արծաթով ի մեր արդեանց և տուաք ի սուրբ ուխտս և այլ արդիւնք. և պպ-. . . . . .

3. սաւորքս ետուն ՌԻ։ աւր ժամ մեզ ամեն ամի. կատարիչքն աւրհնին ի Տեառնէ։

Բ. Նույն տեղում.

1. Շնորհիւն Աստուծոյ Գորգա հայրն ետու զիմ
2. այգին ի սուրբ ուխտս և սպասաւորքս ետուն ՌԶ։ աւր
3. ժամ ՌԻ։ ինձ ՌԻ։ Եղոգակաթա ՌԻ։ Ստեփանոսի։

Գ. Դարձյալ նույն տեղում.

1. Եւ ես Մխիթար վարդապետ և քոյր իմ Թամար որ զմեր այգին տուաք և
2. զՍնահողն. է ժամ գրեցին ՌԻ։ ինձ ՌԻ։ Թամարին ՌԻ։ Մաթարին
3. ՌԱ։ իմ հաւրն և մաւրն։ Կատարիչքն աւրհնին ի Տեառնէ։

Դ. Նորից նույն տեղում.

1. Կամօքն Աստուծոյ ես Գերդ և ամուսին իմ Շաքարս միաբանեցաք Ամենափրկչիս
2. և գնեցաք զՏանձոյան Ջոչեկին ի ՌԻ։ սպիտակի և տուաք ի սուրբ ուխտս, և
3. Սպասաւորք տեղւոյս խոստացան ՌԴ։ աւր պատարագել զՔրիստոս ՌԻ։ աւրն
4. ինձ և ՌԻ։ աւրն Շաքարին։ Կատարիչքն աւրհնին ՌՁԽԻ։ (1293 թ.)։

Ե. Նույն Կաթուղիկե եկեղեցու հարավային պատի վրա.

1. Կամաւն Աստուծոյ ես Յոսեփ Գայլկոնց ետու
2. զԴարապասի խաչի այգոյն բաժինն
3. զիմ ի սուրբ ուխտս և ետուն ՌԴ։ աւր
4. ժամ ՌԱ։ Վաչկանն ՌԱ։ Գալկոյն
5. որ խափանէ դատի յԱստուծոյ։

Զ. Նույն տեղում.

1. Կամաւն Աստուծոյ ես Նուաստ քահանայ
2. Գրիգոր Գոթնոնց ետու զիմ այգին և
3. խաչ և այլ արդիւնք զոր ունէի՝ ի սուրբ ուխտս
4. և խոստացան ի տարոյն ՌԳ։ աւր ժամ ՌԱ։ ինձ ՌԱ։ իմ հաւրն Սարգսի
5. Ա։ իմ մաւրն Քրիստինէ. կատարիչքն աւրհնեսցին
6. և որ խափանէ պատժին յԱստուծոյ։

Է. Հարավային նույն պատի վրա, արտաքուստ.

1. Անուամբ Յիսուսի ես Հնարդս նպաստ եղէ շինութեան եկեղեցոյս յիմ արդար վաստակաց և սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին Բ. աւր ժամ ի տարոյն՝ Ա. ինձ, Ա. ամուսնոյ իմոյ։ Խափանիչքն պատժեսցին, և կատարիչք աւրհնին յԱստուծոյ։

Ը. Նույն Կաթուղիկե եկեղեցու արևմտյան պատի վրա, մուտքից վերև, արտաքուստ.

Ողորմութեամբ Աստուծոյ ես Սարգիս Երևանայ։Մեհեբանց, Թոռն Մարեստրոյ, միաբան եղէ սուրբ ուխտի՝ Հաւտ։ Թառայ և իմ մասն ստացուածոյ յաժանդակ եղէ շինութեան եկեղեցոյս և սպասաւորք սուրբ ուխտիս խոստացան Ժ. աւր ժամ ի տարոյն ի տաւնի Պետրոսի և Պաւղոսի՝ Ե աւր ինձ և ամուսնոյն Խաբեա Խաթունին, որ խափանէ դատապարտեսցի յԱստուծոյ և կատարիչք աւրհնեալ եղիցին. ամէն։

Թ. Կաթուղիկե եկեղեցու արևմտյան կողմում եղած խաչքար-մահարձանի պատվանդանի վրա.

1. ՌԻԿ։ թին (1211)
2. ես Սարգիս անպիտան քահանայ կանկնեցի զսուրբ նշան
3. Քրիստոսի՝ բարեխաւսութիւն ինձ և ծնողաց իմոց և շնորհաղարդ
4. աշակերտի իմոյ Աշոտոյ. որք երկրպագէք յիշեցէք աղա[չեմ]։

Ժ. Նույն տեղում.

1. [ես նուա]ստ քահանա Ենաւք կանգ-
2. [նեցի զսուրբ խ]աչս բարեխաւս ինձ և
3. [ծնողաց] իմոց և Աբրահամու վարդապետին՝
4. [ուսուցչին իմ]ո. աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս։

ԺԱ. Կաթուղիկե եկեղեցուն կից եղած մատուռ մուտքի ճակատակալ քարի վրա.

1. ....շինեցի զեկեղեցիս և ետու խաչս այգի ձակինն պ.....
2. ....Մաղկոցն լանջովն և սպասաւորք սուրբ ուխտիս էտուն
3. [ՌԶ։ աւր ժամ] ՌԴ։ ինձ ՌԱ։ Լիլիփարա ՌԱ։ Աշոտու։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ,
4. [խափան]ողքն դատապարտին ի Տեառնէ։

ԺԲ. Ամենափրկիչ—Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի վրա.

1. Ի թվ. [է] ՃԺԶ (1267), ես Յովանէս Անեցի որդի Սարգսի միաբանեցաք ուխտիս էտու։ ՌԶ։ դահեկան յիմ տապանատունս և սպասաւ-
2. որքս գրեցին յամէն ՌԴ։ աւր պատարագել ինձ զՔրիստոս Զատ-
3. կին. կատարիչքն աւրհնին ի Տեառնէ. ով խափանէ մեր մեղացն տէր է առաջի Աստուծոյ։

ԺԳ. Նույն տեղում, նախորդից ներքև.

1. Ես Շիրիկ ծառա Աստուծոյ միաբան եղէ սրբոցն
2. և ետու ՌԻ։ դահեկան. և գրեցին ՌԱ։ ժամ ինձ ի տարին։

ԺԴ. Անավարտ եկեղեցու դռան առջևում ընկած գավթի մի սյան խոյակի վրա.

1. Ես Մխիթար սպասաւոր Տէր Վրթա-
2. նիսի ետու ՌԻ։ դահեկան ի տունս
3. և ետուն ինձ ՌԱ։ աւր ժամ ի
4. տարոյն։

ԺԵ. Հուշարձանների երկու խմբերի միջև եղած գերեզմանոցում.

Ի թվ ՌՂԵ (1246). փոխեցաւ պարոն Կուկորն ի Յիսուս՝ յիշեցէք։

ԺԶ. Ս. Կարապետ մատուռ-դամբարանի վրա.

1. Թվ ՌԿԲ (1213). շնորհիւն Աստուծոյ մեք նու-
2. ատ աշակերտք Սիթա և Սիւոնի՝
3. Սոսթանէս և Մաթէոս և Գրիգորէս շի-
4. նեցաք զՍուրբ Կարապետս ի վերա շիրմա-
5. ց սոցա. և առաջնորդք սուրբ ուխտիս սահ-
6. մանեցին ։Բ։ ճրագալոյց վասն հոգո-
7. ց նոցա և այլ ննջեցելոց որ յայսր
8. հանգստարանի։

ԺԷ. Նույն Ս. Կարապետ մատռան մոտ եղած խաչարձանի վրա.

1. Այս արձան սուրբ՝ ուծեալ ար-
2. եամբն Քրիստոսի, կանկնեցաւ ի վերա
3. գերեզմանաց աստուածասէր քահանա-
4. յց Ոհանեսի՝ փակակալի Սրբոյ Կա-
5. թողիկէիս և երկու եղբարց իւրո՝
6. թաղեալք ընդ աջմէ և ընդ ահեկէս՝
7. Յովսէփա և Վարդա, ձեռաւք սպասաւորիս
8. բանի եղիայի և Պաւղաւսո և միաբան եղ-
բարցս.
9. աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս։

ԺԸ. Մենաստանից հարավ-արևմուտք, Գառնի տանող կածանի աջ կողմում եղած խաչարձանի վրա.

Ես Յակոբ քահանայ կանգնեցի զսուրբ նշանս ի բարեխաւս ինձ և ծնողաց իմոց. որք երկրպագէք յիշեցէք յաղաւթս. թվիս ՉԻԷ (1278)։

ԺԹ. Գավթի սյան մի բեկորի վրա.

Կամաւն Աստուծոյ ես Ռստակէս և Մատինս ի սուրբ ուխտս ետու զԱչկէն հողերոյն.... և եղբարքն խոստացան տարին պատարագս։ թէ մի ոք զայս հող յեկեղեցւոյս հանէ, դատի յԱստուծոյ. կատարիչքն աւրհնին։

Ի. Կաթուղիկե եկեղեցու մոտ եղած մի գերեզմանաքարի վրա.

Ի թվ. ՌՂԷ փոխեցաւ Մանուկ ի Քրիստոս յիշեցէք։

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԷՋԵՐ ԺԵ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ

(ԺԵ դար)

ԺԵ դարի հայ մանրանկարչության արվեստի պատմության էջերն ուսումնասիրելիս, ուշադրություն է գրավում մի վաստակավոր արվեստագետի ցայտուն դիմանկարը։ Դա մանրանկարիչ Հովհաննես քահանան է, որ իր դարաշրջանում փայլել է ոչ միայն որպես նկարող, ծաղկող, այլև ոսկով նուրբ գեղադարդող։

Այս արժեքավոր արվեստագետի մասին հայ մամուլում մինչև օրս էլ չի գրվել, որով հայ գեղարվեստասերներն ու գրասերները նրա կյանքի և նկարչական գործունեության մասին որևէ գաղափար չունեն։

Նա մեկն է ԺԵ դարի նկարչական հարուստ ձիրքով օժտված այն լավագույն արվեստագետներից, որ նվիրվել է հայ մանրանկարչական մշակույթի զարգացմանը և նկարազարդել է մի շարք ձեռագիր մատյաններ, որոնց մեջ ցոլանում են նրա արվեստի էական հատկանիշները։

Նկարչի կյանքի հիմնական գծերի և մանրանկարչական արվեստի պատմության մասին փաստական տեղեկությունները չափազանց աղքատ են։ Ձեռագիր մատյանների հիշատակարաններից միայն այսքան գիտենք, որ նա ԺԵ դարի վաստակավոր գրչագիր Ստեփանոս քահանայի արվեստագետ որդին է։ Պատանի հասակից նա փայլում է իր ընդունակությամբ, ուշիմությամբ և ցույց է տալիս նկարչական առանձնահատուկ շնորհք, որը զարգանում է իր գեղարվեստագետ հոր մոտ։ Այնուհետև նա, հավատարիմ մնալով իր ապրած ժամանակի կրոնական ոգուն, քահանա է ձեռնադրվում և նվիրվում Հայ եկեղեցու բարեզարդությանն ու պայծառությանը։

Իր քահանայագործության շրջանում նա իր ամբողջ էությամբ նվիրվում է նաև մանրանկարչական արվեստին և վրձինում է մի շարք ձեռագիր մատյաններ, որոնցից մեզ հասած մանրանկարները վկայում են, որ նա լավ է ուսումնասիրել հին արվեստի նրբություններն ու բանաստեղծական գեղեցկությունները։ Այդ նկարների շնորհիվ այսօր ծանոթանում ենք նկարչի արվեստի բնագավառում ձեռք բերած նվաճումների, նրա ոճավորման և վրձինի հմտության հետ։

Նրա նկարազարդած և մեզ ավանդ թողած մի ձեռագիր մատյանն ունի 561 երկար տարիների պատմություն։ Դա Ժ դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» խորագրով լիրիկական պոեմի ձեռագիրն է, որ նկարչի վարպետ գրչագիր հայրը՝ Ստեփանոս քահանան, 1401 թվականին, ընդօրինակել է Ղրիմի Կաֆա քաղաքում։ Դա այն պատմական քաղաքն է, որը մի ժամանակ եղել է մանրանկարչական և գրչական արվեստների կենտրոնը, ուր փայլել են բազմաթիվ տաղանդավոր մանրանկարիչներ, վարպետ ծաղկողներ, հմուտ ոսկողներ, հայտնի գեղագիրներ և նշանավոր գրչագիրներ։

Կաֆա քաղաքի լավագույն մանրանկարիչների շարքում Հովհաննես հոգևորականն իր պատվավոր տեղն ունի։ Այնտեղ է եղել նրա բնակության սենյակը և նկարչական աշխատանոցը, ուր անց է կացրել իր կյանքի նշանակալից մասը։ Այդտեղ էլ նա 1401 թվականին ծաղկանկարել և ոսկով զարդարել է իր հոր գրած «Մատեան ողբերգութեան» ձեռագիրը։ Ահա հիշատակարանի արձանագրու-

թյունը. «... եւ բղղառաձեալս մեզաւք զորդիս անաւրենութեան զդրաւղ սորա՝ զՍտեփանոս սուրաանուն քահանայ, և զիմս մի՝ մոռանայք յիշել, և զՅոհաննէս քահանայն զորդեակն իմ, որ ոսկով զարդարեաց ծաղկելով, յիշեցէք ի Տէր։ Արդ, յամի թուականութեանս Հայոց ՊՁ (1401) աւարտեցաւ մատեանս յաշխարհս Կաղարիոյ, յաստուածապահ քաղաքս Կաֆա, առ ոտն ամենաւրհնեալ Սուրբ Աստուածածինս։

Այս արժեքավոր ձեռագիրը մի թանկագին վավերագիր է, ուր ցոլանում են ԺԵ դարի յայտնի մանրանկարիչ Հովհաննես հոգևորականի նկարչական արվեստի բնորոշ առանձնահատկությունները և նրա վրձինի վարպետությունը։ Այդ մանրանկարներն իրենց նուրբ պատկերավորությամբ և գույների հիասքանչ ներդաշնակությամբ ամեն մի արվեստասերի ուշադրությունն իրենց վրա են կենտրոնացնում։

Ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի պետական ձեռագրատանը։ Դա ԺԵ դարի հայ մանրանկարչական արվեստը պատկերող մի թանկագին աղբյուր է, որն որոշ գաղափար է տալիս ոչ միայն պատմական Կաֆա քաղաքի նկարչական դպրոցի արվեստի, ոճի, այլև արվեստագետ Հովհաննես քահանայի գեղարվեստական ձիրքի ու ճաշակի մասին, մի նկարիչ, որն իր հմուտ վրձինով և ինքնատիպ ոճով հայ մանրանկարչական արվեստի պատմության մեջ կարող է իր արժանի տեղը գրավել։

Ր. ԳՐԻՉ ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅՑՅԻ

(ԺԵ դար)

Մեզանից 555 երկար տարիներ առաջ, 1407 թվականին, հայ գրչական արվեստի գանձարանը հարստանում է մի նոր ձեռագիր մատյանով, որի համար պարտական ենք ԺԵ դարի հայտնի մատենագիր, Տաթևի համալսարանի լավագույն մանկավարժ և վարպետ գրչագիր Մատթեոս վարդապետ Ջուղայեցուն, մեկը դարաշրջանի այն լուսավոր, առաջադեմ ու վաստակավոր մշակներից, որ իր կյանքի լավագույն հատկանիշները նվիրել է իր ժամանակի նոր սերնդի կրթության, դաստիարակության վեհ գործին, միաժամանակ հայ գրչական արվեստի և գրականության զարգացման գծով ուշագրավ դեր է կատարել։ Նա հայ մատենագրության ավանդ է թողել մի շարք ձեռագրեր, որոնց մեծ մասը, սակայն, ժամանակի օտար իշխողների հալածանքների և իրար հաջորդող ավերիչ արշավանքների շրջանում կորել են։

Այս վաստակավոր արվեստագետ հոգևորականի կյանքի և գեղարվեստական գործունեության մասին լուսնենք հարուստ տեղեկություններ։ Գիտենք միայն, որ նա բնիկ ջուղայեցի է, ստացել է համալսարանական բարձրագույն կրթություն, ապա նվիրվել է հոգևորական կոչման և, որ էականն է, իր դարաշրջանում ունեցել է մանկավարժական, գրչական և գրական արդյունավետ գործունեություն։

Չնայած այդ ուշագրավ երևույթներին, նրա կյանքի և մշակութային գործունեության մասին հայ մամուլում մինչև օրս չի արձանագրվել։

Իր ժամանակի այս արդյունաշատ գրչագրի արվեստը զարգացել է դարաշրջանի կրթության, գիտության ու գեղարվեստի մի խոշոր կենտրոնում։ Դա Տաթևի հռչակավոր համալսարանն է, որ հայոց մշակույթի, արվեստի և հատկապես ուսման և կրթության զարգացման գործում նշանակալից դեր է կատարել։ Այնտեղ են հավաքվել, Տաթևի ծաղկման դեռ առաջին շրջանում, մոտ 500 գիտուն, ընդունակ և բանիմաց վարդապետներ, աննման երաժիշտներ, հմուտ նկարիչներ, ծաղկողներ, նշանավոր փիլիսոփաներ, գրչության արվեստի վարպետներ և այլ գիտնականներ, որոնք իրենց լուրջ և բազմակողմանի պատրաստությամբ առանձին փայլ են տվել «գերահռչակ» համալսարանի ուսումնական-կրթական, գիտական և գեղարվեստական կյանքի բովանդակությանը։

Այդ բարձրագույն դպրոցում սովորել են Հայաստանի ամեն կողմերից, տարբեր նահանգներից ու գավառներից եկած ուսումնասեր երիտասարդներ, որոնք լուրջ ուսում և կրթություն են ստացել։

Տաղանդավոր պատմիչ Ստեփան Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսականա» արժեքավոր գրքում Տաթևի ծաղկման մասին ընդգծել է այսպիսի տողեր. «Քահանաւորեալ իրրև զարեգակն ի մէջ աստեղաց, երևելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլև պայծառանայր քահանայական և կրոնաւորական դասուք ի չափ 500 եղբարց... լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարան դպրոցացն վարդապետական կրթութեամբ, նաև արուեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»։

Սակայն Տաթևի հռչակավոր համալսարանն առանձին փայլ է ստանում ԺԴ. դարի վերջերի և ԺԵ դարի անվանի գիտնական Գրիգոր Տաթևացու շնորհիվ. բաժանվում է երեք ուսումնարանների. դրանցից մեկում Տաթևացին «ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրալուր ձայնի ե-զանակաւ. մինչև անգամ յամենայն երկրէ ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա։ և ի միումն՝ նկարագրութիւն պատկերահա-

նութեան և զանազան նկարչութիւնն։ Եւ ի միասին զներքին և զարտաքին գրեանս։ Այդ նշանավոր դպրոցումն էլ, Տաթևացու ղեկավարութեամբ, պատրաստվում են 60-ից ավելի «վարպետ արուեստաւորք նկարչաց և գրչաց»[1], որոնք քայլում են որպես հայտնի գրիչներ, հմուտ նկարիչներ, ծաղկողներ, ոսկողներ և ընտիր գրչագիրներ։ Նրանք արտագրում են և նկարազարդում բազմաթիվ ձեռագրեր և իրենց լավագույն ստեղծագործություններով հարստացնում են գրչական ու մանրանկարչական արվեստների գանձարանը։

Այդ փայլուն և ընդունակ աշակերտների շարքում առաջնակարգ տեղ է գրավում Մատթեոս վարդապետ Ջուղայեցին, որ իր տաղանդավոր ուսուցիչ Գրիգոր Տաթևացու մոտ գրչական ու գեղագիտական արվեստների և գիտական լուրջ կրթություն էր ստանում։ Այնուհետև նվիրվում է հայ մշակույթի և գրչական արվեստի զարգացմանը։ Նույնպես հավատարիմ մնալով իր կոչմանը, անվկանդ քայլում է իր գիտնական ուսուցչի գծած լուսավոր ճանապարհով։ Թերևս այդ երևույթով էլ պիտի բացատրել, որ Գրիգոր Տաթևացին բարձր գնահատելով իր աշակերտի մտավոր և գեղագիտական պատրաստությունը, նրան համարում է իր հոգևոր որդին և «ժառանգ վարդապետութեան իւրոյ»։

Դեռ 1402 թվականին, բարձր գնահատելով Մատթեոս վարդապետի լուրջ պատրաստությունը, նշանակում են նրան Տաթևի համալսարանի գլխավոր դասախոս։ Այդ ժամանակաշրջանում նա իբրև դպրոցական գործիչ՝ մեծ դեր է խաղում մանկավարժական ասպարեզում. ամբողջ հոգով նվիրվում է ժամանակի նոր սերնդի ուսման և դաստիարակության վեհ գործին և կրթում, պատրաստում ու հայ ժողովրդին է նվիրում բազմաթիվ լուսավոր և առաջադեմ աշակերտներ։

Բայց նրա աշխատանքները չեն սահմանափակվում միայն մանկավարժական գործունեությամբ։ Այդ շրջանում նա հեղինակում և հայ գրականության ավանդ է թողնում մի շարք ձեռագրեր, որոնցից ուշադրության արժանի են քարոզները։ Կրոնաբարոյական այդ նյութերը նա խմբագրում է մի հիմնական նպատակով՝ որպեսզի ժամանակի հայ հոգևորականները կարդան, յուրացնեն և նրանց էական մտքերն ու գաղափարները տարածելով ժողովրդի մեջ, նպաստեն նրա մտավոր զարգացմանը և բարոյական դաստիարակությանը։

Բազմաշխատ հոգևորականը հեղինակել է նաև մեկնողական երկեր, որոնցից հիշատակենք 1411 թվականին, «գառնութեան ժամանակ» գրած «Մեկնութիւն գործոց առաքելոցն» խորագրով ձեռագիրը։ Դա այն պատմաշրջանն էր, երբ մամելուկների և Լանկթամուրի արշավանքներից, Ակկոյունլու և Կարակոյունլու թուրքմեն և քուրդ ցեղերի ավերածություններից հետո, սկսում են ավերվել և քանդվել Հայաստանի մի շարք վանքերը, կորցնելով իրենց նախկին փայլը։

Մատթեոս վարդապետ Ջուղայեցու գրած ձեռագիրն այժմ գուրգուրանքով պահվում է Երևանի պետական մատենադարանի ձեռագրատանը։

Վաստակավոր հոգևորականը հայ գրչական արվեստի պատմության մեջ ևս ունի իր պատվավոր տեղը։ Նա ընդօրինակել է բազմաթիվ ձեռագիր մատյաններ և հարստացրել է հայ մատենագրության գանձարանը։ Նրա ընդօրինակած ձեռագրերի մեջ արժեքավոր է Հովհաննես (Ծովէլ) քահանայի պատվերով, 1407 թվականին գրած «Աւետարան»-ը, որի հիշատակարանում կարդում ենք հետևյալ բնորոշ տողերը. «...Արդ, եղև զրաւ սորայ գծագրութեան յամի ութ հարիւրերորդի յինեներորդի վեցերորդի Հայկազեան տումարի (=1407)... յորոյ և բաղում թելադրութենէ եղև զրաւ այսմ Աւետարանի... և իմոյ անձին տկար Մաթէոսի սուտանուն կեղծաւորի... և խոշորութեան [գրոյս] անմեղայդիր լինել աղաչեմ, զի այսչափ էլ կար մեր...»։

Մատթեոս վարդապետին են վերագրում նաև Երևանի պետական մատենադարանի № 6607 ձեռագրի էջերում պահպանված «Գրիգոր Տաթևացու համառոտ կենսագրությունը»։ Այս մասին հայտնի վաստակավոր բանասեր Լևոն Խաչիկյանը նշել է այսպես. «Հավանաբար Մատթեոս Ջուղայեցու կողմից գրած»։

Բազմաշխատ հոգևորականի մասին արձանագրված փաստական տվյալները վկայում են, որ նա ժե դարում փայլել է որպես վարպետ գրչագիր, լավագույն դասախոս ու մանկավարժ և գրական մշակ։

Իր գիտական և բազմակողմանի լուրջ պատրաստությամբ և բեղմնավոր գործունեությամբ նա միշտ բարձր է պահել հայ գրչական արվեստի, գրականության և Տաթևի համալսարանի ուսումնական մակարդակի հմայքը։ Նրա արդյունավետ և բազմերանգ վաստակն արժանի է խոր գնահատության։

[1] Գրիգոր Տաթևացու բազմաթիվ աշակերտներից հայտնի են Թովմա Մեծոփեցի, Առաքել Սյունեցի, Առաքել Բաղիշեցի, Գրիգոր Արարատեցի, Բարսեղ Բաղիշեցի և ուրիշներ, որոնք հայ մշակույթի, գիտության և արվեստի զարգացման խնդրում նշանակալից դեր են կատարել։

Գ. ՆԱՂԱՇ ՀԱՅՐԱՊԵՏ

(ԺԵ դար)

Միջնադարի հայ մանրանկարչության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի մի վաստակավոր արվեստագետ։ Դա Նաղաշ Հայրապետն է, Տաթևի մանրանկարչական դպրոցի լավագույն նկարիչներից մեկը, որի կերպարը, սակայն, հայ մամուլում մինչև օրս չի նկարված։

Բայց ի՞նչ պատկեր է ներկայացնում նրա նկարչական գործունեության պատմությունը և որո՞նք են նրա հայ ժողովրդին ավանդ թողած ձեռագրերը։

Հիմք ունենալով ձեռագիր մատյանների հիշատակարանների որոշ տվյալները, պարզենք նկարչի գեղարվեստական դիմանկարը։

Նաղաշ Հայրապետը ԺԵ դարի այն մանրանկարիչներից է, որոնց կյանքի և գեղարվեստական գործունեության մասին, դժբախտաբար, չունենք փաստական հարուստ տեղեկություններ։ Միայն 1407 թվականին գրված ձեռագիր Ավետարանի հիշատակարանի սեղմ տողերից այսքան հայտնի է, որ նկարիչն ապրել և ստեղծագործել է գլխավորապես «գերահռչակ» Տաթևի վանքում, ուր «բազում աշխատանաւք» նկարազարդել է մի շարք ձեռագրեր, որոնք, սակայն, օտարազգիների ավերածությունների և հայ ժողովրդի գաղթի ժամանակ, մեծ մասամբ, կորել են։

Ձեռագրի հիշատակարանի վկայությամբ, նկարիչն ունեցել է «հոգեհեղ և հաւատարիմ» բնաւորություն. այդ գեղեցիկ հատկանիշների շնորհիվ, նա իր ժամանակի արվեստագետներից և ժողովրդից հարգվել է և սիրվել։

Նշանավոր նկարչի վրձինած բազմերանգ զարդանկարները, որոնք մանրանկարչական արվեստի տարբեր գեղեցկություններ են, համակում են դիտողին գեղարվեստի ջերմ զգացումներով և որոշ գաղափար տալիս նրա արվեստի էական առանձնահատկությունների՝ նկարների նրբության, երանգների բանաստեղծական գունագեղության և ոճի ինքնուրույնության մասին, որոնց շնորհիվ էլ նա իր պատմաշրջանում հռչակվել է որպես հայտնի «նաղաշ», իսկ նրա վրձինած կերպարները վկայում են, որ նա իր դարաշրջանի լավագույն դիմանկարիչներից է։ Նա կարողացել է իր գծած անձերի հոգեկան աշխարհը նրբությամբ դրսևորել։

Իր վրձինած մանրանկարներով նա ժամանակի ժողովրդի սրտում վառ է պահել հայ մանրանկարչական արվեստի սերը, նրա մեջ զարթեցրել է վեհ և ազնիվ զգացումներ և նպաստել է նրա գեղագիտական ճաշակի զարգացմանը։

Նկարչի գեղարվեստական մի այլ արժանիքը կայանում է նրանում, որ նա իր ինքնատիպ մանրանկարներով բարձր է պահել հնագույն հայ մանրանկարչական արվեստի ավանդները։ Նա խորապես ուսումնասիրել է հին լավագույն մանրանկարիչների և վարպետ ծաղկողների արվեստի էական առանձնահատկությունները։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, նրա նկարների բնորոշ գծերը պատմում են այն մասին, որ նրա նկարազարդման ոճն ու արվեստն ինքնուրույն են։ Այդպես են նրա դիմանկարները, խորանները, զարդամոտիվները, որոնք գրավել են իրենց գեղեցիկ համաչափությամբ և գեղանկարչական վարպետությամբ։

Վաստակավոր նկարչի ստեղծագործություններից ավանդ մնացած մի ձեռագիրը այժմ խնամքով պահվում է Երևանի պետական մատենադարանի ձեռագրատանը։ Դա 1407 թվականին «գերահռչակ» Տաթևի պատմական վանքում գրված Ավետարանն է, որի մի շարք էջերը Նաղաշ Հայրապետը «բազում աշխատանաւք» նկարազարդել է։ Այդ մասին վկայում են ձեռագրի հիշատակարանի հետևյալ տողերը. «...եւ Մաթէոսի գրոց աշակերտի, որ բազում աշխատութեամբ գրեաց զսայ, և հոգեհեղ և հաւատարիմ Նաղաշին՝ Հայրապետին, որ բազում աշխատանաւք նազտշեաց զԱւետար[անս]»։

1407 թվականին գրված ձեռագիր Ավետարանը զարդարող մանրանկարները, մեծ մասամբ, իրենց պարզությամբ, գույների ներդաշնակությամբ ու նուրբ լիրիզմով այնպես խոսուն են, գրավիչ ու բանաստեղծական և վկայում են նկարչի վառ երևակայության և դեղագիտական ճաշակի մասին։

Այդ նկարները ուշադրության և գնահատության արժանի են նաև այն տեսակետից, որ պատկերում են ոչ միայն ԺԵ դարի արվեստագետ Նաղաշ Հայրապետի գեղարվեստական որոշ ստեղծագործությունները, այլև գաղափար են տալիս նշանավոր Տաթևի վանքի նկարչական դպրոցի ոճի, երանգավորումների և ուղղության մասին։

Անժխտելի է, որ այդ ստեղծագործությունները ԺԵ դարի մանրանկարիչ Նաղաշ Հայրապետի անունն ապագա սերունդների սրտերում անմոռաց են պահելու, մի վաստակավոր արվեստագետ, որն իր շնորհալի ձիրքն ամբողջապես նվիրել է մանրանկարչական արվեստին և ԺԵ դարում փայլել է իր ինքնատիպ ոճով և իր յուրահատուկ արվեստով։

Արվեստագետ մանրանկարչի նկարները մտնելու են հայ բազմագարյան նկարչական մշակույթի գանձարանը և նրա անունը վառ են պահելու սերունդների սրտերում։

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Արվեստի փառատոն.— Հայ և վրացի ժողովուրդների համար հունիս ամիսը հանդիսացավ երաժշտական արվեստի փառատոն: Մեկ ամբողջ ամիս վրացական օպերայի և բալետի պետական թատրոնը ներկայացումներ էր տալիս Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնի շենքում, իսկ հայկական օպերային թատրոնը հանդես էր գալիս Թբիլիսիի Ջ. Փալիաշվիլու անվան թատրոնում:

Եղբայրական երկու ժողովուրդների արվեստի փոխադարձ ցուցադրումը Երևանում և Թբիլիսիում ոչ միայն նպաստեց թատրոնների միջև փորձի փոխանակման, ոչ միայն գեղարվեստական հաճույքի կատարյալ ըմբոշխնում եղավ, այլև հանդիսացավ հարևան ժողովուրդների փոխադարձ սիրո և բարեկամության մի նոր և գեղեցիկ դրսևորում:

Թբիլիսիի պետական օպերային թատրոնը Երևանում տվեց ավելի քան 30 ներկայացում: Երևանցիները մեծ հետաքրքրությամբ դիտեցին վրացական ազգային օպերաներ «Դաիսի»-ն («Աղջամուղջ»), «Վարպետաց վարպետի աջը», «Գորդա»-ն, ռուսական «Բորիս Գոդունով»-ը, ինչպես նաև մի շարք այլ ներկայացումներ: Անջնջելի տպավորություն թողեց «Օթելլո» բալետը, որի երաժշտությունը գրել է վրացի հայտնի կոմպոզիտոր Մաջավարիանին և որի մեջ գլխավոր դերի կատարմամբ հանդես է գալիս Սովետական Միության ժողովրդական արտիստ Վախտանգ Ջաբուկիանին:

Երևանի պետական օպերայի և բալետի թատրոնի դերասանները Թբիլիսիում տվեցին նույն թվով ներկայացումներ ու համերգներ: Նրանք բեմադրեցին «Արշակ Երկրորդ», «Անուշ», «Դավիթ Բեկ», «Օթելլո», «Էդիպ արքա» օպերաները, «Սպարտակ», «Երեք բալետ-նովել» բալետները:

Հուլիսի առաջին օրերին Երևանի օպերային թատրոնը վերադարձավ Երևան, իսկ վրացական թատրոնի արտիստները մեկնեցին Բաքու՝ այնտեղ ևս ներկայացումներ տալու համար:

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 60-ամյակը.— Հայաստանի երաժշտասեր հասարակայնությունը բացառիկ ջերմությամբ նշեց աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 60-ամյակը, հունիսի 6-ին: Մեծ կոմպոզիտորի հոբելյանին նվիրված հանդես տեղի ունեցավ նաև Մոսկվայում: Մոսկվայի և Հայաստանի մամուլը լայնորեն նշեց կոմպոզիտորի հոբելյանը: Սովետական Միության Գերագույն սովետի նախագահությունը հոբելյանի առթիվ նրան պարգևատրեց Լենինի շքանշանով:

Ա. Խաչատրյանը ծնվել է 1903 թվականի հունիսի 6-ին, պատմական Գողթն գավառի Ապա գյուղում, գյուղացու ընտանիքում: Հետագայում ընտանիքով տեղափոխվել են և հաստատվել Թբիլիսիում: Միջնակարգ և բարձրագույն երաժշտական կրթությունն ստացել է Մոսկվայում, որտեղ 1934 թվականին գերազանց գնահատականով ավարտել է կոնսերվատորիան: Իր հռչակավոր Դաշնամուրային տոկկատան գրել է ուսանողության ժամանակ: Նրա դիպլոմային աշխատանքը եղել է Առաջին սիմֆոնիան՝ նվիրված Սովետական Հայաստանի 15-ամյակին: Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրայում սովորած շրջանում գրել է իր գլուխ-գործոցներից մեկը՝ Դաշնամուրային կոնցերտ նվագախմբի հետ:

Արամ Խաչատրյանը ոչ միայն հռչակավոր կոմպոզիտոր է, այլ նաև բեղմնավոր, անխոնջ հասարակական գործիչ: Նա խաղաղության միջազգային կոնգրեսների անբաժան մասնակից է, Սովետական Միության կոմպոզիտորների միության քարտուղար, Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Մոսկվայի կոնսերվատորիայի դասախոս, Արտասահմանի հետ մշակութային կապի համամիութենական ընկերության նախագահության անդամ և այլն: Նա պատվավոր անդամ է արտասահմանյան մի շարք երկրների երաժշտական ակադեմիաների և կազմակերպությունների: Արտասահմանյան 27 երկրներում նա հանդես է եկել հեղինակային համերգներով:

Ականավոր գիտնականի հոբելյանը.— Հունիսի սկզբներին Հայաստանի գիտական հասարակայնությունը նշեց սովետական ականավոր գիտնական Եղրաս Հասրաթյանի ծննդյան 60-ամյակը:

Եղրաս Հասրաթյանը ծնվել է 1903 թվականին Արևմտյան Հայաստանում, գյուղացու ընտանիքում: Մեծ եղեռնի օրերին նա կորցնում է ծնողներին, ընկնում Հայաստան, տեղավորվում որբանոցներում: Ունեցել է դառն պատանեկություն: Հաց վաստակելու համար ստիպ-

ված է եղել աշխատել իբրև սնագործ բանվոր, կոշիկ մաքրող, խոհարարի օգնական և այլն:

1922 թվականին ավարտում է միջնակարգ կրթությունը, ընդունվում Երևանի պետական համալսարանը, որի տնտեսագիտական ֆակուլտետն ավարտում է, ինչպես նաև բժշկական ֆակուլտետը: Այնուհետև ուղարկվում է Լենինգրադ՝ ուսանելու Սովետական Միության գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում, աշակերտելով ֆիզիկոսներ Հ. Պավլովին և Լ. Օրբելուն:

Այստեղից էլ սկսվում է Հասրաթյանի գիտական բեղմնավոր գործունեությունը: Նրա անվան հետ են կապված գլխուղեղի և ողնուղեղի ֆիզիոլոգիայի հետ առնչվող հայտնագործությունները, որոնք հարստացրել են համաշխարհային գիտության գանձարանը: Նա հեղինակ է շուրջ 160 գիտական աշխատությունների: 1950 թվականին կազմակերպել է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի բարձր ներվային գործունեության ինստիտուտը, որի ղեկավարն է սրսչև այսօր:

Պրոֆ. Հասրաթյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Ուղեղի ուսումնասիրության միջազգային կազմակերպության անդամ:

«Բանբեր մատենադարանի».— Լույս է տեսել «Բանբեր մատենադարանի» հանդեսի հերթական վեցերորդ հատորը: Այն ունի ճոխ բովանդակություն: Տպագրված են մի շարք հետաքրքրական հոդվածներ հայ ժողովրդի հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների պատմության վերաբերյալ:

Երեք տարբեր հոդվածներ են վերաբերված հայոց հին իրավունքի հարցերի վերաբերյալ: Խ. Թորոսյանի հոդվածը նվիրված է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկու տարբեր խմբագրումներին: Հաշտարխանի հայերի «Դատաստանագիրքը» խորագրված է մյուս հոդվածը, որի հեղինակն է Ֆ. Պողոսյանը: Երրորդ հոդվածը պատկանում է հայտնի իրավագետ Ս. Արևշատյանի գրչին և նվիրված է Դվինի չորրորդ ժողովի կողմից ընդունված կանոնների վերլուծման:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Արևշատյանի հոդվածը, նվիրված նոմինալիզմ կոչված փիլիսոփայական հոսանքի ծագման և զարգացման հարցերին միջնադարյան Հայաստանում: Հոդվածում ցույց են տրված միջնադարյան հայ գիտնականների մատուցած ծառայությունները Արևելքի ժողովուրդների փիլիսոփայական և գիտական մտքի զարգացման գործում:

Ուշագրավ է Ն. Թահմիզյանի «Հնչյունների վերաբերյալ ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում» խորագիրը կրող հոդվածը: Գ. Ամալյանի հոդվածի նյութն է առաջին հայկական ուղղագրական բառարանի ուսումնասիրությունը՝ կազմված ԺԳ դարի քերականագետ և գեղագիր Արիստակեսի կողմից:

Հատորում տպագրված են նաև սփյուռքահայ հայագետ Հ. Ջյուրդյանի (ԱՄՆ), Մեսրոպ վարդապետ Գրիգորյանի (Ավստրիա) և ռումեն հայտնի հայագետ պրոֆ. Վ. Բենեդիանուի հոդվածները:

Մակար Եկմալյանի ստեղծագործությունների համերգը.— Հունիսի 5-ին Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համերգը, ղեկավարությամբ Հովհաննես Չեքիջյանի: Համերգին իբրև մենակատարներ մասնակցում էին ժողովրդական արտիստ Շարա Տալյանը և Սուրեն Շախիջանյանը:

Համերգից առաջ Մ. Եկմալյանի ստեղծագործությունների մասին բովանդակալից և հետաքրքրական ելույթ ունեցավ երաժշտագետ Մարգարիտ Հարությունյանը:

Համերգի ծրագիրն ամբողջովին կազմված էր հանգուցյալ կոմպոզիտորի ստեղծագործություններից: Դահլիճը բացառիկ խանդավառությամբ ընդունեց Եկմալյանի «Պաղ աղբյուրի մոտ», «Բլբույլն Ավարայրի», «Սիրուհիս», «Համեստ աղջիկ», «Զեյթունցիների քայլերգը» և այլ գործերը, որոնք կատարվեցին մեծ վարպետությամբ: Կատարվեցին նաև հատվածներ նրա կանտատներից:

Արմեն Տիգրանյանի հուշարձանը.— Հունիսի 5-ին Լենինականում տեղի ունեցավ հայ ականավոր կոմպոզիտոր, «Անուշ» և «Դավիթ Բեկ» օպերաների հեղինակ Արմեն Տիգրանյանի հուշարձանի հանդիսավոր բացումը: Արմեն Տիգրանյանը բնիկ լենինականցի էր, ուստի և քաղաքային մարմինները որոշել էին համերժացնել իրենց մեծ հայրենակցի հիշատակը հուշարձանով, որը դրված է քաղաքի կենտրոնական փողոցում գտնվող պուրակում:

Արձանի հանդիսավոր բացմանը ներկա էին կոմպոզիտորի հարազատները, պետական ղեկավար գործիչներ, մեծ թվով հյուրեր Երևանից և խումբերում բազմություն:

Հայ երգի և երաժշտության տարածում.— Հունիսի կեսերին Հայաստանի գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ երաժշտագետների հանդիպում գիտության գործիչների հետ: Դա յուրահատուկ հաշվետվություն էր այն մասին, թե ի՞նչ են անում մեր երաժշտագետները, հայ երգն ու երաժշտությունը ժողովրդի սեփականությունը դարձնելու համար: Այդ մասին խոսեցին ներկաներին երաժշտագետներ Մարգարիտ Հարությունյանը և Էդուարդ Միրզոյանը:

Իրենց սեփական ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան կոմպոզիտորներ Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էդուարդ Միրզոյանը, Էդուարդ Բաղդասարյանը և ուրիշներ: Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի լավագույն մենակատարները հանդես եկան հայ դասական և արդի կոմպոզիտորների երգերի կատարմամբ:

Հանդիպումն անցավ մեծ հաջողությամբ:

Վերջին մի քանի տարում հայ կոմպոզիտորները ավելի քան 200 այդպիսի հանդիպումներ են ունեցել Երևանի և հանրապետության տարբեր շրջանների բանվորների, ուսանողների, կոլտնտեսականների հետ՝ ծանոթացնելով ժողովրդին հայ երգին և երաժշտության:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ.— Թեպետ մինչև Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյա հոբելյանի հանդիսավոր նշումը տակավին ամիսներ կան, սակայն Հայաստանում ամենուրեք տեղի են ունենում բազմաբարդ հանդեսներ, դասախոսություններ, երեկոներ, համերգներ՝ նվիրված մեծանուն տաղասացի հիշատակին: Այդ հանդեսներին ու երեկոներին իրենց ջերմ մասնակցությունն են բերում գրողները, դերասանները, երաժիշտները:

Անվանի կոմպոզիտոր Ալ. Հարությունյանը գրում է Սայաթ-Նովա օպերան, որի առաջին գործողությունը կբեմադրվի մեծ գուսանի ծննդյան 250-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսին: Օպերան, որն հեղինակի անդրանիկ օպերային գործն է, ամբողջապես պատրաստ կլինի 1964 թվականի գարնանը:

Հայաստանի պետական հրատարակչությունը տպագրում է Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածուն: Գիրքը լույս կտեսնի 20 000 օրինակ տպաքանակով: Այն հրատարակության է պատրաստել բանասեր պատմաբան Մորուս Հասրաթյանը:

Նոր օպերա.— Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արտեմի Այվազյանը գրել է «Մորգանի խնամին» օպերան՝ Ալ. Շիրվանզադեի համանուն կավեշտական թատերգության բովանդակությամբ: Օպերան բաղկացած է երկու գործողությունից և շուտով բեմադրվելու է Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնում:

Երևան—Սևան էլեկտրական գնացքը.— Այս տարվա սկզբներին էր, որ ավարտվեցին Երևան—Հրազդան (Նախկին Ախտա) երկաթուղու էլեկտրականացման աշխատանքները: Հունիսի 30-ին ավարտվեց գծի մնացած հատվածի էլեկտրականացումը և առաջին էլեկտրական գնացքը հասավ Սևան: Առաջին գնացքով Սևան ուղևորվեցին Հայաստանի պետական և կուսակցական ղեկավար աշխատողները:

Գծի ամբողջ երկարությունն է շուրջ 75 կիլոմետր: Այն անցնում է Կոտայքի և Գեղարքունյաց լեռների լանջերով ու սարահարթերով և բարձրանում ծովի մակերևույթից 1 900 մետր վեր: Ճանապարհին եղած բոլոր բնակավայրերի մոտ կառուցված են կայարաններ: Որոշ տեղերում հարկ է եղել ճեղքել լեռներ, կառուցել դժվարին կամուրջներ լեռնային հեղեղատների վրա:

Այժմ կանոնավոր կերպով, օրական երկու անգամ, էլեկտրական գնացքը Երևանից մեկնում է Սևան և վերադառնում:

Գծի ավարտումով անհամեմատ դյուրանում է ժողովրդա-տնտեսական բեռների փոխադրման գործը մի շարք լեռնային շրջանների համար: Այժմ Դիլիջանի, Կարմիրի, Բասարգեչարի, Մարտունու, Կամոյի (Նոր-Բայազետի) և Հրազդանի շրջանները բեռների փոխադրումը կկատարեն ոչ թե ավտոմեքենաներով Երևանից, այլ Սևանի երկաթուղային կայարանից:

Սևանի լճի մակերեսի բարձրացումը.— Արտակարգ առատ էին այս գարնան մթնոլորտային տեղումները Հայաստանում: Գիտնականների հայտարարությամբ, վերջին 80 տարում մեր երկրում այսքան անձրևներ չէին տեղացել: Հորդառատ անձրևները իրենց բարերար ազդեցությունն ունեցան ոչ միայն բուսականության վրա, այլև զգալի չափով ավելացրին Սևանի լճի ջրի պաշարները: Անձրևների ու հեղեղաջրերի հետևանքով լճի մակերեսը կես մետրով բարձրացել է:

Ապրիլ, մայիս և հունիս ամսվա առաջին շաբթում լճի մեջ թափվող ջրերի ընդհանուր քանակը կազմել է ավելի քան 570 000 000 խորանարդ մետր, կամ 150 000 000 խորանարդ մետրով ավելի քան անցյալ տարի: Մասնագետները հաշվել են, որ այդ քանակի ջրերով (570 000 000 խորանարդ մետր) Սևան—Հրազդան կասկադի կայանները կարող են արտադրել ավելի քան մեկ միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա:

Անձրևաջրերի առատությունը հնարավորություն տվեց աշխատողներին վերջին քսան տարվա ընթացքում առաջին անգամ լինելով հրաժարվել լճից ջուր բաց թողնելուց, առանց դադարեցնելու էլեկտրակայանների աշխատանքը:

Ավելի քան երկու մետրով բարձրացել է Արփա լճի մակերեսը: Միջոցներ են ձեռնարկված ջրերի այս պաշարը Շիրակի ջրանցքի միջոցով օգտագործելու ոռոգման համար:

Երաժշտագետների հանգստյան տուն Դիլիջանում.— Հունիսի կեսերին Դիլիջանում տեղի ունեցավ երաժշտագետների համամիութենական հանգստյան տան բացումը: Նորակառույց հանգստյան տունը բաղկացած է 12 տարբեր գողտրիկ տնակներից և մեծ հանգստյան տներից: Երաժշտագետները այստեղ կարող են հանգստանալ և ստեղծագործել: Ամեն բնակարան, բացի շքեղ կահավորումից, ունի դաշնամուր, մագնիտոֆոն, ռադիոընդունիչ:

Երեքհարկանի շենքը ունի համերգային դահլիճ, ընդարձակ ճաշարան, խաղերի և հանգստի սենյակներ:

Այսպիսով Դիլիջանի գեղատեսիլ անտառների ծոցում ստեղծված է մի նոր, վայելուչ հանգստավայր, արվեստագետների հանգստի և ստեղծագործության համար:

Հանգստյան տան հանդիսավոր բացումը կատարվեց Մոսկվայի, Էստոնիայի, Վրաստանի և Հայաստանի երաժշտագետների միությունների ներկայացուցիչների և մեծ թվով հյուրերի ներկայությամբ:

Իջևանի գորգագործական ֆաբրիկայի կառուցումը.— Վերջերս ավարտվեց Իջևանի գորգագործական ֆաբրիկայի կառուցումը: Այն գրավում է 20 000 քառակուսի մետր տարածություն, բաղկացած է մի շարք բաժանմունքներից, որոնց համար կառուցված են մեծ, լուսավոր շենքեր: Ֆաբրիկան տարեկան արտադրելու է 750 000 քառակուսի մետր տարբեր տեսակի գորգեր և ուղեգորգեր: Այստեղ աշխատելու են 1 200 բանվորներ և բանվորուհիներ: Ֆաբրիկայի ամբողջ սարքավորումները ստացվել են Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից:

Ֆաբրիկայի կառուցումով փոխվում է Իջևանի տեսքը: Կառուցված են ավելի քան երկու տասնյակ խոշոր բնակելի շենքեր, նոր դպրոց, մանկապարտեզ, մանկամուր, բուժարան, խանութներ, ճաշարաններ: Գործարանի քնարհիվ քաղաքը շուտով կստանա խմելու մաքուր ջուր, չհաշված արտադրական կարիքների համար Աղստև գետի վրա կառուցված ջրմուղը:

«Հայկական երաժշտության պատմության ուրվագծեր».— Այս խորագիրն է կրում այն հատորը, որը վերջերս լույս ընծայվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի կողմից, երաժշտագետ Ռ. Աթայանի խմբագրությամբ: Գիրքը բաղկացած է 3 մասերից: Առաջին մասում տրված է հայ երաժշտության պատմությունը սկսած նրա ծագումից մինչև ԺԹ դարը: Այս հետաքրքիր աշխատության հեղինակն է նորոգ հանգուցյալ պրոֆ. Խ. Կուշնարյանը (Լենինգրադ): Երկրորդ մասը գրել է արվեստագիտության թեկնածու Մ. Մու-

րագլանը, որը կոչվում է «Հայկական երաժշտությունը ԺԹ դարում և Ի դարի սկզբներին»: Գրքի երրորդ մասը նվիրված է Սովետական Հայաստանի երաժշտության, որը դրել է արվեստագիտության թեկնածու Գ. Գյոդակյանը:

Արվեստի ինստիտուտը նախաձեռնել է նման ուրվագծեր հրատարակել նաև հայ ճարտարապետության, թատրոնի և նկարչության պատմության վերաբերյալ:

Ակադեմիկոս Ի. Օրբելու աշխատությունների հրատարակումը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ընտիր աշխատությունների մի հատորյակը: Ժողովածուի մեջ կետեղված են հռչակավոր արևելագետ-կովկասագետի տարբեր ժամանակաշրջաններում լույս տեսած կարևոր աշխատությունները, նվիրված Կովկասի և Առաջավոր Ասիայի միջնադարյան հնագիտության, արձանագրությունների, պատմության, մշակույթի և արվեստի, ինչպես նաև բանասիրության տարբեր հարցերին: Ժողովածուն ունի հետևյալ բաժինները՝ «Մեծ քաղաք Անին և նրա պեղումները», «Կովկասի և Առաջավոր Ասիայի արխեոլոգիան և արվեստի պատմությունը», «Հայկական արձանագրությունները», «Բանասիրություն, գրականություն»:

Գիրքը պատկերազարդ է, ունի նյութական մշակույթի հուշարձանների և աշխարհագրական անունների ցանկեր:

Ակադեմիկոսի գիտական ընտիր աշխատությունների այս հատորյակը մի չնչին մասն է նրա շուրջ 60 գիտական ուսումնասիրությունների, որոնք այնքան մեծ հավաք են ստեղծել Հ. Օրբելուն համաշխարհային պատմա-բանասիրական գիտության կարգացման բնագավառում:

Արժեքավոր աշխատություն Հայաստանի երկրաբանության մասին.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտը ձեռնամուխ է եղել կազմելու և հրատարակելու «Հայկական ՍՍՌ երկրաբանությունը» ստվարածավալ աշխատությունը, որը բաղկացած է լինելու 7 հատորից: Արդեն լույս է տեսել առաջին հատորը, որի խորագիրն է «Գեոմորֆոլոգիա» «Աշխարհագրական կազմաբանություն»): Շուտով լույս կտեսնի հիշյալ աշխատության 2-րդ հատորը, նվիրված երկրի արտաքին շերտերի ու լեռնակազմության հարցերին: Հաջորդ հատորները նվիրված կլինեն քարագրության, տեկտոնիկայի, օգտակար հանածոների, հիդրոերկրաբանական և ինժեներային երկրաբանության ուսումնասիրության հարցերին:

Հայաստանի երկրաբանությանը նվիրված այսպիսի բազմակողմանի աշխատություն մեզանում առաջին անգամ է պատրաստվում, շնորհիվ վերոհիշյալ ինստիտուտի աշխատողների երկարամյա եռանդուն ջանքերի և մանրակրկիտ ուսումնասիրությունների:

Առաջին հատորը պարունակում է հարուստ նյութեր Սովետական Հայաստանի մակերևույթի կազմության վերաբերյալ, բնութագրված են այդ կազմության սկզբնավորությունը և կարգացման պատմությունը: Հարուստ տեղեկություններ կան բնական պայմանների, կլիմայի, հողի և բուսականության մասին: Նկարագրված է Հայաստանի նորագույն տեկտոնիկան:

Հատորն ունի նաև հարուստ պատմական տեղեկություններ Հայաստանի աշխարհագրության և կազմաբանության վերաբերյալ: Այստեղ կետեղված են Հերոդոտոսի, Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղեմեոսի և ուրիշների տված առաջին տեղեկությունները Հայաստանի մասին, ինչպես նաև Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու և աշխարհագրագետ Վարդանի (ԺԳ դար) նկարագրությունները երկրի բնության մասին: ԺԹ դարի հայ նշանավոր աշխարհագրագիր հեղինակների՝ Հ. Ղ. Ինճիճյանի, Հ. Ղ. Այիշանի, Ա. Ղուկասովի կողմից տրված նկարագրությունների հետ միասին, տրված են նաև առաջ և եվրոպացի հեղինակների ուսումնասիրությունները Հայաստանի մասին:

Հատորը բաղկացած է 586 էջից: Իբրև հավելված տրված է Հայաստանի գեոմորֆոլոգիական քարտեզը, որը կազմված է առաջին անգամ: Հատորն ունի մեծ թվով գունատիպ քարտեզներ և լուսանկարներ:

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԲԱԳԱՐԱՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԴԱՎԹՅԱՆԻ
(1890—1963)

Ապրիլի 20-ին, Մադրաս քաղաքում, ի Տեր հանգյավ ծխատեր արժանապատիվ Տ. Բագարատ ավագ քահանա Դավթյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1890 թվականին Նոր-Ջուղայում։ Նախնական իր կրթությունն ստացել էր տեղի ազգային կենտրոնական վարժարանում և այնուհետև ընտրել էր ազգային ծառայության ճանապարհը, որպես պաշտոնյա և Նոր-Ջուղայի Մեյդանի թաղի Ս. Աստվածածին եկեղեցու վարչության անդամ։

1937 թվականին, Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, հետևելով մեկ տարի եկեղեցական և կրոնական ուսմանց, դպրեվանքի տեսուչ Տ. Թեոդորոս ծայրագույն վարդապետի ձեռքի տակ, Թավրիզում քահանա է ձեռնադրվել հանգուցյալ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի ձեռքով։

Այնուհետև արժանապատիվ Տ. Բագարատ քահանան հովվական պաշտոններ է վարել Նոր-Ջուղա, Դաքքա (Արևելյան Պակիստան), Մադրաս և Կալկաթա քաղաքներում։ Հանգուցյալն իր բարվոք ծառայության համար վարձատրվել է ծաղկյա փիլոնով և քահանայական լանջախաչ կրելու իրավունքով, Վազգեն Վեհափառ Հայրապետի կողմից, 1955 թվականին։

Հանգուցյալի վերջին օծումը կատարել է և թաղմանական արարողությանը նախագահել Կալկաթայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետ Սահակյանը, 1963 թվականի ապրիլի 20-ին։ Հանգուցյալի աճյունը ամփոփվել է Մադրասի հայոց դերեզմանատանը։

Տ. Բագարատ քահանա Դավթյանը հավատավոր, գիտակից և պարտաճանաչ հոգևորական էր և իր լավագույն ուժերը նվիրել էր հեռավոր ափերի վրա նետված հայ ժողովրդի թանկագին բեկորների հոգևոր և ազգային դաստիարակության սուրբ գործին։

Հանգի՛ստ նրա ոսկորներին։

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 194

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 311։— Պրակները՝ 31, յուրաքանչյուրը 10 թերթից, ի բաց առյալ Ա՝ 6, Իե՝ 11, ժ և ԺԸ՝ 12 թերթից։— Մեծությունը՝ 25,5×18×6,7 սմ.։— Նյութը՝ տեղ-տեղ կեղծուած սովորական մագաղաթ։ Միայն վերջին թերթը (թ. 311) թուղթ է՝ հետագայում ավելացված։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա կան արծաթյա քանդակներ։ Կազմի առջևի երեսում պատկերված է Հիսուսի խաչելությունը, շրջապատված զարդերով և չորս հրեշտակներով։ Խաչի վերևում գրված է «Յ. Ն. Թ. Հ.»։ Կազմի կոնակում պատկերված է Հիսուսի հարությունը, նույնպես շրջապատված զարդերով և չորս հրեշտակներով։ Թաց գերեզմանի կափարիչի վրա գրված է «Հ»։ Կազմի երկու երեսների մեջտեղը կա նաև մի այլ արծաթյա փորագրված զարդանկար։ Այս բոլորը մի գեղեցիկ նմուշ է հայկական արծաթագործության։— Պահպանակներ՝ սկզբում և վերջում կան մեկական թերթ կապտավուն հաստ թուղթ։— Վիճակը՝ առհասարակ լավ է, սակայն վերջից կազմի թերթերը պոկվել են։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ էջերը՝ 1ա, 6բ, 10ա և 311բ։— Տողերը՝ 19։—Գծումները՝ ոչ ճշգրտորեն։—Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի չորս նկարներ, ամբողջ էջի ծավալով, որոնք ներկայացնում են չորս ավետարանիչները (թ. թ. 10բ, 98բ, 152բ և 241բ), ինչպես նաև չորս խորաններ Ավետարանների սկիզբներին (թ. թ. 11ա, 99ա, 153ա և 242ա), որոնք ունեն զեղեցիկ ծաղիկներ և թռչուններ, լուսանցազարդեր և գարդագրեր։ Ձեռագրի մնացյալ մասն ունի հասարակ թռչնագրեր, գարդագրեր և լուսանցազարդեր, ինչպես նաև ձեռագրի սկզբում կա վեց թերթ համարարարտա հասարակ նկարներով։— Գրիչը՝ Գեորգ վարդապետ։— Պատվիրատու՝ Ոսկեհեր քահանա։— Տպագրողը՝ Սիմեոն։— Ժամանակը՝ 1293 թ.։— Վայրը՝ Աղմեն լեռ։ Գրվել է Ապանա քաղաքի Ս. Ղազար տաճարի համար։— Պանդուխտությունը՝ սույն ձեռագիրն ստացված է 1961 թվականի հուլիսին Վեհափառ Հայրապետի միջոցով, որպես նվեր Ստամբուլի Սամաթիայի Ս. Գեորգ եկեղեցուն։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 98ա.— Տառապեալս Գէորգ վարդապետս որ յԱրմէնս լեառն, իմով մեղսաների ձեռամբ գրեցի զաստուածաւանդ Աւետարանս, թեպէտ անարուեստ և անարժան էի այսմ ձեռնարկութեան այդ կանխագոյն յոլով խնամաւք գրաւեալ զմեզ պարտական սիրոյ Ոսկեհեր քահանայ ստացաւ զսա իմով ձեռամբ, ուգնականութեամբ խաչատուր վարդապետի որ ընդ իս դանձ յինել Սուրբ Ղազարու յաստուածապահ քաղաքն Ատանա։

Թ. 152բ.— ԶԻմէոն անարժան նկարիչս յիշեա ի Տէր ով սուրբ պատահող և Աստուած զքեզ։

Թ. 309ա.— Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հայր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածաւանդ Աւուրբ Աւետարանս զրեցաւ ի խնդրոյ աստուածապաշտ քահանայի Ոսկեհերի, զոր ստացաւ ի զարդ և ի փարթամութիւն տաճարին Աստուծոյ Սուրբ Ղազարու զոր ինքն շինեաց, նաև ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ բարի զկնի վախճանի։ Արդ, ով աստուածասէր ընթերցաւղք, յիշեսջիք աղաւթիւք ի Քրիստոս զՈսկեհեր քահանայ և զծնաւղսն իւր, և զկանուխ վախճանեալ ամուսինն իւր, ևս և զհաւրեղբայրն իւր և զհաւրեղբարկինն, և զամենայն իսկ զազգատոհմն, զի մարդասէրն Քրիստոս քաղցրութեամբ գթասցի ի յիշատակեալսն աստ ի կենդանիսն և ի վախճանեալսն, այդ և ի սրտի մտաւք յիշատակաւղդ, և ինքն աւրհնեալ է և եղիցի յամենից, այժմ և միշտ և յաւիտեան։ ՉԽԱ (1293 թ.) թուականիս զրեցաւ ի փառս Աստուծոյ, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրի սկզբի պահպանակի առաջին երեսում՝ «Թիւ 1»։

Նույն պահպանակի երկրորդ երեսում՝ «Մագազաթեայ այս Աւետարանը սեփականութիւնն է Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն։ 29—5—42։ Մեսրոպ Աւշեպիսկոպոս»։

Թ. 309ա.— Զարազս ի շարիս.

Զունայնս ի բարիս,
Զմարտիրոս արեղաս մեղոք իլ լիս.
Զվերջին կազմող Սուրբ Աւետարանիս,
Ով սուրբ եղբայրք յաղօթս ձեր յիշման արէք արժանիս,
Եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։
Թվ. ՉԼԷ (1489 թ.) Յուլիսի ԻԱ կազմեցաւ։

Թ. 309բ.— Փառք Հարն էականի, Որդոյն Միածնի և Հոգւոյն Ճշմարտի, Երրորդութեանն եղակի, ահաւորի և անքննելի, և անճառելի, ինքնազոյի և գերազոյի, լուսոյ ծայրագունի, և յանմերձանալի, պատճառ գոյիցս ամենայնի, իմանալի և զգալի, Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, և անմահի անձանց բաժանեալ, և աստուածութեան մթակի, ըստ սերովբէից և քերովբէից, ի բարձանց մշտնջենաւորի, աւրհնաբանող յամենայն յա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Է-ից, Թ-ից, 1961 թվականի № № Բ-ից, Գ-ից, Զ-ից, Թ-ից, ԺԲ-ից, 1962 թվականի № № Ը-ից, Թ-ից, Ժ—ԺԱ-ից, ԺԲ-ից և 1963 թվականի № № Բ-ից և Ե-ից։

փառաց, ամէն։ Նուռա ծառայ Ծառայիցդ Աստուծոյ՝ Կարապետ Եպիսկոպոս Կաֆայեցի, բազմամեղ հոգս որ ամաչեմ կոչել ի բարձրագոյն քահանայական անուանէն, զի գաստապարտութիւն է ինձ անուն այս, զի անարժան և զգիր գործուց բազմամեղութեամբ լալով աւանդ զանբարկանալի Աստուած յո՛յժ բարկացուցի։ Երկրորդ անառակ որդիս որ (թ. 310ա) ասի ի բարի Հաւրէն գրաժին իմ և զամենայն աւուրս իմ յանաւգուտ պէս ծախեցի և ոչ դարձայ և ոչ ուրախացուցի զերկնաւոր Հայրն, և սպառեցան աւուրք իմ, և էի յազարակն եղջերի խոզարած մինչև նայեցաւ յիս Միածինն Փրկիչն Տէրն Յիսուս Քրիստոս, մարդասէրն և մարդասիրի Հաւր Որդին, որ չյաւուրեցայ և սովամահ լինէի, ազդուց յիս յիւր անչափ սիրոյն, և ի պարգևաց Սուրբ Հոգւոյն։ Ու իմ այլ ոչինչ ունելով տալ Տեառն Աստուծոյ իմ։ զՍուրբ Աւետարանս որ լիս հալալ արդեանց գնեցի, և զաւետարանիչն նկարել տուի, և նոր կապել տուի և զրի յիշատակ իմ հոգւոյս և իմ ծնողացն ի Սուրբ Գէորգ տաճարիս որ կոչի Սուլու մանաստիր։ Մի ոք իշխեսցէ գրաւել ոչ ինչ ազգ պատճառանաւք, և թէ ոք զՍուրբ Աւետարանս զայս բռնաբար իշխանութեամբ կամ գողութեամբ (թ. 310բ) վասն իւր ապահ բարուց հանցէ ի սուրբ ուխտէս, և իւր առանձին առանալով թէ եկեղեցական և թէ աշխարհական ոչ ազգական, և ոչ ի ծանաւթից լունի իշխանութիւն, միայն Սուրբ եկեղեցիս, ինքն Քրիստոս լինիցի նմա դատախազ յիւր մեծ և սոսկալի ահեղ առնելն։ Եւ թէ ոք զյիշատակս եղծանել կամիցի ի Սուրբ Մատենէս, ինքն եղծանի և ընկի ի դպրութենէ կենաց, մասն զՄուդայի առցէ, և ընդ խաչահանուացան դատի Աստուած, Քրիստոս Աստուած ձեզ յիշողացդ և յիշեցելոցն որ յաժամ կամաց զԱստուած ողորմին ասեն, ողորմեսցի ողորմածն և մարդասէրն Աստուած և շնորհեսցէ մեզաց և յանցանաց նոցա թողութիւն և տացէ զանանց և զանվազեան ուրախութիւնն ի յանպատում արքայութեանն։ և նմա փառք յաւիտեանս ամէն։

Թվին ՋԼԳ (1496 թ.) յուլիս Թ գրեցաւ յիշատակս սրանս ձեռամբ Աստուածատուր արեղայի Կաֆեցոյ։

Թ. 311ա.— Յիշատակ է Սուրբ Աւետարանս Տալվէրի որդի մահտեսի Աբրահամին ծնողացն հոգւոյն և իւր կին Ղանեաքն, որ է պատճառ այս Սուրբ Աւետարանս արժանապէսութեանն, որ իւր բաղում հոգնոր աշխատութեամբ որ Սուրբ Գէորգ եկեղեցոյ աշխատեալ և նոր շինել հատուր Սուրբ Աւետարանս, և դուք ով ընթեր... պարտիք միով Հայր մեղայիս յիշել զմահտեսի Աբրահամն և իւր ծնողքն որ են հանգուցեալք և իւր կենդանիսն, զկենակիցն իւր և զզաւակքն, և այլ աշխատողքն սորին, յիշեսցէ զբարիգործն Աստուած և ողորմեսցի ընդ մեծի ողորմութեանն իւրում, ամա՛ն ի հանդիսմէլումն։ Ամէն։

Թվին հայոց ՌԺՂԵ (1746 թ.) ողոստոսի է։

№ 195
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 395։— Գրակները՝ 26, յուրաքանչյուրը 16 թերթից, ի բաց առյալ Ա և ԻԶ պրակները՝ 10, Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ և ԻԵ՝ 14, Դ և ԺԶ՝ 15, Ը՝ 17, Է՝ 18 թերթից։— Մեծությունը՝ 18×9×5,5 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հատարակ թուղթ։— Կազմը՝ չունի, ժամանակին եղել է կաշի, սակայն հետագայում ընկել է։— Գեղեցկությունը՝ ձեռագրի սկզբում կա երկու թերթ դեղնած և պատռված մագաղաթ առանց գրության։ Ձեռագրի վերջի մագաղաթյա պահպանակն ընկել է։— Վիճակը՝ վատ, վերջից թերի, միջից պակաս թերթեր կան, իսկ ինքը ձեռագիրն այժմ ծռվել և թեքվել է, տեղ-տեղ պատռած է և ցեցակեր։— Գրությունը՝ միասյուն։— Տառակի բարձրը՝ 1սմ։— Տողերը՝ 21։— Գծամները՝ ճեշտամով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդարությունը՝ ձեռագիրն ունի բավական գեղեցիկ նկարներ։ Կա մի նկար ամբողջ էջի ծավալով (թ. 1բ), ինչպես նաև երկու խորանաներ (թ. թ. 2ա և 142ա), վեց կիսախորաններ։ Կան նաև լուսանցազարդեր, գմբեթներ, խաչեր, ծաղիկներ, ծաղկամաններ, թռչնագրեր, զարդագրեր, ինչպես նաև մարդու գլխով երեց զարդագրեր (թ. թ. 65ա, 253ա և 338ա)։— Գրիչը՝ Մաղաքիա։— Գտավիրատուն՝ անհայտ։— Ծաղկոցը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԶ—ԺԷ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Ստեղծությունը՝ սույն ձեռագիրն ստացված է Եվեր Ստամբուլից 1961 թվականի հուլիս ամսին, Սուրեն Դոկտորյանի կողմից, Վեհափառ Հայրապետի միջոցով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ձեռագիրը շարակնոց է, ամբողջությամբ գրված է հայկական խաղերով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 195բ.— Ով քահանայք և մաքրաղարգեալ պաշտաւնեայք. աղաչեմ զձեզ յորժամ քաղցր ձայնիւ եղանակէք և կամ գաղափարելով և կամ տեսանելով յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր դիս զՄաղաքիաս և միով Տէր ողորմայիս։

Թ. 336ա.—

Ով քահանայքդ մաքրողական.
Քաւիչք մեղացէք սրբական,
Ի ծունկս անկեալ եմ անպիտան.
Զձեզ աղաչեմ կողկողական,
Ի սուրբ յաղաւթս ձեր մաքրական.
Զիս յիշեցէք որ անարժան,
Մին ողորմիս ցաւդ կաթական.
Միոյն ալինիք արժան։

Թ. 359բ.— .... Որ պրսակիչդ ես քոց սրբոց և անվախճան բարեաց բաշխաւղ, թողութիւն. և ինձ թողութիւն շնորհեա գծողիս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 72ա.— Սուրէն Գ. Տօքտորեան, Տիվրիկցի, Կ. Պոլիս, 12—7—961։

Թ. 127բ.— Այս ձեռագիր գիրքս կը նվիրեմ Սուրբ

Էջմիածնինոյ Թանգարանին ի ձեռաց Վեհափառին Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետ Ամենայն Հայոց։

Թ. 138ա.— Սուրբն Գ. Տօքտորեան Թուրքիոյ Տիվրկ քաղաքից. Կ. Պոլիս, 12—7—961։

№ 196
ՀԱՒԱՔԱԾՈՒ

Թերթերը՝ 252։— Պրակները՝ 23, յուրաքանչիւրը 12 թերթից, ի բաց առեալ հետեւեալ պրակներից՝ ԺԸ՝ 5, Բ՝ 7, ԻԴ՝ 8, Գ, Է, Թ և ԻԲ՝ 10 թերթից։— Մեծութիւնը՝ 15,5×11,2×5,2 սմ.։— Նիւթը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Պաճպանակները՝ սկզբում և վերջում կան երկաւական թերթ դեղնած և կեղտոտած մագաղաթ, որի բովանդակութիւնը Ավետարանից է։ Գիրը բոլորաձև երկաթագիր է, իսկ հեռիւները՝ Ը—Ժ դարերից։— Վիճակը՝ թեպետեւ լաւ է, սակայն մի շարադրած ձեռք բազմաթիւ թերթեր կորստեալ է անխնայ։— Գրութիւնը՝ միասյուն, բացի 88ա—162բ թերթերից, որոնք երկսյուն են։— Դատարկ թղթերը՝ 1ա, 1բ, 2ա, 19բ և 163ա։— Տողերը՝ անկանոն, 18—27։— Գծումները՝ ճեղճուած։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդարուքները՝ ձեռագիրն ունի ընդամենը մի քանի շատ հասարակ զարդագրեր, մի հատ լուսանցազարդ (Բ. 66ա) և մի հատ կիսախորան (Բ. 66ա)։— Գրիչը և ծաղկողը՝ Մովսես եպիսկոպոս։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ժամանակը՝ 1609 թ.։— Վայրը՝ անհայտ։— Մանրուքները՝ սոյն ձեռագիրն ստացված է նվեր Ստամբուլից 1961 թվականի հուլիս ամսին, Սուրբն Գրիգորյանի կողմից, Վեհափառ Հայրապետի միջոցով։ Ձեռագիրն ունի նախնական տարբեր երեք համարակալումներ՝ այսպես պրակներ Ա—Զ, Է—ԺԵ և ԺԶ—ԻԳ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռագրի հավաքածուն բաղկացած է հետեւյալ մասերից.—

Թ.Թ. 2բ—19բ՝ Տոմար.

Թ.Թ.20ա—39բ՝ Աշխարհացույց.

Թ.Թ. 39բ—40ա՝ Յուցակ հայոց Պարթև թագավորների.

Թ.Թ. 40բ—41բ՝ Ապաշխարութեան կանոնները.

Թ.Թ. 42ա—65բ՝ Երաղահան.

Թ.Թ. 66ա—87բ՝ Ուրբաթակիրք.

Թ.Թ. 88ա—154ա՝ Բառարան հասարակ անունների.

Թ.Թ. 154բ—162բ՝ քաղաքների անուններ.

Թ.Թ. 163բ—252ա՝ Բժշկարան։

Ստորև տրվում են բժշկարանի գլուխների վերնագրերը.

Թ. 163բ.— ա. Վասն գլխացաւութեան, թէ որպէս է։

բ. Վասն ականջացաւութեան։

գ. Վասն յաչացաւութեան։

դ. Վասն որ քիթն ցաւի և կամ արիւնի։

ե. Վասն որ բերանն ցաւի և չկարէ։

զ. Վասն ատամնացաւի և հարվելոյի։

է. Վասն լեղուացաւի և կամ կարկելոյ։

ը. Վասն խռչակացաւի և զանկիկի։

թ. Վասն սրտացաւութեան և նեղի։

ժ. Վասն լերդացաւութեան։

ժա. Վասն փայծղան ցաւութեան։

ժբ. Վասն ամենայն ցեղ փորացաւութեան։

ժգ. Վասն փորան ընկնի և ցաւի։

ժդ. Վասն միջացաւութեան և ճռնչի։

ժե. Վասն ամենայն ցեղ կոնակացաւութեան։

ժզ. Վասն որ ուսն ցաւի մարդոյն։

ժէ. Վասն որ արմունկն ցաւի։

ժը. Վասն որ խալեկն ցաւի։

ԺԹ. Վասն որ ձեռքն դողայ կամ թապլուկի։

Թ. 164ա.— ի. Վասն որ կրծոց ցաւի և ուռեցքի։

իա. Վասն ամենայն ցեղ ուռեցքի։

իբ. Վասն որ արանքն ի վայր գայ։

իգ. Վասն ամենայն ցեղ խոստուկի։

իդ. Վասն ծնկան ցաւի։

իե. Վասն որ անդամն ցաւի։

իզ. Վասն որ ոլորքն ցաւի։

իէ. Վասն որ ոտիցն կոճն ցաւի։

իը. Վասն ոտիցն թաթն ցաւի։

իթ. Վասն որ ոտիցն մատներն ցաւի։

լ. Վասն որ ոտից տապանն ցաւի։

լա. Վասն պիսակի և գոթութեան։

լբ. Վասն դեղնութեան և արաղանի։

լգ. Վասն կապածի և կախարդի։

լդ. Վասն դեղածի և աղանդի։

լե. Վասն բորի և գէշ խոցի։

լզ. Վասն ֆռանկու ուզի։

լէ. Վասն ջերմնոտի։

լը. Վասն ամենայն ցեղ վատ նատարի։

Թ. 164բ.— լթ. Վասն տղան որ լալու լինի։

խ. Վասն որ տղան ի մօրն փորն մեռանի։

խա. Վասն դժար բերքի ծնանելոյ։

խբ. Վասն որ տղան անցնելու։

խգ. Վասն ամենայն ցեղ գէշ հազի։

խդ. Վասն անղաւակի և դեղ տղի։

խե. Վասն գիրութեան դեղ ուզելոյ։

խզ. Վասն վատուժութեան տեղ ուզելոյ։

խէ. Վասն որ մարդն կոլինե ունի։

խը. Վասն որ կատղած շունն խածնէ։

խթ. Վասն որ մարդուն վարդացաւ դիպի։

ծ. Վասն որ հիւանդն ճանաչես։

ծա. Վասն այրածի որ մարդուն միսն երի։

ծբ. Վասն գէշ պալդամի։

ծգ. Վասն սաֆրայի և խիլթի։

ծդ. Վասն մտամոլորի և մոռացկոտի։

ծե. Վասն մարդուն այրութիւն պակասի։

ծզ. Վասն որ մարդուն ձայնն կտրի։

ծէ. Վասն որ մարդուն ուժն հատնի։

Թ. 165ա.—ծը. Վասն որ ուզես զչարն հեռացնես։

ծԹ. Վասն դիւահարի բժշկելոյ։

կ. Վասն ամենայն ցեղ սարսափ ցաւի։
կա. Վասն հետքունի։
կբ. Վասն ամենայն ցեղ քամու դեղ։
կգ. Վասն որ գոգն արգիլի։
կդ. Վասն ձկանց տլըսմի որ ի ծովու։
կե. Վասն թռչնոց տլըսմի։
կզ. Վասն կանթեղի տլըսմի որ աղվորի։
կէ. Վասն մսածի որ մարդն զինքն ցրտէ։
կը. Վասն որ մարդուն փորն ալց մտէ։
կթ. Վասն չի ծարվենալու։
հ. Վասն չի հարբենալու։
հա. Վասն մախմուր դեղ։
հբ. Վասն մաղասի դեղ։
հգ. Վասն քնոյ դեղ շինելոյ։
հդ. Վասն մարդն նեղ քրտնի։
հե. Վասն որ շատ կոծիծ ունենայ։
հզ. Վասն խումբայի դեղ։
թ. 165բ.— հէ. Վասն մարդն շոքն զարնէ։
հը. Վասն կապած մատայի արձակեոյ մաճուն։
հթ. Վասն որ ուզէ զկինն սուրբ պահէ։
ձ. Վասն որ ուզէ զկնոջ գաղտն իմանայ։
ձա. Վասն որ ի նստոյ տեղաց որ ի դուրս գայ։
ձբ. Վասն գորտնուկի և ծծի որ առ մարդն լինի։
ձգ. Վասն ամենայն ցեղ իրաց վախենալու։
ձդ. Վասն ամենայն ցեղ պատուհաս իրի։
ձե. Վասն մրջրմ բունի որ առ մարդն լինի։
ձզ. Վասն որ հորն ալչիլ ընկնի։
ձէ. Վասն թողց կոտի։
ձը. Վասն որ հանդերձն թանաք թափի։
ձթ. Վասն երեսն պրինկ ունենայ։
ղ. Վասն մարդն հեք ունենայ։
ղա. Վասն որ անկողինն կու շոէ։
ղբ. Վասն որ կոճղացել է։
ղգ. Վասն որ մարդն գէշ նիգ ունենայ։
ղդ. Վասն որ տունն սողունք լինի։
ղե. Վասն որ տունն լու շատ լինի։
թ. 166ա.—ղզ. Վասն որ տունն ճանճոտ լինի։
ղէ. Վասն որ մարդն խիստ ոլլոտ լինի։
ղը. Վասն մարդուն երակն ուռչի։
ղթ. Վասն որ մարդն ցեց ընկնի։
ճ. Վասն լուծման տղի որ ի փորն մեռնի։
ճա. Վասն ամենայն ցեղ սընկան որ ի մարդն լինի։
ճբ. Վասն մարդն որ ի ոստուկ ունենայ։
ճգ. Վասն որ կնոջ ծիծն ուռչի և ցաւի։
ճդ. Վասն կնոջ տեռատեսի։
ճե. Վասն սիրոյ դեղ շինելոյ։
ճզ. Վասն ատելոյ դեղ շինելոյ։
ճէ. Վասն որ մորուքն գերծի մարդուն։
ճը. Վասն ոսկէ դեղ շինելոյ։
ճթ. Վասն մազի բուսցնելոյ և չի բուցնելոյ։
ճժ. Վասն որ ճիճի կամ այլ իրք կճէ։
ճժա. Վասն քոսի որ առ մարդն լինի։
ճժբ. Վասն որ մարդ տափակ ճիճու ունի։
ճժգ. Վասն որ բաղարուշտք քար ընծայի։
ճժդ. Վասն ամենայն ցեղ մլհամի։
թ. 166բ.— ճժե. Վասն ամենայն ցեղ մուլդապի։
ճժզ. Վասն դրաստացաւի։
ճժէ. Վասն ամենայն ցեղ լուծման դեղ։
ճժը. Վասն ամենայն ցեղ նուզլայի։
ճժթ. Վասն ամենայն ցեղ թուրիախի։
ճի. Վասն ամենայն ցեղ մաճունի։
ճիա. Վասն ամենայն ցեղ շարպաթի։
ճիբ. Վասն ամենայն նղրսի։
ճիգ. Վասն ամենայն ցեղ մտպուխի։
ճիդ. Վասն որ պինչն և քիթն կալվի։
ճիե. Վասն յուշ ծերանալոյ։
ճիզ. Վասն ամենայն ցեղ հապերու։
ճիէ. Վասն ամենայն ցեղ գանի խոցի որ պինտ լինի։
ճիը. Վասն գունոյ դեղ երեսի։
ճիթ. Վասն մալախուլի այի։
(ճլ. Վասն ամենայն ցեղ ճուարիշի)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 42ա.— Ասացեալ յաղագս երաղաց բանն իմաստնասիրաց։ Այս երազահան զիրք սխալաւ Սուլթանին է, նովաւ Աբելանացի, որ անուն Առաքել ասէին, ու մխիթարիչ, չի չկանցի Շեբակունի, ի յԱնի քաղաքն ի մօտ ՌՀԱ, երթին Թարգմանեցին ի յարաբ լեզուէն ի հայ լեզու, ի յամսեանն սահմի Գ ԾՁ ցեղ երաղ է ու ամէնուն մեկնութիւն գրած է ի յայս գիրքս, բարի երազն ու չարն։ ու զինչ մարդուն գալու է։

թ. 65բ.— Գրեցաւ յերազահանս ձեռամբ Մովսէս եպիսկոպոսի։ ի թվին ՌՄԵ (1609 թ.)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 1ա.— ... աղմուտատիէ։
Եղևին որ է ծրթի կամ արտուք։
Հանդիպեցայ այս մատենի
է ճշմարիտ ու պիտանի
Ոչ թէ միյայն իմն զիրք կոլի
Ցեղուցեղ արուեստիւ է և ի
Նախ տոմարն Հայոց ազգի
Ցուենաց տոմարն ևս Հայնի.
Աշխարհացուցն հատկականի
է.ճառեցեալ ամենայնի.
Ցիշեալ կանոն դատաստանի.
Կամ երազացոյց գովելի.
Գծագրեցեալ զգիրք ուրքաթի
Եւ քառարան Բաղդասարի.
Բժշկարան ևս ունի,
Աժանագինք սպեղանի.
է գովելի և պիտանի.
Ձեռացագիր խարցս տամք ի.
Գրեալ ումեմն բարէգոմի. . . . .

Ի յոյս ածեալ աշխատողի։
Նախ ես ասեմ շատ ողորմի
Զդիրքս այս ձրնցողի
Եւ Հայր մերիս բարեկանի։
Թէ պատահիք զայս պրակի,
Ցիշի Հայրապետն ազուէցի,
Որ եմ որդի Արրահամի։
Նուաղագոյն յոյժ եղկելի,
Ոտից ձերոց էմ հող փոշի։
Ով որ ասէ մի ողորմի
Ի տնէ շնշոյի գտանի։
Ի Թուականն Հայկասեան։
Թ Երկշգան և հոպկլեան մի,
Երկ հոպկլեան ես աւելի
(վերջին տողն անընթեռնելի է)։

Թ. 2ա.— Ես Մուրատ եմ։

Գաֆտիզ։

Թ. 65բ.— Ես անարժան Ծակոր դրեցի մատնահատեցի Ե։

Թ. 74բ.— Կիպրիանոսի պատմութիւնն է։

Թ. 87բ.— Այս գիրքս յիշատակ է Աքուլեցի պրն. Հայրապետին գրվեցաւ զայս տերելքս թիվն չքն յուլիս Ե շհրն Աքուլիս։

Թ. 180.— Արաբկեր է։

Թ 183ա.— 12—7—961 Ըստանպուլ։

Այս ձեռագիր գիրքս կը Նվիրվի Սուրբ Էջմիածինոյ Թանգարանին ի ձեռաց Վեհափառին Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետն Ամենայն Հայոց, իր առաջին Պոլիս այցելութեան առթիւ։ Իբր յիշատակ իմ ծընողացս Թիւրքիոյ գավառից և Տիվրիկ քաղաքից Գասպարի և Վարդուհի, և ի զավակն ի կողմանէ։

Սուրէն Գ. Տօնտարեան

Կ. Պոլիս, 12 յուլիս 961։

Թ. 249բ.— Նվիրս Սուրբ Էջմիածնոյ

Սուրէն Գ. Տօնտարեան.

Տիվրիկցի, 12—7—961, Կ. Պոլիս։

Թ. 252ա.— Մածիպդիր այունպիր, որը, կնոջը ձիշտ դնելու դեպքում, պետք է վերծանվի «Առաքել սահաթճի Եփրանոսեան»։

Թ. 252բ.— Քրիստոսի ծառայ Իգնատիոս գրեցի այս գրին փորքելով...ով որ հանդիպիք ասէք Աստուած բանքն աշողի։ որ փախստական էի չի կարացի թէ դուս դաման դամ նկէլցուց, կարոտ մնացիմ և բարկամաց, կարոտ մնացիմ իմ ծնողաց գերեզմաններին, կարոտ մնացիմ ափսոս տլիմ են որ շափվիշ էր չէի տեսէ, տեսել լեի, քանզ տեսնին լավ էր այ վայ Աքուլիս, այ վայ Զիվան Աքուլիս և ափսոս Աքուլիս որ Աստուած մեր մեղացն բարկացավ, մեր աչքն հանվեց, մեզ չենք դի... թէ վասն մեր ծով այցիւ մեխկըն է։ Գրեցի Իգնատիոսս.....։

Ձեռագրի վերջում գտնվող մագաղաթյա պահպանակի առաջին թերթում գրված է՝ «ԱՆԹ։ Առաքել—Կարապետ—Թապուրն»։

(Շարունակելի)